ԷՍՊԻՏԵՐ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

IV

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ հեռագիրը Մայր Հայրենիքի և Սփյուռքի թեմերին՝ Սրբալույս Մեռոնի օրհնության մասին	3
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը՝ 1954 թվականի սեպտեմբերի 26-ին, Վարագա Ս. Խաչի տոնին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մեռոնօրհնեք կատարելու մասին	4
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ շրջաբերականը՝ 1954 թվականի սեպտեմբերի 26-ին, Վարագա Ս. Խաչի տոնին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մեռոնօրհնեք կատարելու մասին	8
Քրիստոսի հրաշափառ Ս. Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Չ.ի անունով թեմերից ստացված շնորհավորական հեռագրերն ու գրությունները	10
Քրիստոսի հրաշափառ Ս. Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Չ.ի անունով Բույր եկեղեցիների պետերից ստացված շնորհավորական հեռագրերն ու գրությունները	15
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ շնորհավորական հեռագիրը Ամենապատիվ Նիկոլայ միտրոպոլիտին՝ աստվածաբանության դոկտորի աստիճան ստանալու առնչությամբ և նրա պատասխանը	18
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.— Սրբալույս Մեռոնի օրհնությունը Ս. Էջմիածնում	19
ԴԵՈՐԳ Ծ. ՎՐԴ. ՎԱՐԴՅԱՆ.— Հարության խորհուրդը	23
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	25
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ	28
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ.— Մակարավանք	30
Ա. ԵՐԵՄՅԱՆ.— 164 տարվա պատմական մի կարևոր հրովարտակ	37
ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ	41
ԳԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆ.— Ուղևորություն ի Ս. Էջմիածին	45
Դոկտ. Գր. Բամբուկջյանի զեկուցումը Ռումեն ժողովրդական Ռեսպուբլիկայի Ակադեմիայի բժշկական բաժանմունքին մեջ	55
Հոգեճաշ՝ Ղևոնդ Դուրյան Սրբազանի սպանության 20-րդ տարելիցին առթիվ	56
Փարիզի հայ ուսանողական տունը	56
Բրազիլահայ բեմի վարչական ընտրությունը	57
ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ.— «Պատմություն Անբեպի հայոց»	58

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՑԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱՏԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1954 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ. Տ. ԳԷՈՐԳԱԾ Զ.Ի

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ԹԵՄԵՐԻՆ՝ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԱՅՍՈՒ ՀԱՅՏՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԹԵՄԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ, ՈՐ ՈՐՈՇԵԼ ԵՆՔ, ԵԹԵ ՏԵՐԸ ԿԱՄԵՆԱ, 1954 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ՝ ՎԱՐԱԳԱ Ս. ԽԱՉԻՆ ԿԱՏԱՐԵԼ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ:

ՊԱՏՎԻՐՈՒՄ ԵՆՔ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԲՈԼՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ՝ ԳԱԼ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՀԱՆԴԵՍԻՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ՏԱՍՆՄԵԿ ԹԵՄԵՐԻՑ ԵՎ Ս. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՈՒ ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՆԵՐԻՑ ԸՆՏՐԵԼ ՏԱԼ ՄԻ-ՄԻ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԵՎ ԲԵՐԵԼ:

ԵԿՈՂՆԵՐԻ ՎԻՃԱՅԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՇՏԱՊ ԿԵՐՊՈՎ ՀԱՂՈՐԴԵԼ ՎԻՃԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԸ, ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ ԵՎ ԱՅԼ ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ ՇՈՒՏՈՎ ԿՈՒՂԱՐԿՎԵՆ:

ԳԵՈՐԳ Զ.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

21 ապրիլի 1954 թ.
ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ՝ 1954 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ, ՎԱՐԱԳԱ Ս. ԽԱՉԻ ՏՈՆԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՄԵՌՈՆՕՐՀՆԵՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՏԵԱՌՆ ԵՒ ԿԱՐՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱՐՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱՐՈՒՈՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅՑ ՍՐԲՈՅՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ, ՍՐԲՈՅՆ ՍԱՂԻՄԱՅ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐԵԱՆԻՆ, ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐԵԱՆԻՆ, ԳԵՐԱՇՆՈՐՀ ԱՌԱՋՆՈՐԴԱՅ ՀԱՄՕՐԷՆ ԹԵՄՕՐԷԻՑ ՀԱՅՈՑ, ՀՈԳԵՒՈՐ ՀԱՐՑ, ԵՂԲԱՐՑ ԵՒ ՀԱՄԱՅՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՆ, ՀԱՐԱԶԱՏԻՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ԳԱՀԷՆ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ՝ ՏԻՐԱՒԱՆԴ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ

Քսանուք տարի է, որ Ս. Էջմիածնում տեղի ունեցած չէ Սրբազան Մեռոնի օրհնություն, հայ ժողովրդի սրտին մոտիկ ճշիտակաց և խորհրդավոր սուրբ արարողություն, որի հետևանքով զրկվել է նա հոգևոր բարձր մթիթարությունից:

Երջանիկ եմք, որ բախտ պիտի ունենանք կատարելու եկեղեցական-ազգային այդ հուզիչ և խորհրդավոր հանդեսը՝ Սրբազան Մեռոնի օրհնությունը, պահպանելով Հայաստանյայց Առաքելա-

կան եկեղեցու դարերով սրբագործված և նվիրական դարձած սրբազան խորհուրդը, որ՝ որպես հայրենի սուրբ ավանդ, թողել են մեզ մեր հրջանկիսիբատակ հայրապետները:

Առավել բախտավոր ենք մենք՝ մանավանդ այն պատճառով, որ Սրբալույս Մեռոնի օրհնությունը առաջին անգամ մենք պիտի կատարենք Մայր Հայաստանի ազատ և անկախ պետականության վսեմ պայմաններում, Մայր Հայրենիքի և հայրենի հարազատ իշխանության հովանու տակ՝ ի վիճարարություն հայ ժողովրդի և ի փառս Հայ Եկեղեցու:

Ս. Կրքում օծման յուղը որպես նյութեղեն միջնորդ է, որով աստվածային Հոգին և շնորհը իջնում և ներգործում է մարդոց և իրերի վերա: Ուստի և Հին Ուխտի մեջ՝ բաց հին ժամանակներից, օծումն ուներ նվիրագործող նշանակություն և՝ ինչպես առարկաներ, նույնպես և անձինք, որոնք նվիրված էին Աստուծո ոգեսարկության, օծվում էին ձիթենու յուղով: Այսպես՝ օծված էր Մովսեսի Վկայության խորանը իր բոլոր կահավորությամբ՝ Սրբության Սեղանով և Ավազանով: Օծմամբ էր ընդունում նաև իր սուրբ կոչումը սեղանին սպասավորող քահանան, որի ամբողջ կյանքը նվիրված պիտի լինի Աստուծո պաշտամանը:

Հայ ժողովրդի համար ևս Սրբալույս Մեռոնը, որպես նվիրական և խորհրդավոր սրբություն, սերտորեն կապված է քրիստոնեական պաշտամունքի հետ, ուստի և ամեն մի իր և անձն այն ժամանակ է միայն սրբազան ոյժ ստանում նորա աչքին, երբ Սրբալույս Մեռոնի դրոշմը կա վերան: Նա խաչ է հանում երեսը՝ Եկեղեցու, Ս. Սեղանի, Ս. Ավազանի և սրբոց պատկերների առաջ, որովհետև Սրբալույս Մեռոնով սրբագործված են, համբուրում է եկեղեցու պաշտոնյայի աջը, որովհետև օծյալ է:

Հայ Եկեղեցին մի ազգային գեղեցիկ ավանդություն ունի, այն՝ որ Սրբալույս Մեռոնի օրհնությունը սկիզբ է առել Ս. Լուսավորչից և ամեն անգամ՝ նոր Մեռոն օրհնելիս՝ հին Մեռոն են խառնում հետը, որով Ս. Լուսավորչի օրհնած մեռոնի խմորը անցնում է նորին, և այսպես Սրբալույս Մեռոնը կապում է հայի ներկան հեռավոր անցյալի հետ:

Սրբալույս Մեռոնը հանդիսանում է նաև ամենասերտ և անխզելի զոդը, որով՝ ի սիրուս աշխարհի տարածված հայությունը կապվում է իր քրիստոնեության ծագման վայրի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ: Այս կապն է պատճառը, որ երբ Սրբալույս Մեռոնի կաթսան դրվում է Երկնավոր Ճարտարապետի ցուցմամբ հիմնված Միածնաբեջ Տաճարի Ս. Սեղանի առաջ, բեմի վերա, և Ս. Լուսավորչի հաջորդ՝ Ամենայն Հայոց Ընդհանրական Հովվապետի օրհնության կոնդակը հրավիրում է իր հավատացյալ հոտին դի-

պի հանուրց Հայաստանյայց Մայր Աթոռը՝ հանդիսատես և տունակից լինելու Սրբալույս Մեռոնի մեծագույն և խորհրդավոր հանդեսի կատարմանը՝ արտասահմանից և հայրենի երկրի հեռավոր և մերձաւոր վայրերից գալիս ու համախմբվում է հայ ժողովուրդը Մայր Աթոռի շուրջը, ուր տեղի է ունենում այնպիսի մեծաւուք և հոգեպարար հանդես, որի նմանը չկա հայ մարդու համար ո՛չ մի տեղ և ո՛չ մի առթիվ:

Նկատի առնելով՝ որ 1926 թվականից ցայսօր Սրբալույս Մեռոնի օրհնություն տեղի չի ունեցել՝ և ներկայումս Հայ Եկեղեցին Սրբալույս Մեռոնի մեծ կարիք ունի, նկատի առնելով նաև հայ ժողովրդի կրոնական պահանջն ու անսահման տենչը Սրբալույս Մեռոնի օրհնության խորհրդավոր հանդեսը տեսնելու, այլև նորա իղձերի թարգման հանդիսացողների բանավոր և գրավոր պահանջկոտ դիմումները՝ Մենք, չնայելով ուխտարհի ալեկոծ վիճակին, Ս. Հոգու զորության և շնորհին ապավինած, սույն հայրապետական կոնդակով ծանուցանում ենք Մեր լծակից և գործակից եղբարց, Եկեղեցու հավատարիմ պաշտոնեության և մեր սիրելյալ հոտին, որ 1954 թվականի սեպտեմբերի 26-ին, Վարագա Ս. Խաչի տոնին, որոշել ենք Սրբալույս Մեռոնի օրհնություն կատարել Հայ Եկեղեցու հնավանդ սովորության համաձայն:

Լիահույս ենք, որ հայ հավատացյալ մարդը՝ հավատով զինված, իր նախնյաց արդարամիտ և անձնվեր ոգով ներշնչված, համարձակ կկատարե իր բարոյական պարտքը:

Մենք հավատում ենք, որ մեր նախնյաց և մեր ներկա Սրբություն Սրբոցը՝ հայ քրիստոնյա մարդու լուսո Տաճարը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ իր որբությունները, և մեր ներկա Մայր Հայրենիքը՝ իր պատմական հուշարձաններով, որպես մագնիսական ույժ, կբերեն տարաբնակ և հեռաբնակ հայ ժողովրդի ներկայացուցիչներին ու կհամախմբեն պատմական Տաճարի շուրջը՝ Հայրենիքի կարոտն առնելու, հայրենի երկրի անցյալ և ներկա հուշարձանները տեսնելու, նորա ներկա կուլտուրական վերելքով հիացնալու, նորա տնտեսական խոշոր հառաջխաղացմամբ ոգևորվելու և իր կրոնական ծարավը հագեցնելու՝ համբուրելով իր արքությունները ու՝ իր արտին մոտիկ Սրբալույս Մեռոնի օրհնությունը տեսնելով՝ ոգեշնչվելու և՝ արձագանքելով իր նախնյաց արտառույ զգացմունքին՝ ձայնելու. «Եկայք երթեսցուք առաջ զխորանն լուսոյ...»: Հայրենի երբեմնի ավեր երկիրը՝ այսօր շենցած՝ պայծառ պահենք, զորացնենք և նորանով զորանանք ու մխիթարվենք: Որպեսզի մենք չպարծենանք միայն մեր հոգևոր կյանքի կենտրոնի պատկառելի հնությամբ, նորա ասվածակառույց հարստությա-

տությամբ և անցյալ փառքով, սիեսք է մեր հայրենի Տանարն ու հայրենի երկիրը արտաքուստ պայծառ ու հմայիչ և ներքուստ կենդանի ու կենսատու պահենք՝ արժանավոր ժառանգ հանդիսանալով մեր ստեղծագործող, հերոսածին, պանծալի նախնյաց:

Աղոթենք կենսատու Փրկչին, որ տարածե Իր հոմանի բազուկը Հայ Երկրի վերա, զորացնե և արիացնե հայ ժողովուրդն ու հայ հոգևորականությունը իրենց քարոյական, տնտեսական և կրոնական պարտքը կատարելու հանդեպ Հայ Ազգի, Հայրենիքի և Հայ Եկեղեցու:

Մաղթենք սիրո և խաղաղության Փրկչին, որ մարդասեր ու խաղաղասեր ոգի ներշնչե ատիարհին, որպեսզի մարդկությունը ստեղծագործական խաղաղ ու երջանիկ կյանք վարե:

Շնորհք և ողորմություն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի նոցին ընդ ձեզ և ընդ ամենեսեանդ. ամէն:

Գէորգ Զ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 21-ն ապրիլի
1954 Փրկչական ամի,
և ի տաճարիս Հայոց ԹԵՆԴ,
յիշեհարուցում ամի Հայրապետութեան Մերոյ,
ի վանս Սրբոյ Էջմիածնի:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՐԱԲԵՐԱԿԱՆԸ՝ 1954 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ, ՎԱՐԱԳԱ Ս. ԽԱՉԻ ՏՈՆԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՄԵՌՈՆՕՐՀՆԵՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԾՐԱԲԵՐԱԿԱՆ

ՀԱՅՐԵՆԻ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԲՈԼՈՐ ԹԵՄԵՐԻՆ

Այսու հայտնում ենք բոլոր հայ թեմերի գերաշնորհ առաջնորդներին և նոցա միջոցով համայն հայության, որ որոշել ենք, եթե Տերը կամենա, սույն թվականի սեպտեմբերի 26-ին, Վարագա Ս. Խաչի տոնին, կատարել Սրբալույս Մեռոնի օրհնություն:

Սրբալույս Մեռոնի օրհնության հանդեսն ու ծիսական-արարողական ավանդական կարգը լրիվ և պատշաճ շուքով կատարելու համար՝ պարտադիր և ցանկալի է Հայ Եկեղեցու բոլոր եպիսկոպոսների մասնակցությունը հանդեսին: Կատարելապես վստահ ենք, թե Սրբալույս Մեռոնի օրհնության՝ կբարեհաճի գալ Ս. Էջմիածին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Տեղապահ Տ. Խադ արքեպիսկոպոս Աջապահյանը և կմասնակցի օրհնության, որով մի անգամ ևս պիտի ջեջավի Հայ Եկեղեցու միասնականության գաղափարը, որ 1945 թվականին գումարված Ազգային-եկեղեցական ժողովը ցանկացավ տեսնել մեր եկեղեցական-ազգային կյանքում և իր որոշմամբ նորա պաշտոնական սկիզբը դրավ: Անկասկած է նաև, որ Ս. Երուսաղեմի Պատրիարքական Տեղապահ Ամենապատիվ Տ. Նոյիշ սրբազան արքեպիսկոպոսը, ինչպես և Կոստանդնուպոլսի Ամենապատիվ Պատրիարք Տ. Գարեգին սրբազան արքեպիսկոպոսը կբերեն իրենց մասնակցությունը և կվեհացնեն մեռոնօրհնության հանդեսի շուքը:

Սրբալույս Մեռոնի օրհնությունը, ի հնուց անտի, եղել է եկեղեցական-ազգային մեծ հանդես, այդպես էլ պիտի լինի այժմ, ուստի և անհրաժեշտ է; որ այդ հանդեսի մասին բոլոր առաջնորդների կողմից հայտարարվի եկեղեցիներում, բացատրվի նորա ազգային-եկեղեցական խոշոր նշանակությունը հայության համար, և այն մխիթարությունը, որ Սրբալույս Մեռոնի օրհնության հանդեսը պատճառում է հավատացյալներին:

Սրբալույս Մեռոնի օրհնության հանդեսին օտար երկրներից եկողները բնականաբար իրենց Հայրենիքը տեսնելու բաղձանքը կունենան, ուստի և նոքա հնարավորություն կունենան տեսնելու մեր Հայրենիքի գիտական, կրթական և

գեղարվեստական հաստատությունները, ծանոթանալու երկրի տեխնիկական և տնտեսական զարգացմանը, այցելելու արվեստի օջախները և հայրենի հուշարձանները ու հնությունները: Տեսնել եկեղեցական խորհրդանշանդես, տեսնել հայրենի հուշարձաններ և ծանոթանալ հայրենի երկրի վերելքին՝ նշանակում է հոգևոր վեհ ապրումներ ունենալ, գեղարվեստական հաճույք վայելել և հայրենի երկրի վերելքով մխիթարվել: Արտասահմանից եկած յուրաքանչյուր պատգամավոր, որ կընտրվի որպես թեմի ներկայացուցիչ, կմասնակցի Սրբալույս Մեռոնի օրհնության հանդեսին, առիթ կունենա այցելելու իր Հայրենիքը, երկրպագելու իր հայրենի սրբություններին և հերշնչվելու հայրենասիրական և կրոնասիրական վսեմ զգացմունքներով:

Ս. էջմիածինը, որպես Հայոց Եկեղեցու բարձրագույն կրոնական կենտրոն, մշտապես հավատացյալ հայ ժողովրդի տնտեսական օգնությամբ է ապահովել իր կարիքները: Այս տեսակետով ցանկալի կլիներ, որ Գոյք նշեիք այն անձանց, որոնք՝ իրենց հերթին թելադրությամբ՝ կկամենային իրենց բարոյական պարտքը կատարել հանդեպ Ս. էջմիածնին, լինի այն դրամական նվերներով կամ շինարարությամբ: Այդպիսիների ցուցակը պետք է վաղօրոք հաղորդել Մեզ, պահանջվող տեղեկանքներով, որպեսզի ժամանակին միջնորդենք մեր բարեխնամ Կառավարության առջև՝ վիզա ստանալու և Մեր հատուկ հրավերը նոցա ուղարկելու համար: Անկախ վերոհիշյալից՝ հին ավանդական սովորությամբ՝ Սրբալույս Մեռոնի օրհնության առթիվ կատարվելիք ընթացիկ ծախսերը հավատացյալ ժողովուրդը միշտ ինքն է ցանկացել հոգալ և այդ առթիվ ԴԱՐԲԱՍ է ուղարկել: Վատ չէ պահպանել այդ հնավանդ սովորությունը, որ հաստատական պարտքի գիտակցության արտահայտությունն է:

Սրբալույս Մեռոնի համար կարևոր ծիրապտղի յուղը նվիրաբերել է Հունաստանի հավատացյալ Ա. Ա. Գալփտֆյանը, իսկ Մեռոնի ծաղիկները, արմաթիքն ու անուշահոտ յուղերը տրամադրել է Իրանա-Հնդկաստանի թեմը իր նախկին առաջնորդի միջոցով:

Օրհնյալ լինի նվիրատուների կյանքը և օրհնյալ՝ հայ ժողովուրդը:

ԳԵՎՈՐԳ Զ

ԾԱՌԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

21 ապրիլի 1954 թ.,
ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ԹԹՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ԱՆՈՒՆՈՎ ԹԵՄԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՆԹԻԼԻԱՍԻՑ

Փրկչի Հարության տոնի առթիվ ընդունեցէք մեր բարի ցանկությունները՝ մաղթելով Ձեզ առողջություն և երկար կյանք: Մեր միաբանության կողմից ցանկանում ենք Մայր Աթոռին առաջադիմություն և բարգավաճում:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻԱՅ՝

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԶԱՊԱՀՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ

Սուրբ Զատկի առթիվ ընդունեցէք բոլորիս շնորհավորանքները, բարեմաղթությունները և օրդիական հարգանքները:

ՊԱՏՐԻԱՐՔ ԹՅՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ՝

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱԼԿԱԹԱՅԻՑ

Հիսուս Քրիստոսի Ս. Հարության առթիվ մեր և Կալկաթայի հայության խորին հարգանքները ենք մատուցում: Մաղթում ենք Ձերդ Վեհափառության առեշատություն և Ս. Էջմիածնին՝ անսասանություն: Փա՜ռք Տիրոջ:

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ՝

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ

ԹԲԻԼԻՍԻՑ

Հավատացյալները, թեմական խորհուրդը և անձամբ ես շնորհավորում ենք Ձեզ Ս. Փրկչի լուսավոր Հարության տոնի առթիվ: Աղոթում ենք Ամենակալին՝ շնորհելու Ձեզ Երջության առողջություն և երկարատև կյանք՝ ի բարօրություն եկեղեցու և ժողովրդի:

ԱՌԱՋՆՈՐԴ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԹԵՄԻ՝
ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆԵՑԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻՑ

Զատկի տոնի առթիվ հոգևորականության և միաբանության կողմից ընդունեցեք մեր հարգալիր շնորհավորությունները: Ցանկանում ենք Ձեզ Վեհափառության երկար կյանք, Հայրենիքին, եկեղեցուն և սիրելի ժողովրդին՝ բարգավաճում:

Երուսաղեմի հայոց Պատրիարքական տեղապահի տեղակալ՝
ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՄՀԱՃՅԱՆ

ԿԱՀԻՐԵԻՑ

Փրկչի Ս. Հարության տոնի առթիվ մատուցում ենք Ձեզ Վեհափառությանը մեր և մեր հավատացյալների անունից հարգալից շնորհավորություններ և անկեղծ ցանկություններ՝ մաղթելով Ձեզ առողջություն և Մայր Աթոռին՝ պայծառություն:

ԱՌԱՋՆՈՐԴ ԵԳԻՊՏԱՀԱՅ ԹԵՄԻ՝
ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՆՅԱՆ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Փրկչի Ս. Հարության ուրախությամբ զեղուն, խնդրում ենք ընդունել մեր հավատացյալ ժողովրդի և թեմական խորհրդի ջերմագին շնորհավորանքը և սրտեռանդ մաղթանքները՝ Ձեզ Վեհափառության արևշատության, Մայր Աթոռի պայծառության և հարազատ Սովետական Հայրենիքի խաղաղ զարգացման համար:

Առաջնորդ Թուրքիոյահայ թեմի՝
ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼՃՅԱՆ

ՓԱՐԻԶԻՑ

Զատկի տոնի առթիվ հղում ենք ջերմագին, հարգալից մեծարանք և ամենալավագույն ցանկություններ և շնորհավորություններ: Մաղթում ենք Ձեզ Վեհափառության երկար կյանք, առողջություն, և Հայոց Առաքելական Ս. Եկեղեցուն՝ բարգավաճում:

Եվրոպայի թեմի Հայրապետական պատվիրակ՝
ՍԵՐՈՎԲԵ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԱՔՎԻՑ

Ադրբեջանի թեմական խորհուրդը, հոգևորականությունը, հավատացյալները և անձամբ ես շնորհավորում ենք Ձեզ Սրբությանը՝ Քրիստոսի Ս. Հարության տոնի առթիվ: Ցանկանում ենք Ձեզ առողջություն, երկարատև կյանք՝ ի բարօրություն Հայ եկեղեցու: Համբուրում ենք Ձեր Ս. Աջը:

Առաջնորդ Ադրբեջանի հայոց թեմի՝
ԳԱՐԵԳԻՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՌՈՍՏՈՎԻՑ

Հոգևորականությունը, թեմական խորհուրդը, հավատացյալները և ես աղոթում ենք Աստծուն Զատկվա մեծ տոնի առթիվ՝ պարգևելու Ձեզ առողջություն և երկարատև կյանք:

Առաջնորդ Հյուսիսային Կովկասի հայոց թեմի՝
ՎԱՐԴԱՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆ

ԼՈՆԴՈՆԻՑ

Շնորհավորում ենք Զատկի տոնը: Զատկի առավոտյան աղոթելու ենք Ձեզ Վեհափառության և Ս. Էջմիածնի համար:

Որդիական հարգանքներով՝

Հոգեվոր հովիվ Լոնդոնի հայոց՝
ՊՍԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԹՈՒՄԱՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ

Աստվածարյալ Ս. Հայրապետ.

Քրիստոսի Տեառն մեր մեծազոր և հրաշափառ Ս. Հարության տոնը շնորհավորելով, որդիական ամենախոնարհ սիրով կբարեմաղթեմ Ձերդ Վեհափառության բանկագին կենաց արեշատություն՝ բաշառողջ երկար ամոթ, ի գլուխ Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցվո, և անզուգական Հայր ու Պետ հայ ճոտին:

Հարուցյալ Փրկիչը՝ մաքուր աղոթքով Ազգիս Ընդհանրական մշտարթուն Հայրապետիդ՝ շնորհեն աշխարհին՝ խաղաղություն, ազգաց՝ բարօրություն, պաշտելի մեր Հայրենիքին՝ բարգավաճ հառաջդիմություն ու մշտական վերելք, Քրիստոնեական եկեղեցվո և Հայ Ազգի պարծանք Ս. Էջմիածնի Մայր Աթոռին՝ անսասանություն և ամրություն:

Որդիական խորին ակնածանքով մատչելով ի համբույր Օծյալ Ս. Աջո Քահանայապետությանդ Ձերում, մնամ խոնարհ որդի և ճնազանդ ծառա՝

ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՄԻԼԱՆԻՑ

Շնորհավոր Զատիկ: Առողջ կյանք՝ Վեհիդ, բարգավաճում՝ միաբանությանդ, Ազգին, Հայրենիքին, և խաղաղություն՝ աշխարհին: Հայցում ենք Ձեր օրհնությունը:

ՋԳՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

ԱԹԵՆՔԻՑ

Հրաշափառ Ս. Հարության տոնի առթիվ հանուն ճուճանայության մատուցում ենք շնորհավորանք և օրտագին բարեմաղթություն Ձերդ Վեհափառության և Գերազույն Հոգևոր Խորհրդի արևշատության համար:

ՀԱՅՐ ՆԵՐՍԵՍ ԽՈՇՈՐՅԱՆ

ԹԵՀՐԱՆԻՑ

Ուղիական սիրով շնորհավորում ենք Ձերդ Վեհափառության Ս. Հարության առնը:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ,
ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ

ԹԱՎՐԻԶԻՑ

Ատրպատականի հայոց թեմական ժողովը, թեմական խորհուրդը, քահանայից դասը և համայն ժողովուրդը ամենախոնարհ հարգանքներ են հայտնում՝ համբուրելով Սրբությանդ Աջը, շնորհավորելով Փրկչի հրաշափառ Հարության տոնը, մաղթելով արևշատություն ընդ երկայն տարիս:

ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ

ԵՐԵՎԱՆԻՑ

Շնորհավորում ենք Ձեզ և Մայր Աթոռի միաբանությանը՝ Հիսուսի Հարության տոնի առթիվ: Ցանկանում ենք Ձեզ առողջություն, համայն աշխարհին՝ խաղաղություն և մեր սիրելի Հայրենիքին՝ բարգավաճում:

Ս. ՍԱՐԳԻՍ, Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՎ Ս. ԶՈՐԱՎԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍՔ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՔ
ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐ

ԲԱՂԴԱԴԻՑ

Զատկի տոնի առթիվ հայկական համայնքը ցանկանում է Ձերդ Վեհափառության երջանիկ և բարգավաճ կյանք:

Առաջնորդական տեղապահ՝
ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻՑ

Զերդ Վեհափառութիւն.

Քահանայական դասը, Ձեր սիրեցեալ հոտը շնորհավորում են Ձերդ Սրբութեան՝ Քրիստոսի Հարութեան մեծ տոնի առթիվ: Մաղթում ենք Ամենակալին՝ շնորհելու Ձերդ Սրբութեանը երկար կեանք և առողջութիւն և աղօթում ենք Ձերդ Վեհափառութեան համար, որ Դուք Ձեր սիրեցեալ հոտի հետ երկար տարիներ արժանանաք Քրիստոսի հրաշափառ Հարութեան տոնը կատարելու: Համբուրում ենք Ձեր Ս. Աջը:

Առաջնորդական տեղապահ Շիրակի թեմի՝
ՆՈՐԱՅՐ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻՑ

Վեհափառ Տէ՛ր.

Շնորհավորում եմ Քրիստոսի Ս. Հարութիւնը: Ցանկանում եմ Վեհիդ կատարյալ առողջութիւն և երկար կեանք: Համբուրեմ Ս. Աջդդ:

ԳԵՈՐԳ ՔԱՀԱՆԱ ԳԵՈՐԳՅԱՆ

ԿԻՐՈՎԱԿԱՆԻՑ

Կիրովականի հավատացյալ ժողովուրդը և Ս. Աստվածածնա Մահանայից դասը որդիական խոնարհութեամբ շնորհավորում են Ձերդ Վեհափառութեան Հիսուս Քրիստոսի Հարութիւնը, Ձեզ բարեմաղթելով հաջողութիւն, Հայոց եկեղեցուն և Ձեր հոտին՝ բախտ ունենալու տանելու Վեհիդ մեկ դարը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԶԱՌԻՋԻԿԱՌԻՑ

Հավատացյալների, եկեղեցական խորհրդի և անձամբ իմ անունից շնորհավորում եմ Ձեզ Քրիստոսի լուսավոր Հարութեան տոնի առթիվ: Մաղթում ենք Ձերդ Սրբութեանը առողջութիւն, երկարատև կեանք՝ ի բարօրութիւն մեր հարազատ եկեղեցու:

ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԹԱՎԱՐԵԿՅԱՆ

ՂԶԼԱՐԻՑ

Շնորհավորում ենք Քրիստոսի հրաշափառ Հարութեան տոնը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ԱՆՈՒՆՈՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Ուրախությամբ ողջունում ենք Ձեզ ի Տերն հարուցյալ, որը մեզ ևս երանելի հարության հույսն է պարգևել:

Ընդունեցեք մեր ուրախության զգացմունքների եղբայրական համբույրը Քրիստոսի Հարության և հոգևոր սիրո առթիվ:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսը, որ խնդրեց երկնային իր Հորը, որպեսզի բոլոր հավատացյալները միասին լինեն և իր հարությամբը խոստացավ մեզ հետ լինել մինչև դարերի վերջը, իր ներկայության շնորհը և մեր միաբանությունը առանձնապես արտահայտում է տոնական այս օրերին հարության փառքով: Մի՞թե Նրա ներկայության շնորհը չէ, որ ստեղծում է այնքան կենդանի և կատարյալ մեր ուրախությունը: Մի՞թե Նրա շնորհը չէ, որ միասնականության է կոչում մեզ՝ փոխադարձ հաղորդակցության խոսքի և սրտագին զգացմունքով:

Մեր խոնարհ աղոթքն ենք մատուցում այդ ուրախությունը և հոգևոր հաղորդակցության մխիթարությունը մեզ պարգևողին: Թող անպակաս լինի Նրա ստվածային շնորհը իր լույսով և խաղաղությամբ մեր կյանքի բոլոր օրերում:

«Քրիստոս յարեա՛ ի մեռելոց»:

«Արդարև Քրիստոս յարեա՛ ի մեռելոց»:

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ՝

ԱԼԵՔՍԻ

ԹԲԻԼԻՍԻՑ

«Քրիստոս յարեա՛ ի մեռելոց»:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսը իր հարության օրը, հանձինս յուղաբեր կանանց և առաքյալների, ազդարարեց ամբողջ աշխարհին ուրախության և խաղաղության պատգամը՝ առաջիններին ողջունելով «ուրախացէ՛ք», իսկ առաքյալներին՝ «խաղաղութիւն ընդ ձեզ» խոսքերով (Հովհ., Ի 19):

Եվ քրիստոսասաց ուրախությունն ու լույսը ծավալվեց և ծավալվում է այս օրերում մինչև երկինք, դեպին ու դժոխք, բափանցելով հավատացյալների հոգիներն ու սրտերը: Ահա քանի դար է, ինչ քրիստոնյաները այդ օրերում ողջունում են միմյանց ուրախ բացագանչություններով՝ «Քրիստոս յարեա՛ ի մեռելոց», որն արտահայտում է և՛ ուրախությունն, և՛ հավատի միասնությունն, և՛ խորը հավատը, ուստի և բշնամությունը խաղաղության հանդեպ տեղի պիտի տա և խաղաղությունը հաղթանակի ամբողջ աշխարհում:

Ուրախությամբ տոգորված մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հարության ասքիվ, ամբողջ հոգով ու սրտով հղում ենք մեր շնորհավորանքները Ձեզ Սրբությանը, Ձեզ շրջապատող աստվածապաշտ թեմական առաջնորդներին, Ձեր Ս. եկեղեցուն, և աղոթքի բարեմաղթություններով ուրախ բացագանչում՝

«Արդարև Քրիստոս յարեա՛ ի մեռելոց»:

Եղբայրական սիրով ի Քրիստոս,

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ՝

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ

ԼՈՆԴՈՆԻՑ

Ձերդ Սրբությո՛ւն, Սիրեցյալ եղբա՛յր ի Քրիստոս.

«Եւ յերեկոյի շաբաթուն յորում լուսանայր միաշաբաթին, եկն Մարիամ Մագդաղենացի և մեկ Մարիամն տեսանել զգերեզմանն»: Ալելուիա՝ (Մատթ., ԻԸ 1):

Որպես ջերմեռանդ ճշտեռազներ Հիսուսի, ճրանք եկան Պասեքի այդ տոնին կատարելու իրենց հոգեկան ուխտը այն գերեզմանի առաջ, որտեղ դրել էին Տիրոջ մարմինը, և լսեցին ճրեշտակի ձայնը՝ «Չէ աստ, այլ յարեաւ»: Բոլոր դարերի ողջ քրիստոնյաները միասին ուրախանում են հաղթական ավետիքով մեր Տիրոջ և Փրկչին, «զոր Աստուած յարոյց ի մեռելոց» (Գործք, Դ 10):

Քրիստոնեական տարվա յուրաքանչյուր մեծ տոնախմբությունն հոգեկան խորը բարեկամության մեջ միացնում է տարբեր ավանդություններ ունեցող քրիստոնյաներին, որովհետև այդ ժամանակ է, որ մեր հայացքը լրջորեն հառած է Քրիստոսի վրա՝ թե քրիստոնյաները մի են նրանով և գտնում են միմյանց հետ իրենց միության ամենասերտ կապերը: Հարության տոնը մեզ հատկապես գիտակից է դարձնում այդ միությանն, որովհետև այդ տոնին բոլորը մասնակցում են Աստուծո մարմնացյալ Որդու տարած հաղթանակին ընդդեմ աշխարհի, մարմնի և սատանայի:

Աղոթում եմ, որ այս աշխարհի խավարը ցրվի Աստուծո եկեղեցու լույսով, լուսավորված՝ հարության փառքով և գորացած՝ մի նոր և տևական սիրո կյանքով:

Թող Ձատկվա նոր կյանքը առատորեն տեղա Ձերդ Սրբության, Ձեր հոգևորականության և Ձեր հավատացյալ ժողովրդի վրա, և աղոթում եմ, որ աստվածային օրհնությունը մնա միշտ Ձեր եկեղեցու վրա:

Մնամ Ձեզ սիրող եղբայր ի Քրիստոս,

ԱՐՔԻԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՆՏԲԵՐԻԻ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈՅ՝

ՋԵՈՖՖՐԻ

ՄՈՍԿՎԱՑԻՑ

Մենք մեծագույն բախտավորությունն ունենք հավատալու, որ հարուցյալ Քրիստոսը, որը լուծեց դժոխքի հանգույցները և խաղաղություն տվեց տիեզերքին, «և զնեզ յարուցեալ զօրութեամբ իւրով» (Ա. Կորնթ., Զ 14):

Կրկին վերապրելով այդ ուրախությունն այն օրը, երբ ճշմարտապես ամեն արարած հրճվում է և ուրախանում, որդիական սիրով ողջունում եմ և շնորհավորում եմ Ձեզ ճշմարիտ խաղաղության, հույսի և սիրո քրիստոնեական մեծ տոնի առթիվ:

«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

Որդիական սիրով ի Քրիստոս,

ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈԼՈՄԵՆԱՑԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ՝

ՆԻԿՈԼԱՈՍ

ՐԻԳԱՅԻՑ

Խնդրում եմ, Ձերդ Սրբություն, հաճեցեք ընդունել իմ սրտագին գատկական շնորհավորությունները և աղոթական ցանկությունները՝ Ձեզ և Ձեր գլխավորած հնագույն Հայ եկեղեցուն:

«Քրիստոս յարեա՛ ի մեռելոց»:

ԼԱՏՎԻԱԿԱՆ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ՝
ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ

ՍՐՅՈԼԻՑ

«Քրիստոս յարեա՛ ի մեռելոց»:
Շնորհավորում եմ Ձերդ Սրբությանը լուսատու տոնի առիվ:

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ
ՀԻՆ-ՄԻՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ՝
ՖԼԱՎԻԱՆ

ՋԱԳՈՐՍԿԻՑ

Մոսկվայի Հոգևոր ճեմարանի վարչությունը նղում է իր ջերմագին շնորհավորանքները Ձերդ Սրբությանը՝ Քրիստոսի Հարության լուսատու տոնի առիվ: Ցանկանում ենք Ձեզ առողջություն, երկարատև կյանք և ամեն տեսակի բարություն:

«Քրիստոս յարեա՛ ի մեռելոց»:

Ճեմարանի ռեկտոր՝ ավագերեց ՌՈՒԺԻՑԿԻՑ
Ցեսուչ՝ պրոֆեսոր ԴՈԿՏՈՒՍՈՎ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ ՆԻԿՈԼԱՅ ՄԻՏՐՈՊՈԼԻՏԻՆ՝
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐԻ ԱՍՏԻՃԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ
ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՆՐԱ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈԼՈՄԵՆԱՑԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՆԻԿՈԼԱՅԻՆ

ՄՈՍԿՎԱ

Քրիստոնյաների մեջ եղբայրությունն իրականացնելու և խաղաղությունը ողջ աշխարհում պահպանելու գործում Ձեր կատարած անդուլ աշխատանքի, ինչպես և Ձեր կատարած արդյունավետ գիտական-լուսավորչական և քարոզչական գործունեության համար Ձեզ աստվածաբանության դոկտորի կոչում շնորհվելու առթիվ հղում ենք Մեր շնորհավորանքները:

Մնամ Ձեզ սիրող ի Քրիստոս,

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ՝
ԳԵՈՐԳ Զ.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՈՐԳ Զ.ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Որդիական ջերմ սիրով իմ շնորհակալություններն եմ հայտնում Ձերդ Սրբությանը՝ Ձեր սիրալիր շնորհավորանքի համար:

Խոնարհվում եմ Ձեր առաջ որդիական ջերմ սիրով:

ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈԼՈՄԵՆԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ՝
ՆԻԿՈԼԱՅ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻՄ

Ամենայն Հայոց Հայրապետության պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի ներկա համարում հրապարակվում են Նորին Ս. Օծություն Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի հեռագիրը, սրբատառ կոնդակը և շրջաբերականը՝ ուղղված Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու մյուս նվիրապետական Աթոռներին, եկեղեցական բոլոր բեմերին և հայ հավատացյալ ժողովրդին՝ 1954 թվականի սեպտեմբեր ամսի 26-ին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում կատարվելիք Սրբալույս Մեռոնի օրհնության մասին:

Ազգիս սիրելի Հայրապետը, իբր «Հրավիրակ Աստուծոյ», իր սրբատառ կոնդակով հրավիրում է հայ հավատացյալ ժողովրդին «գեպի հանուրց Հայաստանյայց Մայր Աթոռը՝ հանդիսատես և տոնակից լինելու Սրբալույս Մեռոնի մեծագույն և խորհրդավոր հանդեսի կատարմանը»:

1926 թվականից հետո Ս. Էջմիածնում չի կատարվել Մեռոնի օրհնություն: Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ.ը, իր գահակալության առաջին իսկ օրերից, մտադրվել էր կատարել շնորհաբաշխության այդ խորհուրդը, բայց միջազգային քաղաքական անհպաստ պայմանները խանգարում էին Վեհափառ Հայրապետի այդ ցանկության կատարումը: Այժմ Ամենայն Հայոց Հայրապետությունը հարմար դատեց նշանակել Սրբալույս Մեռոնի օրհնությունը:

Հայ հավատացյալ ու հայրենասեր ժողովուրդը, թե՛ Մայր Հայրենիքում և թե՛ Սփյուռքում, անշուշտ սրտի անհուն բերկրանքով և մեծ խանդավառությամբ կընդունի Վեհափառ Հայրապետի սրտագին հրավերը:

Ու կգա հայ ժողովուրդը Սրբալույս Մեռոնի օրհնության հանդեսին Արևելքից թե Արևմուտքից, հյուսիսից թե հարավից, կգան Սփյուռքի պատգամավորները, կգան համբուրելու Լուսավորչի արժանավոր հաջորդի Ս. Աջը, Սրբալույս Մեռոնի կայսան, հայրենի սրբազան հողը և ողջագուրվելու Մայր Հայրենիքում ապրող իրենց հարազատների հետ:

Մեռոնի օրհնությունը միշտ էլ հանդիսացել է հայ ժողովրդի սրտին մոտիկ ամենանվիրական ու համաժողովրդական ազգային-եկեղեցական մեծաշուք ու խորհրդավոր տոնակատարություններից մեկը, ինչպես գրում է Վեհափառը իր կոնդակում: Այդ իսկ պատճառով Սրբալույս Մեռոնի օրհնությունը՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դարերով սրբագործված այդ նվիրական խորհուրդը, միշտ էլ կատարվել է

պատշաճ հանդիսությամբ, շքեղությամբ, հոգևոր մխիթարության արքազան բավարարությամբ, իբր մեր նախնիքներից մեզ ավանդ մնացած անմոռանալի և համբուրելի նվիրականություն:

Կրոնների պատմությունից հայտնի է, որ յուղի, ձերի օրհնությունն ու գործածությունը ժողովուրդների հոգևոր կյանքում շատ հին սովորություններից մեկն է: Արդարև, «Իւղով և խնկով և գինւով զուարճանայ սիրտ» (Առակք, ԻԸ 9): Հատկապես Հին Ուխտում շատ մեծ տեղ էր հատկացված յուղի օրհնությանն ու գործադրմանը Իսրայելի ազգային-հոգևոր կյանքում: Օծման յուղը, որպես նյութեղեն միջնորդ աստվածային Հոգու, ներգործում էր մարդկանց և իրերի վրա. «Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ. եւ դու առ քեզ... եղ ծիրենեաց... եւ արասցես զայն եղ յօծումն սրբութեան... եւ օծցես ի նմանէ զխորան վկայութեանն... և սրբեսցես... և եղիցի սրբութիւն սրբութեանց» (Ելք, Լ 22—29), Իսրայելի թագավորները, մարգարեները, քահանաները օծվում էին հեռվայի հրամանով օրհնված յուղով. «Եւ ա՛ռ Սամուէլ զեղջերն իւղոյ, և օծ զնա (զԴաւիթ) ի մէջ եղբարց իւրոց. և խաղաց Հոգի Տեառն ի վերայ Դաւթի յօրէ յայնմանէ և առ յապա» (Ա. թագ., ԺԶ 13):

Քրիստոնեական եկեղեցու կյանքում ևս Մեռոնը շատ մեծ տեղ է գրավում, որպես նվիրագործող և խորհրդավոր սրբություն:

Քրիստոնեական ո՛չ մի եկեղեցու կյանքում, սակայն, օրհնված յուղը այնքան մեծ արժեք ու հոգևոր նշանակություն չի ունեցել, որքան Սրբալույս Մեռոնը հայ ժողովրդի և Հայաստանյայց Առաքելական եկեղեցու կյանքում: ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԸ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԳԱՅՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻՇՏ ԷԼ ԵՂԵԼ Է ԵՎ Է ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀՈԳԵՎՈՐ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՔԱԿՏԵԼԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆՎԻՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԸ, ՀՈԳԵՎՈՐ ՇԱՂԱԽԸ:

Առաջին անգամ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի նվիրական կամարների տակ Սրբալույս Մեռոն է օրհնել հայ ժողովրդի հավատի հայր Ս. Գրիգոր Լուսավորիչը: Ըստ Ազաթանգեղոսի վկայության, «Եւ իտնն օծութեան, զոր արկանէր Գրիգոր ի վերայ մարդկանն, շրջան առեալ ի մէջ գետոյն՝ շուրջ զմարդկամբն խաղայր... և քրիստոսեան դրոշմաւն առ հասարակ ընծայեցուցանէր զամենեսեան լինել ամենեցուն Հոգւովն Սրբով»:

Առաջին անգամ Սրբալույս Մեռոնի կաթսան դրվել է «Երկնավոր Ճարտարապետի ցուցմամբ հիմնված Միածնէջ Տաճարի Ս. Սեղանի առաջ, բեմի վրա»,— ինչպես գրում է Վեհափառը:

Այդպե՞ս է հավատացել ու ապրել հայ ժողովուրդը Լուսավորչի օրերից մինչև այսօր. արդարև, «Այրարատեան գաւառին, ի կայս բազաւորացն և քահանայապետացն, բղխեցին Հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ» (Կորյուն):

Ավանդական սովորություն է եղել, Սրբալույս Մեռոն օրհնելիս, նոր Մեռոնի մեջ խառնել Լուսավորչի և նրա արժանավոր հաջորդների օրհնած հին Մեռոնից մի շիշ, Ս. Լուսավորչի Աջի զորությամբ:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցին բացառիկ շքով և հանդիսությամբ է կատարում Մեռոնի օրհնությունը: Եվ դա պատահականություն չէ երբեք: Հայ ժողովրդի խորունկ հավատով, ամեն անգամ Սրբալույս Մեռոն օրհնելիս, Ս. Հոգին աղավնակերպ իջնում է «ի Հայաստան աշխարհի» և հայ ժողովրդի հոգում: Այդ իսկ պատճառով, Լուսավորչի օրերից մինչև այսօր, հայ հավատացյալ ժողովուրդը անսպառ հավատով և խորին երկյուղածությամբ ներկա՞ է եղել Սրբալույս Մեռոնի օրհնության և Սրբալույս Մեռոնի կաթսայի առաջ ծնրադրելիս հաղորդակցել է իր նախնիքների հավատի, ջերմեռանդության և հայրենասիրության վսեմ գաղափարներով:

Ս. Էջմիածինը, ուր դարերով օրհնվել է Մեռոնը, հայ հավատի համար հանդիսացել է ազգային-եկեղեցական վերնատունը, ուր հավաքվել է հայ ժողովուրդը իր պատմության մռայլ ու ճակատագրական օրերին, «ամենեքեան միաբան ի միասին» (Գործք, Ը 1)՝ ընդունելու Ս. Հոգու շնորհաբաշխության պարգևները. «Առչիք զօրութիւն ի հասանել Հոգւոյն Սրբոյ ի վերայ ձեր»:

Ս. Հոգին է առաջնորդել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն իր ողջ պատմության ընթացքում: Այդ Հոգով է ապրել, կրթվել ու ստեղծագործել հայ ժողովուրդը:

Սրբալույս Մեռոնի կաթսայի առջև իրար են հանդիպում մեր պապերի, մեր նահատակների, մեր հայրապետների հոգիները, մեր անցյալն ու ներկան իրար են գրկում՝ իրարմով ամրոցանալու, զորանալու և բարձրանալու համար: Ծառն արմատով է ծառ, տունը հիմամբ է տուն:

ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ԿԱԹՍԱՆ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԵՎ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵՌՈՆԱԲՈՒՅՐ ՍԻՐՏՆ է, ուր հայ հավատն ու հոգին, հայ կյանքը օրհնում և շատանում ու իր մասունք բաշխվում են բոլոր ժամանակների հայության:

Հայ ժողովուրդը իր գոյության հազարամյակներում նայել է Սրբալույս Մեռոնի կաթսային ու ապրել նրա խորհրդով, վառել դարերի գիմաց իր անմար կյանքի, հույսի խարույկը:

Լուսավորչի օրերից մինչև այսօր ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ԿԱԹՍԱՅԻ ՄԵՋ ԻՐ ԱՊԱԴԱ ԿՅԱՆՔԻ, ԻՐ ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ԴԱՂԱՓԱՐՆ է ԴՐԵԼ, որովհետև Սրբալույս Մեռոնը «սիմվոլն է Հայ Եկեղեցու ՄԻՈՒԹՅԱՆ. դա նշանակում է, որ մենք ամենքս այդ Եկեղեցու զավակներն ենք: Աշխարհի որ անկյուններում էլ լինենք, մենք ՄԻԵՎՆՈՒՅՆ զավակներն ենք մեր Առաքելական և Սուրբ Եկեղեցու» (Գարեգին Ա. Կաթողիկոս):

1954 թվականի սեպտեմբերի 26-ը կոչված է նոր ու պատմական իրագործություն հանդիսանալու մեր ազգային-եկեղեցական կյանքում: Այդ օրը, Ս. Էջմիածնի պատմական կամարների տակ, հայ հավատացյալ և ուխտավոր ժողովրդի հավատով, Լուսավորչի արժանավոր հաջորդը և հանուրց հայության սիրելի Մեծ Հայրապետը՝ Տ. Տ. Գեորգ Զ.ը, որպես Պետրոս Հայաստանյայց Առաքելական եկեղեցու, և որպես «աստուածարեալ Քահանայապետ, որ աստուածատիպ գագաթան օծութեամբ գլուխ նկեղեցոյ է կարգեալ», Ս. Լուսավորչի Աջով օրհնելու է Սրբալույս Մեռոնը:

Նշանակված օրը Ս. Էջմիածին է հավաքվելու հայ ժողովուրդը, իր հավատով, իր բարեպաշտությամբ և իր նվիրատվությամբ մի անգամ ևս պայծառացնելու Հայաստանյայց Առաքելական եկեղեցու դարավոր և պատմական կենտրոն Մայր Աթոռը, և ուր նորից իջնելու է Ս. Հոգին Սրբալույս Մեռոնի օրհնության պահին, իբր նոր շնորհաբաշխություն: «Քում ամենիմաստ էութեանդ խոստովանիմք զամենայն պարգև ի մեզ ծաղկեալ և աճեցեալ, որ ծառադրես առաքեալս, լցուցանես մարգարէս, ուսուցանես վարդապետս, բարբառեցուցանես հաներս և բանաս զփակեալ ականջս խլից» (Նարեկացի):

Հշմարտության, արդարության, խաղաղության, սիրո այդ աստվածային «զօրացուցիչ, աստուածացուցիչ, միշտ ընդունող, սրբող» Հոգին է առաջնորդել Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն դարերի միջով, իբրև «հրեղեն սյուն»: Այդ Ս. Հոգու զորությամբ և ներգործությամբ է, որ հայ ժողովուրդը անկորուստ և անաղարտ է պահել իր ազգային-եկեղեցական ինքնուրույնությունը, ազգային արժանապատվությունը, իր հավատի ուղղափառությունն ու ճշմարտությունը, Հայրենիքի սեր, մարդասիրության վեհ գաղափարները:

1954 թվականի սեպտեմբերի 26-ը ցնծատոն է հանդիսանալու հայ ժողովրդի համար, որովհետև «մեր նախնյաց և մեր ներկա Սրբություն Սրբոցը՝ հայ քրիստոնյա մարդու լուսո Տաճարը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ իր սրբություններով, և մեր ներկա Մայր Հայրենիքը՝ իր պատմական հուշարձաններով, որպես մագնիսական ուժ, կբերեն հայ հավատացյալներին ու կնամախմբեն պատմական Տաճարի շուրջ, կբերեն Սփյուռքի պատգամավորներին Հայրենիքի կարոտն առնելու, հայրենի երկրի անցյալ և ներկա հուշարձանները տեսնելու, ոգեշնչվելու Մեռոնի օրհնությամբ և արձագանքելու իր նախնյաց սրտառուչ զգացմունքին. «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ»:

ՈՒ ԿԴԱՆ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԸ «ԶԱԳԱԽԱՌՆ ԵՐԱՄՈՎԻՆ», ԿՐՈՆԱԿԱՆ ՎԵՀ ԶԳԱՑՄՈՒՆՔՈՎ ներկա լինելու Հայաստանյայց Առաքելական եկեղեցու դարերով որ-

բագործված և նվիրական դարձած Սրբալույս Մեռոնի օրհնությանը, տեսնելու, համբուրելու Մայր Տաճարի Ս. Խորանն ու Լուսավորչի արժանավոր հաջորդի Ս. Աջը, որը լռնած Լուսավորչի Աջը՝ պիտի օրհնի նոր Մեռոնը:

ՈՒ ԿԴԱՆ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԸ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՎԱՌ ԶԳԱՑՄՈՒՆՔՈՎ համբուրելու հայրենի սրբազան հողը, որի տերն է այսօր Հայրենիքում ապրող հայ ժողովրդի հոծ ու աշխատունակ մայր զանգվածը, կգան ողջագուրվելու Հայրենիքի իրենց հարազատների հետ, որոնք այսօր նախնյաց հայրենասիրությամբ, իրենց մտքի, հոգու, սրտի մեռոնաբույր գեղեցկություններն են բափում ամեն քարի, ամեն մի թիզ հողի վրա, որոնք իրենց արդար վաստակով նոր ու երջանիկ կյանք են կերտում հայ ժողովրդի համար, շենցնելով հայրենի օջախը:

ՈՒ ԿԴԱՆ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԸ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ՝ ԴՑԵԼՈՒ ՆԱԽՎ ԱՅՐԻ ԿՆՈՋ ԻՐԵՆՑ ԵՐԿՈՒ ԼՈՒՍԱՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԴԱՆՋԱՆԱԿԻ ՄԵՋ: Այդ երկու լումայով միշտ պահվել ու պահպանվել են մեր վանքերն ու տաճարները, այդ երկու լումայով վառ ու պայծառ է մնացել Արագածի կատարին պլպլացող Լուսավորչի կանթեղը:

Անհրաժեշտ է միայն կազմակերպված ներկայացնել հայ ժողովրդի ազգային-եկեղեցական ամենաժողովրդական և սիրելի այդ տոնակատարությունը: ՊԱՏՄԱԿԱՆ ԱՅԴ ՀՈԳԵՏՈՆԸ ՊԻՏԻ ՎԵՐ ԱԾԵԼ ՀԱՅ ԺՈՂՈՎԸԸՐԴԻ ՍԻՐՈ, ՀԱՐԳԱՆՔԻ, ԽՄԲՎԱԾՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դարավոր կենտրոն Ս. Էջմիածնի և հայ ժողովրդի հերոսական, ազատ ու անկախ Հայրենիքի շուրջը:

Ս. Էջմիածնում կատարվելիք Սրբալույս Մեռոնի օրհնությունը պետք է վեր ածել հայ ժողվրդի հայրենասիրության, Էջմիածնասիրության մի փայլուն և սրտառուչ ակտի:

Ս. Էջմիածնի Մեռոնօրհնեքի կապակցությամբ պետք է դրսևորել հայ հավատացյալ ժողովրդի հավատի, կամքի, ձգտումների և գործողությունների միասնությունը, որպեսզի մի անգամ ևս հոչակվի ի լուր աշխարհի՝ որ մի է ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՄԻ է ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ:

ԹՈՂ ՆՈՐ ՄԵՌՈՆԸ՝ ԴԱՌՆԱ ՆԵՐՇՆՉՄԱՆ, ՁՈՐՈՒԹՅԱՆ, ԿՈՐՈՎԻ, ՀԱՎԱՏԻ ՈՒ ՍՐԲՈՒԹՅԱՆ ԱՆՍՊԱՌ ԱՂԲՅՈՒՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ:

ԹՈՂ ԵՐԲԵՔ ՁՊԱԿՍԻ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀՈԳՈՒՑ ԵՎ ՍՈՒՐԲ ՁԵՌՔԸ՝ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԻՑ:



ՔԱՐՈԶ

ԳԵՈՐԳ ԵՊ. ՎՐԴ. ՎԱՔՏԱՆ

ՀԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

(Խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, 1954 թվականի ապրիլի 17-ին)

Քրիստոնյա քույրե՛ր և եղբայրնե՛ր.

«Ձեզ և մեզ մեծ աւետիք, Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոցն» նորից են հնչում, հենց այս ժամին, հայոց առաքելական սուրբ եկեղեցիներում և առհասարակ բոլոր քրիստոնյա եկեղեցիներում՝ Քրիստոսի հրաշափառ և սուրբ Հարության օրհներգներն ու սրտառուչ աղերսանքները. «Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»։

Որքա՞ն խորիմաստ է այս օրհներգը և ինչքա՞ն բան է ասված այս երեք համառոտ նախադասություններով։ Մահով մահին խորտակեց և մեզ կյանք պարգևեց։ Գողգոթայի դագաթին՝ մահվան պատժի սյան վրա, աշխարհի և մարդկության Փրկիչը մեռավ խաչի անարդ մահով, երկու ավազակների հետ։ Սակայն խաչի վրա Քրիստոսի մահը նոր դարագլուխ բացեց աշխարհի և մարդկության համար։ Քրիստոս իր մահով շղթայեց չարիքը, մահը, և մարդկանց ազատեց մահվան դատակնիքից և դատապարտվածությունից։ Աշխարհում մարդիկ միշտ էլ խաչել են ճշմարտությունը, կյանքը, սերը, աղնվությունը, աշխատել են խեղդել ճշմարտության և խաղաղության ձայնը, և միշտ խաչ են բարձրացրել անմեղներին, սրբերին, առաքյալներին, անգամ Աստուծո Որդուն։ Եվ ահա՛ Նա, զրկվածների, թշվառների հարազատ բարեկամն ու Փրկիչը խաչի վրա երկու ավազակների հետ, «օրենքի տվողը՝ անօրենների հետ»։

Սակայն ովքե՞ր էին այս երկու ավազակները, մարդկության ո՞ր խավի ու դասակարգի ներկայացուցիչներ են նրանք։

Մեկը այդ խաչված ավազակներից այն մարդկության ներկայացուցիչն էր, որ, մոռացած մարդկային խիղճ, զգացմունք, ընդմիշտ շեղված է Աստուծո ճանապարհից և դարձած մարդկության համար ավելորդ բեռ։ Նա, իր թշվառության ու տանջանքի բոպեին, անգամ ծառանում է ճշմարտության դեմ և իր ծաղրն ու անարգանքն է միացնում նրանց, որոնք Հիսուսին խաչ բարձրացրին և հեգնանքով դառնում է մահվան խաչի վրայից և խաչի վրա մահվան դատապարտված Քրիստոսին ասում.— Արդարև, եթե դու Աստուծո Որդի ես, «էջ՛ի խաչէդ և փրկեա զքեզ և զմեզ»։ Այս ավազակը անզիջող մեղավորի օրինակն է, որի համար չի ծագելու երբեք Ս. Հարության կենարար այգաբացը։ Նա մեղքի և չարիքի վաճառված մի հոգի է։ Նա ներկայացուցիչն է այն մարդկության, որ տեսնում է անմեղությունը, ճշմարտությունը, բայց քաջություն չունի այն պաշտպանելու և իր տկարության մեջ միանում է հզորների հայհոյության և անարգանքին՝ ընդդեմ ճշմարտության։ Նա տեսնում է ոտնահարված իրավունքը, բայց չի պաշտպանում այն։

Ո՞վ է երկրորդ ավազակը, որին տիրող անարդար օրենքն է հավանաբար ավազակության ճամբին դրել, որի մեջ կա սահայն Աստուծո վախը, մարդկային խիղճ ու զգացմունք, գործած սխալի գիտակցություն, նրանից հրաժարվելու վճռականություն և հաստատակամություն։ Նա բացահայտ տեսնում է, որ Հիսուս իզուր տեղ է գատապարտվել, տեսնում է, որ աշխարհում անմեղությունը ոտնահարվում է և պաշտպան չունի, մինչ ինքը և իր ավազակ ընկերը կրում են իրենց արժանի պատիժը, զարթնում է տանջանքի պահին նրա քարացած խիղճը և պաշտպան է կանգնում անմեղության և ճշմարտության, զգում է իր բախտակից ավազակի լպիրշ հարձակման անիրավացիությունը և նախատում է նրան. «Չի՞ անարդիս զայրս այս արդար, ընդէ՞ր ոչ երկնչիս յԱստուծոյ, զի դու ի նմին պատժի կաս։

Հիսուսի աստվածային վեհ ուշադրությունը գրավեց իր վրա այս անմեղ մեղավորը։ Փրկիչը դարձավ դեպի այդ ճշմարտաբերան ավազակն ու իր աստվածային ձայնով կանչեց նրան. «Ճշմարի՛տ ասեմ քեզ, այսօր ընդ իս իցես ի դրախտին»։ Ու հատարակությունից, օրենքից դուրս հռչակված ավազակը եղավ առաջին փրկվածը, որ ճանաչեց ու հռչակեց Քրիստոսի փրկագործության խորհուրդը։ Որպիսի՞ մեծ գնահատական է, որ տալիս է Աստուծո Որդին մի ավազակի։ Փրկիչը գնահատեց այդ ավազակի ճշմարիտ խոստովանությունը, որ նա մահվան խաչի վրա անգամ ճշմարտությունը պաշտպանեց։

Ինչո՞վ էր վարձատրում խաչեցյալ Հիսուսը խաչի վրայից այս ճշմարտախոս ավազակին — արքայությամբ։ Ավազակը ժառանգեց անմահությունը։ Նա Քրիստոսի արյունով փրկված առաջին մեղավորն էր, որի առաջ բացվեց հավիտենական կյանքի, ուրախության, հարության լուսապայծառ առավոտը։ Չէ՞ որ Քրիստոսը միշտ սիրով, գուրգուրանքով էր շրջապատում կյանքից զրկվածներին, անժառանգներին, դժբախտներին, շահագործվողներին, բոլոր նրանց, ովքեր հանուն ճշմարտության և արդարության հալածվում և չարչարվում են. «Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզս։ Չէ՞ որ հենց այս կոչն էր, որ խլացրեց ժամանակի տիրողների ականջները և փոթորկեց նրանց ժանտ հոգին, սարսափեցրեց իշխողների սիրտը, որոնք մահով ուզեցին լռեցնել ճշմարտության աստվածային ձայնը՝ Հիսուսին, ի նրան խաչ բարձրացրին։

Քրիստոսի հարությունը հիմքն է քրիստոնեության. «Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ի զուր են հաւատքն ձեր»,— գրում է Ս. Պողոս առաքյալը։ «Արդարև Քրիստոս յարեա՞ ի մեռելոց»։

Հիսուսի հարությունը, նրա պայքարն ու հաղթանակը մարդկության պատմության մեջ նոր դարաշրջան բացեց, մարդկային կյանքն ու կենցաղը հեղաշրջեց, և պատահական չէ, որ բնության վերակենդանության հետ ժողովուրդները տոնում են նաև մարդկության վերածնման այս մեծ տոնը, Հիսուսի հաղթանակի տոնը— Հարությունը, Զատիկը։

Բնության, կյանքի վերակենդանացման այս տոնի, խաղաղության ու սեր քարոզող ու մեզ ավանդ տվող Փրկչի այս հիշատակի օրը Հիսուսի ոգին լինի ձեզ առաջնորդ ձեր կյանքում։ Բոլոր հավատացյալներս մեզ հաշիվ տանք, մեր մեղքերի համար զոհվող Հիսուսին մեզ առաջնորդ ունենալով՝ պայքարենք խաղաղության համար, շարիքի դեմ ու պատրաստ լինենք՝ ճշմարտության համար մեր կյանքը տալու։

Քրիստոսի հարության հավատացողներից մեկը եղել է նաև հայ ժողովուրդը. նա էլ ապրել է իր արյունոտ Գողգոթան, և խաչը ուսին բարձրացել է դեպի զոհողության կատարները հանուն Հայաստանյաց Նվեղեցու, հանուն հայ Հայրենիքի, մինչև ցմրուր քամել է դառնության բաժակը... Բայց ահա հարության մի օր, նա էլ առել է հարություն, փյունիկ թռչունի նման վերածնվելով իր վերքերից և արյուններից։ Հայուն չկարողացան գերեզմանել թշնամիները, և այսօր ահա, իր հայրենի հողի վրա հարություն առած հայ ժողովուրդը ապրում է և ստեղծագործում, հարության օրհներգը իր շրթներին՝ «Փա՜ռք հրաշափառ յարութեան քո, Տէ՛ր»։

Հավատացյալ եղբայրնե՛ր և քույրե՛ր, նախնյաց ոգով և հավատով մեր սրտերում միշտ վառ ու պայծառ պահենք Քրիստոսի հարության և հայ ժողովրդի հարության սրտառուչ պատգամները։

Իսկ հարուցյալ Տերը, իր հրաշափառ Հարության տոնի առթիվ, հարություն տա մարդկանց մեռած խղճերին, որպեսզի երբե՛ք չկրկնվի ոչ մի ժողովրդի համար խաչի և Գողգոթայի արյունոտ իրականությունը։

«Փա՜ռք հրաշափառ յարութեան քո, Տէ՛ր», ամեն։



ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 7-ին, չորեքշաբթի, Ս. Աստվածածնի Ավետման տոնի օրը, Մայր Տաճարում, հավատացյալ բազմության ներկայությամբ, մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան բարեկրոն Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։ Սուրբ պատարագին երգում էր Հոգևոր Ճեմարանի սաներից կազմված երգեցիկ խումբը։

***

Ապրիլի 11-ին, կիրակի օրը, Ծաղկազարդի տոնակատարության առիթով, Ս. Էջմիածին էին ժամանել բազմաթիվ ուխտավորներ Երևանից, Թաքվից, Թբիլիսիից և այլ տեղերից։ Դեռևս կիրակի առավոտյան ժամերգության ժամանակ Մայր Տաճարը լեփ-լեցուն էր հավատացյալների բազմությամբ։ Մայր Աթոռի միաբանությունը, տոնականորեն զգեստավորված, մասնակցում էր արարողությանը։ Տաճարում սեղանները զարդարված են ուտեստ դալար ճյուղերով։ Իրար են հաջորդում ավետարանների և գրքերի ընթերցումը։ Ուրախ և զվարթագին շարականների թրթռոցները լցնում են օդը անասելի զվարթությամբ։ Առավոտյան ժամերգությունից հետո, հավատացյալների խառը բազմությունը Տաճարից դուրս է գալիս ուտեստ ճյուղերը ձեռքներին։

Քրիստոսի Երուսաղեմ գալստյան հանդիսավոր տոնն է այսօր։

Կեսօրին տեղի է ունենում հանդիսավոր սուրբ պատարագ։ Օրվա պատարագիչն է գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը։ Երգեհոնի հնչյունները, դպիրների ախորժալուր երաժշտությունը, խառնվելով Տաճարում տիրող աղոթքի և մրմունջների շշնջյունին, առաջացնում են ընդհանուր միստիկ նվիրաշնչություն։ Պատարագիչ սրբազանը հավուր պատշաճի քարոզում է, նկարագրելով Քրիստոսի հանդիսավոր մուտքը Երուսաղեմ և շեշտելով Աստվածորդու ժողովրդի մեջ առաջ բերած բարոյական հեղաշրջող ազդեցությունը։

Երեկոյան տեղի է ունենում հանդիսավոր «Դոնքացէքը»։ Դեռ ժամերգությունը չսկսած, ժողովուրդը հավաքվել է Տաճարի ներսն ու դուրսը։ Հավաքվում են միաբանները և շուտով սկսվում է ժամերգությունը։ Գեղեցիկ ու հանդիսավոր են Հայ եկեղեցու Ավագ շաբաթվա արարողությունները, որոնք հավատացյալների հոգու ամենանուրբ լարերի հետ են խոսում, հմայիչ են ու տպավորվող— Ահա՛ մի պահ։ Ս. Իշման սեղանի առջև, ատյանում, ծնկի է իջել ողջ միաբանությունը։ Գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը, լրիվ զգեստավորումով, բարձրացել է արդեն վարագույրներով ծածկված Ս. Իշման սեղանը։ Ավագ քահանաներից մեկը, շուրջառազգեստ, մի մեծ բանալի ձեռքին, բախում է և ողբագին ու աղերսաձայն երգում՝ «Բա՛ց մեզ, Տէ՛ր, բա՛ց մեզ, Տէ՛ր, դդուռն ողորմութեան, որ ողբալով կարդամք

առ քեզ։ Ամբողջ Տաճարը համակ լսողություն է դարձել, ո՛չ մի շշուկ, ո՛չ մի ձայն, երգի կախարդական հնչյունները հմայել են բոլորին, մեզ ամբողջովին աղերս է ու սրտամորմոք ոգը, այն հայ հավատացյալի դարերով տառապած հոգու տվայտանքն է, աղերսն ու հավատն է առ Աստված։

Սեղանի ներսից շոտով լսվում է պատարագիչը. «Ո՞վ են սոքա զի բացից, զի այս դուռն Տեառն է, և արդարք մտանեն ընդ սա»։ Եվ այսպես շարունակվում է մինչև վերջ։ Դպիրների «Զողորմութեան քո զդուռն բա՛ց մեզ» շարականի հնչյունների տակ բացվում են Տաճարի վարագույրները։ Կարդացվում է վերջին ավետարանը։ «Հանդիսացուք», «Հեցոյ» և վերջանում է օրվա հանդեսը։

***

15 ապրիլի, Ավագ հինգշաբթի.— Ցերեկը տեղի է ունենում հանդիսավոր սուրբ պատարագ։ Բազմաթիվ են հաղորդվողները, Ավագ շաբաթվա նվիրական այս օրերին կրկնապատկվել է հավատացյալների ջերմեռանդությունը։ Օրվա պատարագիչն էր բարեկրոն Տ. Կոստանդին աբեղա Թաղալյանը։

Երեկոյան կատարվում է Ոտնլվայի հանդիսավոր կարգը։ Հավատացյալների մի չտեսնված բազմություն լցվել է Տաճարի ներսը։ Զատիկական այս սուրբ ու նվիրական օրերին Ս. Էջմիածին են եկել շրջակա հայ գյուղերից բազմաթիվ ուխտավորներ։ Նրանց մեջ կան և կրծքի երեխաներ, տատիկներ, երիտասարդներ, մի ամբողջ բազմազանություն է ներկայացնում հավատացյալների այդ բազմությունը։

Այս վեհ ու նվիրական օրերին Վեհափառ Հայրապետը հիվանդության պատճառով Տաճարում չէ։

Կատարվում է յուղի և ջրի օրհնությունը։ Գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը, ծնկի եկած, հաղին շապիկ, ղենջակ ու վակաս, խոնարհության օրինակ Քրիստոսի, մեկ առ մեկ լվանում է միաբանների ոտքերը և օծում յուղով։

Վերջանում է արարողությունը, Տաճարում ծովացյալ բազմությունը ալեկոծվում է, ամեն ոք ցանկանում է ձեռք բերել օրհնված յուղի մի մասնիկ։

Գիշերը տեղի է ունենում խորհրդավոր հանդես։ Սևերով են ծածկված սեղանները, դրակալները, միաբանները սև շուրջառներ են կրում. սգի սև քողով է պատած ամեն ինչ։ Ավագ սեղանի վրա վառվում է 12 կերոն։ Սկսվում է սաղմոսերգությունը։

Օրում թրթռում են «Հառաւօտ լուսոյի կերկերուն» հնչյունները։ Այդ հաջորդաբար կարդում են Քրիստոսի մարդեղության և խաչելության նվիրված վեց ավետարանները։ Մեկ առ մեկ հանգում են սեղանի մոմերը։ Տաճարում տիրում է խորհրդավոր մթություն։ Խավարի միջից լսվում են «Փա՛ռք ի բարձունսի միօրինակ հնչյունները, և այսպես շարունակվում է առավոտյան ժամերգությունը մինչև վերջ։

Մինչև ուշ գիշեր Տաճարը լիքն է ջերմեռանդ հավատացյալներով։

Բավական ուշ է ժամանակը, երբ բոլորը ցրվում են տները։

***

16 ապրիլի, Ավագ ուրբաթ.— Ուրբաթ կեսօրին շարունակվում են Հիսուսի մատնության, շարշարանաց նվիրված գրքերի, ավետարանների, շարականների ընթերցումն ու երգեցողությունը։

Տխուր ու հանդիսավոր են Ավագ ուրբաթ երեկոյան Քրիստոսի թաղման կարգի ծիսակատարությունները։ Տաճարը լի է աղոթողներով, շատերի աչքերին արտասուք կա։ Ս. Իջման սեղանի առաջ, սպիտակ դաստակով ծածկված սեղանի վրա, դրված են Քրիստոսի թաղումը ներկայացնող նվագներ։ Մեղմորեն առկայծում են կանթեղներն ու մոմերը, հնչում են թաղման տխուր ու մելամաղձիկ շարականները։ Ահա դպիրները երգում են «Պարգևատուն ամենեցունց» շարականը, որի բառերը, եղանակը համակ վիշտ են։ Ծկեղեցին սգում է արժանապես Աստվածորդու խաչելությունն ու թաղումը։

Ժամերգության վերջում հավատացյալները մեկ առ մեկ մոտենում են սեղանին և հմբուրում տիրունական սրբությունները և հանդարտ դուրս գալիս Տաճարից։

***

17 ապրիլի, Ավագ շաբաթ.— Հարության Զատիկի երեկոն է։ Տաճարում շարժվելու տեղ չկա։ Փակ է սեղանի վարագույրը։ Դանիելի գրքի հանդիսավոր ընթերցումից հետո բացվում է սեղանի վարագույրը։ Սկսվում է Զատիկի օրվա երեկոյան սուրբ պատարագը։ Պատարագիչն է բարձրապատիվ Տ. Գեորգ վարդապետ Վաթյանը։ Հոգեկան անպատմելի ցնծություն է տիրում Տաճարում, աղոթքի մրմունջներ են թրթռում օդում։ Հանդիսավոր ու վեհ է Տաճարը այդ պահին։ Այսօր, այս խորախորհուրդ, սրբազան ու հանդիսավոր երեկոյան, մի անգամ ևս «Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»՝ հուսախություն հավատացյալների. փա՛ռք Տիրոջ հրաշափառ հարությանն։

«Հայր մերից առաջ պատարագիչ հայրը քարոզում է հավուր պատշաճի՝ Քրիստոսի հարութիւնն բնաբանով։

Արձակվում է սուրբ պատարագը, բազմութիւնը դուրս է հորդում եկեղեցուց։ Տաճարի ներսում վերջ չկա հաղորդվողներին։ Ամենուրեք լսվում են շնորհավորանքի խոսքեր՝ «Շնորհավոր Զատիկ», «Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»։

Մինչև ուշ գիշեր բաց է Տաճարը։ Վառվում են ջահերը, գալիս են հավատացյալների նոր խմբեր, մտնում Տաճար աղոթելու։

***

18 ապրիլի, կիրակի—«Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի».— Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Ժամարարն էր գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը։ Տաճարում կանգնելու տեղ չկար։ Պատարագիչ սրբազանը քարոզեց հավուր պատշաճի։

Զգալի էր Վեհափառ Հայրապետի բացակայությունը, որը հիվանդության պատճառով ի վիճակի չէր գտնվել Տաճարում։

Պատարագը վերջանալուց հետո հավատացյալ ժողովրդի բազմությունը մինչև ուշ գիշեր անպակաս եղավ Տաճարի շրջակայքից՝ սրտանց տոնելով Քրիստոսի Հարութիւնը— Զատիկը։

«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց», ձեզ և մեզ մեծ ավետիս, սիրելի եղբայրնե՛ր և քույրե՛ր։

***

Ապրիլի 15-ին, զատկական առնակատարությունների առիթով, Վրաստանի թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը Մայր Աթոռից մեկնեց եղբայրական Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի։

***

Զատկական տոնների կապակցությամբ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը և դասախոսական կազմը արձակուրդ ստացան։ Ուսանողները մեկնեցին իրենց անկյունները, հնողների մոտ՝ հանգստանալու։ Մայիսի 3-ից կանոնավորապես կվերսկսվեն Հոգևոր Ճեմարանի դասերը։

***

Ապրիլի 17-ին, Հոգևոր Ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ դեկուցում՝ երաժշտագետներ Կարա-Մուրզայի և Մակար Եկմալյանի կյանքի և գործունեության մասին։ Զեկուցեց Հոգևոր Ճեմարանի երաժշտության դասախոս Հրանտ Գեորգյանը։ Զեկուցումից հետո Հոգևոր Ճեմարանի երգեցիկ խումբը կատարեց Կարա-Մուրզայի և Մակար Եկմալյանի ստեղծագործություններից մի քանի երգեր։

Ներկա էին Մայր Աթոռի միաբաններից ոմանք և Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ Մ. Մինասյանը։



ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ

ԿՈՄՅՈՒՆԻԿԵ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԻՍՏԻ ՄԱՍԻՆ

Վիեննա, 30 մարտի (ՏԱՍՍ).— *Մարտի 28—30-ին Վիեննայում կայացավ խաղաղության Համաշխարհային խորհրդի Բյուրոյի նիստը։ Բյուրոն ընդունեց հետևյալ փաստաթղթերը.*

1. Խաղաղության Համաշխարհային խորհրդի Բյուրոյի բանաձևը։

2. Դիմում Եվրոպայի ժողովուրդներին։

3. Խաղաղության Համաշխարհային խորհրդի Բյուրոյի դեկլարացիան ատոմային զենքի մասին։

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԲՅՈՒՐՈՅԻ ԴԻՄՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻՆ

Վիեննա, 30 մարտի (ՏԱՍՍ).— *Վիեննայում, խաղաղության Համաշխարհային խորհրդի Բյուրոյի նիստում ընդունվել է Եվրոպայի ժողովուրդներին ուղղված հետևյալ դիմումը.*

Բեռլինի խորհրդակցությունն ապացուցեց, որ Եվրոպական պաշտպանական միավորումը ժողովուրդներին պարտադրելու ցանկությունը գլխավոր խոչընդոտն է Եվրոպական պրոբլեմների խաղաղ լուծման ճանապարհին։

«Եվրոպական պաշտպանական միավորումը նշանակում է ստեղծել Եվրոպա, որը դատապարտված է բաժանվելու երկու թշնամական լագերի և շարունակելու սպառազինությունների ուժեղացման կուրտը։

«Եվրոպական պաշտպանական միավորումը գերմանական միլիտարիզմի վերածնումն է Եվրոպայի կենտրոնում։

«Եվրոպական պաշտպանական միավորումը մահացու սպառնալիք է Եվրոպայի յուրաքանչյուր բնակչի համար։ Դա ամեն մի օջախի ավերման սպառնալիք է։

Եվրոպայի ժողովուրդները, որոնք սեփական փորձով զգացել են Եվրոպայում տեղի ունեցած երկու համաշխարհային պատերազմների պատճառած սոսկալի տառապանքները, պետք է համակված լինեն աշխարհում խաղաղության պահպանման համար ընդհանուր պատասխանատվության զգացմունքով։

Ճիշտ չէ, թե Եվրոպայի ժողովուրդներն ունեն միայն մեկ ճանապարհ՝ պատկտման և պատերազմի ճանապարհը։ Նրանց առջև բաց է մեկ ուրիշ ճանապարհ՝ Եվրոպայի բոլոր պետությունների միջև կոլեկտիվ անվտանգություն կազմակերպելու ճանապարհը, առանց տրված առանձին երկրի գերիշխանության, ազգային անկախությունը հարգելու ոգով և նրանց սեփական ձգտումներին համապատասխան, սպառազինությունների ընդհանուր կրճատման ոգով։

Չնայած քաղաքական ու սոցիալական տարբեր ռեժիմներին, Եվրոպայի բոլոր պետություններն ունեն ընդհանուր շահեր՝ խաղաղության պահպանումը այդ վերկրներից յուրաքանչյուրի համար և տնտեսական ու կուլտուրական համագործակցության զարգացումը։ Եվրոպայում յուրաքանչյուր տղամարդու, յուրաքանչյուր կնոջ պարտքը այսօր պարզ է՝ պարտությունն մատնել «Եվրոպական պաշտպանական միավորումը» և պատերազմը, ապահովել խաղաղությունը Եվրոպայում։

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԲՅՈՒՐՈՅԻ ԴԵԿԼԱՐԱՑԻԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԶԵՆՔԻ ՄԱՍԻՆ

Վիեննա, 1 ապրիլի (ՏԱՍՍ).— Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուրոյի Վիեննայի նիստում հետևյալ դեկլարացիան է ընդունվել ատոմային զենքի մասին.

Զրաժնային ռումբի պայթյունը Բիկինիում, նրա սարսափելի ներգործությունը մարդկանց վրա, նրա գործողության շառավիղի երկարությունը վերահսկելու անհնարինությունը, նրա օգտագործման սպառնալիքը պայթյուն առաջ բերեցին ամբողջ աշխարհում։

Ատոմային զենքի արգելումը, որ պահանջվում է Ստոկհոլմի կոչով, մի բան, որը պաշտպանեցին հարյուր միլիոնավոր մարդիկ, այսօր դարձել է բոլոր ժողովուրդների պահանջը։

Գիտությունը անսահմանափակ ուժեր է աղատել ոչ թե նրա համար, որպեսզի ոչնչացնի մարդուն, ոչ թե նրա համար, որպեսզի մի ակնթարթում ոչնչացնի նրա հազարամյա աշխատանքի պտուղները, այլ նրա համար, որպեսզի միջոցներ գտնի թեթևացնելու նրա այժմյան տառապանքները և նրան օգնի հասնելու ավելի ապահովված կյանքի։

Ատոմային պատերազմը օրենքից դուրս հայտարարելը ոչ միայն անհրաժեշտ է, այլև հնարավոր։ Դրան կարելի է հասնել ռադիոակտիվ զենքի և ռադիոակտիվ թույների բոլոր տեսակներն արգելող միջազգային համաձայնության միջոցով։ Միջազգային տեսչության ու վերահսկողության սիստեմը պետք է և կարող է հաստատվել։

Ժողովուրդները պետք է կառավարություններից անհապաղ պահանջեն կնքել այնպիսի համաձայնագիր, որը արգելի մասսայական ոչնչացման զենքի բոլոր տեսակները։

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» օրաթերթ, Երևան, 1 և 3 ապրիլի 1954 թ.)

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱԿԱՐԱՎԱՆՔ*

8. ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մակարավանքը վիմագրությամբ հարուստ հուշարձաններից մեկն է։ Բարեբախտաբար արձանագրությունների քիչ մասն է վնասված (թվով 11 հատ), քարերի հողմահարվելու կամ ջարդվելու հետևանքով։ Դրանց թվում ամենակարևորը Մեծ եկեղեցու շինարարական արձանագրությունն է, փորագրված ջարդված մեծ խաչքարի թիկունքին։ Մենք աշխատել ենք հավաքել բոլոր արձանագրությունները։ Հենց այդ նպատակով 1958 թվականին երրորդ անգամ այցելել ենք հուշարձանների այդ խումբը։ Այդ այցի ժամանակ ստուգել ենք առաջներում գրի առած արձանագրությունները, լրացրել պակասը։ Այդ ժամանակ է հայտնաբերվել նաև ջարդված խաչքարի արձանագրությունը, որի կարևորությունն ինքնին պարզ է։ Այսպիսով մեզ հաջողվել է գրի առնել 58 արձանագրություն, որոնք և ստորև բերում ենք։ Ցավոք, պետք է ասել, որ տեղի մթության պատճառով չենք նկատել Հին եկեղեցու արտաքին պատերին եղած երկու արձանագրություն, որոնք հայտնաբերել են ճարտարապետներ Բ. Արզումանյանը և Շ. Աղաջանյանը, հուշարձանները չափագրելիս։ Այսպիսով Մակարավանքի բոլոր արձանագրությունների թիվը դառնում է 60 հատ։

Մեր բերած 58 արձանագրություններից 27 հատը (աստղանիշով նշվածները) սրանով առաջին անգամ են լույս տեսնում։ Մնացած 31 հատը հրատարակել են հին բանասերներ Սարգիս վարդապետ Ջալալյանը[1] (30 հատ) և Մակար եպիսկոպոս Բարխուդարյանը[2] (7 հատ), ըստ որում վերջինս միայն 1 հատ նորն է լույս ընծայել (№ 4-ը)։ Հիշյալ բանասերների վերծանությունները ունեն անճշտություններ և որոշ տեղերում լրիվ չեն գրի առնված, կամ ունեն արձանագրություններում չեղած հավելումներ։

58 արձանագրություններից միայն 15 հատը թվագիր ունեն, որոնք ըստ հուշարձանների և մեր համարների հետևյալներն են— Փոքր եկեղեցի, № 56, ՈԽԷ=1198 թ., Մեծ եկեղեցի, №№ 2, 4 և 14, ՈԾԴ—ՈՀԷ=1205—1228 թ. թ., ժամատուն, №№ 26, 31, 32, 33, 40, 41, 45, 48 և 55, ՈՀԳ—ՉԻԷ=1224—1278 թ. թ., գերեզմանատուն, №№ 57 և 58, ՌՃԿԱ—ՌՄԲ=1712—1753 թ. թ.։

Արձանագրությունները դասավորել ենք որոշ սիստեմով, այն է՝ ըստ հուշարձան-

* Շարունակված ամսագրի 1954 թվականի փետրվարի և մարտի համարներից։

1. Սարգիս վարդապետ Ջալալյան, «Ժամանակագրություն ի Մեծն Հայաստան», մասն Ա., Տփխիս, 1843 թ., էջ 147—154։

2. Մակար եպիսկոպոս Բարխուդարյան, «Արցախ», Բաքու, 1895 թ., էջ 373—378։

ների, նախ՝ դրսից և ապա՝ ներսից, սկսած ճակատի կամ պատի ձախ ծայրից։ Հաճախ հուշարձանների, կամ դրանց որևէ մասի տեղադրությունը կարճառոտ որոշելու նպատակով, գործ ենք ածել «աջ» և «ձախ» բառերը, որոնք պետք է հասկանալ նայողի կողմից։ Վիմագրության մեջ պահպանել ենք մեր նախորդ՝ «Էջմիածին» ամսագրի էջերում հրապարակված՝ աշխատություններում կիրառված պայմանական նշանները[1], որոնցից կարևոր ենք համարում կրկնել, որ անկյունավոր փակագծերում դրված են արձանագրությունների եղծված մասերը, իսկ սովորական փակագծերում՝ բաց թողնված գրերը (կարևոր տեղերում), որոնք, երկուսն էլ, արված են վերապահությամբ։

Ա. Հին եկեղեցի

* № 1. Արևելյան ճակատին, մեջտեղի լուսամուտի հյուսիսային կողի դարչնագույն քարի վրա, փոքր և խոր փորագրված դրերով.

1 .խե..... Ցոն։ և միա–
2 բանիս տուաք մի աւր ժամ ի տար–
3 ին գեաչգիտին աւրն ով խա–
4 փանէ մասն և բաժին զՑուդային
5 աոցէ և նրա մեղացն պարտ–
6 ոկան եղիցի առաջի Աստ։ ով
7 զգիրս չնչէ իեին եղիցի չն[ջ]–
8 եալ

Նույն լուսամուտի հարավակողմի խիստ հողմահարված, նման գույնի մի քարի վրա, նույն դրերով.

1 շարքի սկզբում — Ի Ո.....
2 » » — եկեղ.....

Բ. Մեծ եկեղեցի

* № 2. Վանքի փոքր բակի դիմաց, հարավակողմի երրորդ դարավանդի վրա և դրանից ցած, ձորակի լանջին ընկած մի մեծ և գեղաքանդակ խաչքարի չորս բեկորների ետևին։ Բեկորներն ընկած են հետևյալ կարգով — բ. և գ. բեկորները՝ երրորդ դարավանդում, դ. բեկորը՝ դրանցից 40 մետր ցած, նույն գծի վրա, իսկ ա. բեկորը նախորդից մոտավորապես 20 մետր ցած։

ա. Խաչքարի գլխամասի ճակատին, խոշոր, ծաղկեքանդակ բարձրագրով.

1 Աւ՛ ողորմ....

Խաչքարի ետևին, նույն բեկորի վրա.

2 [Հա]յոց. ՈՍԴ.....
3 [Թ]ամարայի զ.....

Խաչքարի ետևին, մյուս բեկորների վրա.

բ. 4 մեծ և ճգաւր.....
5 ոյ Սադունին. և յառ[աջնորդու]–
6 թէ սբ ուխտիս Ցոհանիսի... [վարդա]–
7 պետիս Գրիգորոյ ես Վարդան....
8 այ որդի Բազազա իշխանի զրկ[եց]–
9 ա ի սիրելի եղբարցն իմոց չորեցուն[ց]
գ. 10 որով անմխիթար չայի զաւուրս [իմ]
11 արդ վս սիրոյ նոցա շինեցի զեկեղ–
12 եցիս և եդի ի վերայ գխաչս յուս–

1. «Էջմիածին» ամսագիր, 1951 թ., սեպտեմբեր—հոկտեմբեր, էջ 41։

13 ոյ և յառնելն զայս ոչ զոմ ուն–
14 եի ազգնական բայց միայն զհոգև–
15 որ եղբայրն մեր Ալեքսէոս զի և սա [փո]–
16 խանակ բաղելո զիս եղաւ ծեռաւ..
.....
17 ....անգրանիկն մեր Վաճրամ
18 ....և Սարգիս երկուքն կան ի
19 ....իկ արդ որ երկիր պագ–
20 [էք յիշ]եցէք զմեզ ի Քս Յս

1. Նինարարական արձանագրությունն սկսվում է 2-րդ շարքից, որի ՈՄԴ գրերը համարում ենք Մեծ եկեղեցու շինարարությունը վերջացնելու թվականը՝ 1206 թ.։
2. ր. և գ. մեծ բեկորների միջի կտրվածքի գիծն անցնում է նախից 11-րդ շարքի գրերի մեջտեղից և այդը մոտենում է 10-րդ շարքի վերջին բառերի գրերի ստորին մասին։
3. Ջարդված են 2—10-րդ և 15—16-րդ շարքերի վերջին՝ փակագծերի մեջ առնված և կետերով նշված՝ տեղերը և 17—20-րդ շարքերի սկզբի մասը, Ժ—Տ գրերի ծավալով։
4. 16-րդ և 17-րդ շարքերի մեջ, կտրվածքի դեմով, պակասում է 1 կամ 2 շարք։
5. 19-րդ շարքի սկզբին սովորական տառերով շարված Ժ գրերը փորագրված չեն, այլ միայն գծագրված։

№ 3. Մեծ եկեղեցու արևմտյան ճակատին, մուտքից աջ, վերևում.

1 [Յ]ուսով ամենակալին Այ ես Դաւիթ որդի Տաշրէլի
2 [Ա]նե(ա)լ ի տան մեծ և հզաւր իշխանին արաբակ Սադունին։ Ե–
3 տու ընծա յեկեղեցիս Վո։ Ն(ն)չեցելոց մեր որ ընգ նով–
4 [ան]եաւ սորա։առաջնորդ Յով։և միաբանեմս սանմանեցամ
5 [զ]աւր սր Մնրնդեանն Քի։Գ։պատարագ մատուցանել։Ա։Ռուս–
6 ուդանա։Ա։Խաթուքէ։Ա։Ասփահն։Թե որ խափանէ դա–
7 տի ի Տէ և նոցա մեղացն աէր է։ Կատարիչքն աւրհնին յԱյ։

1. 6-րդ շարքում Խաթուքէ անվան Ա գրի նիշը պակասում է, փորագրված է Ս։
2. 1—5-րդ շարքերի սկզբի առաջին գրերի տեղում քարը վնասված է, դրանցից միայն 5-րդ շարասկզբի Ջ գրի ստորին գծի մի մասն է պահպանված։

№ 4. Մեծ եկեղեցու արևմտյան ճակատին, լուսամուտից վեր, փոքր խաչի-
ի կողքին.

1 Տր Ցս Քս
2 ողորմ–
3 է Առաք–
4 ելոյ և ամ–
5 ուսնո իւր
6 ՈՀԷ

№ 5. Մեծ եկեղեցու հարավային ճակատին, լուսամուտից ցած.

1 Յուսովն Այ ես Յովանես քահան–
2 այ էտու զիմ նոգո արդիւնս ե(ւ) գ–
3 նեցի յԱրտաւազայ իւր ամէն որդեց–
4 ն զայգին և ընծաեցի Ածածնի–
5 ս Յովանես առաջնորդ և միաբ(ա)նեմս
6 նտուն։Բ։ժամ ի տանի Աշխարհամատ–
7 ուն։Ա։ժամն ինն։Ա։ի(մ) մաւրն Զուգին ով զայգին
8 խափանէ։(—)յԱյ։ԳՃԺԸ։հայրապետացն անիծած է

✻ *№ 6. Մեծ եկեղեցու արևելյան ճակատին, հարավային կողմն, ցածում.*

1 Յուսովն Այ ես Խաչատուր քա-
2 նանա էտու ընծա եկեղեցո-
3 յս առաջնորդս Յովանէս
4 և միաբանքս սանմանեցին ի տ-
5 ունի Խաչվերացին:Ա:ուր պա-
6 տարագել գՔս յանուն նորայ

✻ *№ 7. Նախորդի տակ, քիչ դեպի աջ.*

1 [Յու]սովն Այ ես Մարգարէ քան-
2 անայ էտու ընծայ ի շինուրքն եկեղեց-
3 այս առաջնորդս Յովանէս և
4 միայբանքս էտուն.Բ.պատար-
5 ագ ի տաւնի էսայի մարգարէին
6 կատարիչքն աւրհնին:—

✻ *№ 8. Մեծ եկեղեցու արևելյան ճակատին, հյուսիսային նկմն, ցածում.*

1 Յանուն Այ այս իմ գիր է Աշոտս Վասակա ու Հասանա որ էտուամ զմարգսն
2 ի Մակարավանս ի Յոհանէս իմ ածեղբայրս որ մեր կենաց ու մեր
ոգենոյս ու մեր ծն-
3 ողաց յիշատակ լինի ով այս բանիս յայցող է ու հակատակ ու կամ այլ յետ
4 ունի:ՅԺԸ:հայրապետուսց նզոված է:Ցուղաի վարձաւքն է: Սատանայի մասն-
5 ակից է:ես Յոհանէս և այլ միաբանքս տուամ Աշոտս:ի:տարին:Դ: ժամ ի տաւնի
6 սրբոց Քառասնիցն ով խափանէ դատի յԱյ

✻ *№ 9. Նախորդի տակ։*

1 + Յանուն Այ այս իմ գիր է Վասակա Կուտկտնս որ էտու ի(մ) զայգին վանիցս
2 յառաջնորդուրբե Յոհանիսի միջնորդուրբ Այ վկաուրբ ամէն եղբայրուրբիս
3 կամակցուրբ Աշոտս և Գրիգորս և Վաչէի և իւրեանց մաւրն և շունի իշխանուրբի
4 յԱյ հրամանացն զայն այգին յա(յ)ս ուիտէս նան-
5 ել ոչ յիմ ազգէ և ոչ յաւտարաց ոչ իշխան և ոչ ա[յ]-
6 լ ոք և որ ընդիմանայ և հանել —— զնա նզով-
7 եսցի և յաւիտենական փառա-
8 ց զրկեսցի և յետ մահուան
9 :Բ:ժամ յԱւագ Հինգշաբաթ
10 աւրն յիմ Վասակա յանուն արա-
11 սցեն ով խափանէ դատի յԱյ

✻ *№ 10. Մեծ եկեղեցու ներսում, հյուսիսային պատի վերևում.*

1 + ես Ալֆան դուստր Գրի[գ]որս որդ Վա[խր]ամնգա քոռն Սա..եաց
2 ըստ հրա(ման)ին Այ բերե(ա)լ եղա ի տո(ւ)նս Կոմ-անիձորս Միջնաշինի
3 յամուսնո[ւ]թե քոռին ն[ո]ւրա Վասակա [բար]էպաշտ իշխանի և [ի]նձ
4 (ը)ստ մեղաց իմ արար ինձ Տր այլ ետ գա[ակ] գեղնցիկմ ըստ ոյնմ
5 էք(է) որդիմ — որպէս նորատունկ Ա:և ես [մե]ծաւ յուսով միաբանեցա
6 սբ Ածածնիս յառաջնորդուրբե հաւր Ելա[թի և այլ միաբանացս և սամ
7 էտուն ինձ ի տարին:Գ:ժամ ի տաւնի սրբոյ Հռիփսիմեանցն:ով
8 խափանէ դատի ի Տէ

Տ-րդ տարբում «նորատունկ» բառից հետո փոքրագրված է Ջ, որից հետո գրված է դուրդ կետ։ Միարդ պարդ չէ, թերևս թվագիր լինի (86)։ Այդ դեպքում ուշատուն նորատունկ որդիներ (?!) կհասկացվի։ Այդ գրի ուղղությունը և նշանները հատկապես կրկին անգամ ստուգված է։

№ 11. Նույն տեղում, Ճախորդի տակ, մի հողմահարված քարի վրա.

1 Կամաւ Այ այս գիր յիշատակի վս Գայլի...որ միաբան-
2 եցաւ և ետ գ...տեսնն և այլ ոսկի ի սբ Աստծինս յառ-
3 [աջնորդութե].... արիխաթի եղբաւր իւրս և ինքն սրախող
4 .....[կ]ենաց և արդ կայ ի դուռն Աստծնիս
5 ....տուաք ... տարին:Դ:ժամ ի կիրակէի որ սբ
6 ....Գրիգորս ...ւն կատարի յԱղուանացքն ով
7 խափանէ դատի յԱյ

№ 12. Նույն տեղում, Ճախորդի տակ.

1 ես Անա..... խաքուանս ամուսին Գայլին որդոյ
2 Գրիգորոյ որդս Կուտկանին ետու ի սբ Աստծինս զոսկի զեղեռն
3 իմ և այլ արդոյնեցի յառաջնորդութե (—) եաւր Դաւթի և այլ միաբ-
4 անացս և սոքա ետուն [ինձ ի] տարին.Գ.ժամ ի տաւնի սրբոյն Գրիգորի
5 որ Աղուանացքն կատար[ի ով] խափանէ դատի ի Տէ

№ 13. Նախորդից ցած, հյուսիսային խորանին մոտ.

1 Կամաւ Այ ես Դաւիթ
2 և միաբանքս գրեցաք
3 Ա տաւ ժամ...ն որ ետ ոսկի
4 գին սբ եկեղեցոյս և տուաք
5 մեր .... Գրիգորի կի-
6 ս[կէին] ....ջին և .Աւիր
7 [ս]դա ....ջանին ո-
8 ր խափանէ դատի Այ.:.

1. 5-րդ շարքի սկզբի ամբողջ բառը կամ բառամասը, որ վերծանված է դրերի հետքերով, կասկածելի է։

2. 7-րդ շարքի սկզբի առաջին բառի Տ դրի ստորին մասը պահված է, բայց հակառակ դրությամբ, նման Շ դրի ստորին կեսին։ Տ դիրը նույն ձևով (շրջված) փորագրված է նաև № 11 արձանագրության 9-րդ շարքի ցղատիպ բառում։

№ 14. Ճախորդից ցած, ժամատան մեջ բացվող մուտքի մոտ.

1 + ՈՀԳ քուի
2 յառաջնոր-
3 դութե Դաւթի
4 գրեցաւ:Բ:պա-
5 տարագ ի տար-
6 ին երեւման
7 խաչին նաւգր-
8 ի քանանայի
9 որ խափանէ դատի

№ 15. Նախորդից աջ.

1 Համբարձումն աւրն
2 մին պատարագ Ստե-
3 փանոսի քահանայ-
4 ի է որ խափանէ դատի
5 յԱյ

№ 16. Հյուսիսային վերին խորանի արևմտյան պատին։ Արձանագիր քարի երեսն ապիտավիցրած է, գրերի փոսերը կարմրադեղով ներկված.

1 Ես Վասակ իշխան քոռն Կուտկանին
2 եռու յեկեղեցիս.Զ.դանեկան։ առ-
3 աջնորդս Դաւիթ և միաբանիս
4 եռուն ինձ ի տանի Վարդանանց.Դ.
5 ժամ ով խափանէ իմ մեղացն տէր է

№ 17. Հյուսիսային ցածի խորանի մուտքի ճակատաքարի վրա.

1 Ես Խարտէշիկ և ամուսին իմ Բան-
2 ան մեծ յուսով միաբանեցայ
3 Ա՛ծածնիս նայ(այ) ընչիւ և նանապ-
4 ազ արդեմ Դաւիթ և այլ միաբանիս
5 էտուն մեզ ժամ զամեն եկեղեցիս Թոդորոսկ
6 անն կիր
7 ակէն ով

1. «Բանան» անունը կարելի է կարդալ նաև «Բանուանա»։
2. 3-րդ շարքի «հայայ» բառի տեղում փորագրված է ՀԱՅ։ Հավանական է, որ փորագրիչը բաց է թողել առաջին Ա-ի նիշը և Ա վերլավորությունը։
3. 4-րդ շարքում «և այլ» բառերը միացյալ մի գիր են կազմում։
4. 5-րդ շարավերջի «Թոդորոսկ» և 6—7-րդ շարքերի բառերը փորագրված են արձանագրությանը կից բարձրացող մույթի կողին։ Արձանագրության վերլավորությունը պակասում է։

** № 18. Մեծ եկեղեցու բեմի ճակատին, աստղաձև քանդակազարդելիից մեկում, նավի մեջ կանգնած մի մարդու նկարից աջ, փորագրված է.*

1 երի-
2 տաս-
3 արդ

** № 19. Հարավային վերին խորանի մուտքից ձախ՝ պատին.*

1 Այս մեր գիր է Դաւթի և այլ միաբ-
2 անացս որ տուաք Գրիգորս որ ետ ոսկի
3 ի գին եկեղեցոյս ոսկի և տուաք.Ա.
4 աւր ժամ ի տանի սբ Գրիգորին ով
5 խափանէ զատի ի Տնէ

№ 20. Հարավային ցածի խորանի մուտքի ճակատաքարի վրա.

1 + :Կամաւ (—) Այ ես Դավիթ առաջնորդ (—) սբ
2 ուխտիս կամակցու�բ եղբարցս գրեց-
3 աք գՏնընդ(առ)աջն աւրն զամէն եկ-
4 եղեցիս որ.Վարճամա լին(ի) պատար-
5 ագ որչափ ի շինուրբ սբ ուխտս
6 ով խափանէ դատի յԱյ կատար-
7 իչքն աւրնին։

№ 21. Հարավային պատի վրա, խորանին կից.

1 + Յանուն Այ այս մեր գ-
2 իր է Դաւթի և այլ միաբ-
3 (ան)ացս որ առաք Լիպարտի
4 և ամուսնոյ իւրոյ որ եկի-
5 ն յուսով և միաբանեցան ե-
6 ւ էառն ի գին եկեղեցոյ-
7 ս ոսկի և մեք առաք նո-
8 ցա սբ Գրիգորին կիրակէ-
9 ն աւրն։Ա. պատարագ ով
10 խափանէ նոցայ մեղաց-
11 ն տր է։

№ 22. Նախորդի տակ.

1 + Անուամբն Այ այս մե-
2 ր գիր է Դաւթի և այլ միաբան-
3 ացս որ գրեցաք վս Յովսիփ-
4 ա որ ետ ոսկի ի գին եկեղեց-
5 ոյս և մեք առաք.Ա.պատար-
6 ագ ի տաւնի Քառասնիցն

№ 23. Նախորդի կողքին, աջից.

1 +| Յանուն Այ այս մեր գիր
2 Դաւթի և այլ միաբանացս
3 յորժամ ետ Պաւղոս ոսկի յեկ-
4 եղեցիս։յաղաքս Վարդանա և Սար-
5 գսի։և մեք առաք նոցա։Ա։պատ-
6 արագ ի տաւնի Վարդանանցն կատարիչ-
7 քն աւրհնին յԱյ

№ 24. Հարավային պատի վրա, խորշից աջ.

1 Այս մեր գիր է Դաւթի և այլ միաբանացս
2 որ է գրեցաք սք տիր Սարքսի որդոյն Հաս-
3 ան ի տարումն։Բ։ժամ ի տաւնի Խաչ-
4 ի նայրապետին.ով խափանէ
5 դատի ի Տեէ

2-րդ շարքում «աջ» բառամասնիկը հավանաբար փորագրչի սխալով կրկնություն է նախորդ «գրեցաք» բառի վերլավորության, ըստ որում այդ մասնիկի «ք» գիրը փոքրագրված է փոքրիկ խաչի ձևով։

(Շարունակելի)

Ա. ԵՐԵՄՅԱՆ

164 ՏԱՐՎԱ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻ ԿԱՐԵՎՈՐ ՀՐՈՎԱՐՏԱԿ

Հայ հրովարտակներ, որոնք իրենց բովանդակությամբ պատմական մեծ արժեք են ներկայացնում և հայ ժողովրդի պատմության համար թանկագին վավերագրեր են։ Այդ հրովարտակները շատ անգամ պարզում են նաև հայ և հարևան ժողովուրդների անցյալում ունեցած փոխհարաբերությունները և երբեմն էլ լուսաբանում են պատմության վերաբերյալ մութ մնացած որոշ էջերն ու թվական տվյալները։

Այս տեսակետից ուրույն արժեք է ներկայացնում Վրաստանի Թամրազ արքայի որդի Հերակլ Բ. թագավորի հրովարտակը, որ 164 երկար տարիների անցյալ ունի և իր ներքին բովանդակությամբ ընդգծում է Հերակլ արքայի հայ ժողովրդի հանդեպ ունեցած համակրական զգացմունքը։

Դա այն դարաշրջանն է, երբ տաղանդավոր աշուղ Սայաթ-Նովան սիրվում և հարգվում է վրացական արքունիքում։ Հերակլ Բ. արքան նրան ընդունում է պալատ՝ որպես երգասաց աշուղ, ուր, սակայն, նա երկար չի մնում (1750—1765 թ. թ.). ընդհարվում է արքայի ու ազնվականության հետ և պալատից արտաքսվում։ Այդ առիթով գրած մի ոտանավորով Սայաթ-Նովան տուր հեգնանքի է ենթարկում թագավորին։

Ահա այս արքայի հրովարտակի ճակատին կարդում ենք, գեղեցիկ կերպով իրար ներդաշնակված, Հ. Ա. Վ. գլխատառերը, որոնք պատկերում են՝ Հերակլ արքա Վրաստանի, իսկ ներքևում, արքայական կնիքի հետ, դրոշմված է 1790 թվականը։ Այդ այն ժամանակն էր, երբ Վրաստանն ապրում էր իր ավատական պետականության վերջին շրջանը։ Անհրաժեշտ էր Վրաստանի քաղաքական և տնտեսական կյանքն ամուր պատվանդանի վրա դնել։ Այդ հանգամանքը խորապես դիտակցում է Հերակլ Բ. արքան և ամեն կերպ աշխատում համախմբել, կազմակերպել հայ-վրացական ազատասեր շրջանները ընդդեմ սպառնացող վտանգի։ Այդ նպատակով է, որ 1790 թվականի դեկտեմբերի 4-ին, Թիֆլիսում գրած իր հրովարտակով դիմում է հեռավոր երկրներում ապրող բոլոր հայերին, որոնք օտար իշխողների, հատկապես Նադիր Շահի, բռնության շրջանում հարկադրված թողել են իրենց տունն ու տեղը և դաղթել տարբեր աշխարհամասեր։ Հերակլ Բ. արքան օտարության մեջ ապրող հայ ժողովրդի զավակներին կոչ է անում՝ վերադառնալ իրենց հարազատ երկիրը և խոստանում է արքայական ամեն տեսակ հովանավորություն և կյանքի, ստացվածքի և պարտքերի կատարյալ ազատություն, իսկ այդ բոլորի փոխարեն առաջարկում է վճարել միայն եկամտային և մաքսային այն հարկերը, որոնց ենթակա էին նաև վրացիները։

Հերակլ Բ.-ի հրովարտակի բովանդակությունը թե ի՞նչպիսի տպավորություն է թողնում օտար երկրներում ապրող հայ ժողովրդի վրա և իսկապես նրանք վերադառնո՞ւմ են Անդրկովկաս, այդ մասին չունենք ցայտուն և պերճախոս տվյալներ։ Մի հան-

դամանք, սակայն, պարզ է, որ ժամանակի պատմական դեպքերը Վրաստանի քաղաքական կյանքն այլ կերպ են դասավորում։ Հերակլ Բ. արքան խորապես գիտակցում է, որ միակ ուժը, որ կարող է օգնություն հասնել Վրաստանին, այդ Ռուսաստանն է, ուստի և դիմում է նրան։ Բայց այդ երևույթը ևս չի կարողանում փրկել արքայի գերիշխանությունն ու Վրաստանի անկախությունը։ Հրովարտակից ուղիղ հինգ տարի անց՝ 1795 թվականին Աղա Մահմադ խանը պաշարում է Շուշին, ապա աշնան սկզբներին յարձակվում Վրաստանի վրա։ Հերակլն իր զորաբանակով մի որոշ դիմադրություն ցույց տալուց հետո փախչում է, իսկ պարսկական զորքը մտնելով Թիֆլիս, ամբողջ երեք օր անզեն և անպաշտպան ժողովրդին կոտորում է ու թալանում, ապա 16.000 ուղտեր տուն աղջիկներ գերի վերցնելով՝ ուղարկում է Պարսկաստան։ Ահա այդ ժամանակ, 1795 թվականի արշավանքին, զոհ է գնում նաև հայ աշուղական դրականության վետերան՝ միաժամանակ արքայի պալատական աննման երգիչ (1750—1765 թ. թ.) և տաղանդավոր բանաստեղծ Սայաթ-Նովան։

Սակայն, քաղաքական նոր դեպքերը շուտով Անդրկովկասում առաջ են բերում նոր փոփոխություններ։ Ռուսական բանակը մտնում է Վրաստան և 18-րդ դարի վերջում պարսկական Հայաստանի մի կարևոր մասը և Վրաստանը վերջնականապես ասնում իր գերիշխանության ներքո։

***

Այստեղ ընդգծենք մի կարևոր հանգամանք։ Անցյալում հայ ազատագրական շրջանները սերտ փոխհարաբերության մեջ են գտնվել Վրաստանի հայրենասեր շրջանների հետ։ Նրանք ո՛չ միայն սերտ կապ են պահպանել Հերակլ արքայի հետ, այլև արծարծել են ազատության գաղափարը։ Այդ տեսակետից թանկագին մի վավերագիր է Մադրասի հայ հայրենասերների պայծառ դեմքերից բխիկ նոր-ջուղայեցի «Շահամիր Սոլվթանում Շահամիրյանի նամակը Հերակլինս»[1]։ Այդ նամակից պարզ երևում է, որ Հերակլ արքան առանձնապես սիրել և հարգել է Շահամիրյանին, որին շնորհել է նաև իշխանի կոչում, իսկ իր գրած հրովարտակը, հատուկ պատգամավորների հետ, Թիֆլիսից ուղղակի նրան է ուղարկել Մադրաս։ Նույնիսկ տարիներ հետո Շահամիրյանին նվիրել է Լոռու ամբողջ շրջանը։

Շնորհիվ այդ սերտ կապի՝ Շահամիրյանը Հերակլին գրած նամակում առաջարկում է՝ ժողովրդի ուսերի վրայից վերացնել «ծառայական սիստեմը»։ Իր ժամանակի նահապետական պայմաններում դա խիստ ուշագրավ մի երևույթ է։ Այդ տեսակետից բնորոշ են նամակի հետևյալ տողերը. «Մահմանիր քեզ համար օրենք,— գրում է նա Հերակլին,— և քո հովանավորությունը ցուցադրիր բոլորի նկատմամբ. թեթևացրու նրանց բեռը, քաղցրացրու նրանց լուծը, ջարդիր ծառայական սիստեմը, որը թող չծանրանա քո ժողովրդի ուսերին, դարձրու նրանց միայն ծառայող օրենքի առաջ, դուրս հանիր նրանց ծառայական վիճակից ազատ վիճակի, որը պատշաճ է մարդկային բնավորությանը»[2]։

Կա ուշադրության արժանի մի այլ պատմական երևույթ։ Հեռու Մադրասում ապրող լավագույն հայրենասերները վերլուծելով պատմական անցյալը, եկել են այն եզրակացության, որ հայ և վրացի եղբայրակից ժողովուրդները պետք է միասնական ուժով պայքարեն իրենց ազատության և անկախության համար[3]։

Ավելի ուշագրավն այն է, որ Մադրասի կրոնափարական հայրենասերները հայ ժողովրդի և Հայաստանի ազատագրության գաղափարը ներդաշնակել են ոչ միայն վրաց Հերակլ թագավորի հետ, այլ դրել.են, որ Մեծ Ռուսաստանի հովանավորությամբ միայն հնարավոր է Հայաստանի և Վրաստանի ազատագրությունը հաստատուն պատվանդանի վրա դնել։

---

1. Տե՛ս Լեո, «Հայոց պատմություն», Գ. հատոր։
2. «Շահամիրյանի նամակը Հերակլին», «Փորձ», 1881 թ., № 2, էջ 26։
3. Տե՛ս «Պատմութիւն մնացորդաց Հայոց և Վրաց», Մադրաս, 1775 թ.։

էականը, սակայն, ոչ թե պատմական դեպքերն են, այլ հրովարտակի բովանդակությունը, որ ուշագրավ է մի քանի տեսակետից.

1) Պարզում է հայ և վրացական ժողովուրդների փոխհարաբերության մի ուրույն էջը։

2) Ընդգծում է Նադիր Շահի՝ ժողովրդի վրա գործադրած բռնությունները և հայության ակամա դաղթը դեպի հեռավոր երկրներ։

3) Լուսաբանում է հայ ժողովրդի ազատագրական պատմության մի բնորոշ էջը։

4) Ցայտուն գաղափար է տալիս Հարություն քահանա Շմավոնյանի հայրենասիրական ոգացմունքի մասին։

Նշենք և այն, որ 1790 թվականի դեկտեմբերի 4-ին Վրաստանի մայրաքաղաքում՝ Թիֆլիսում, վրացերեն լեզվով գրած Հերակլ Բ.ի հրովարտակը, արքայի հրամանով, վրացերենից հայերեն է թարգմանում թագավորի հայ գրագիր և թարգման Տեր Դավիթ Տեր-Հոհանյանը և ուղարկում է գաղութներում ապրող հայերին։

Ուշագրավ է և այն, որ հրովարտակի բովանդակությունը, երկու տարի անց, 1792 թվականին, գրավում է հայ լրագրության հիմնադիր Հարություն քահանա Շմավոնյանի լուրջ ուշադրությունը և նա, հայ ժողովրդի աղատագրության վեհ գաղափարով տոգորված, Մադրասի իր տպարանում հրովարտակը մի հաղար օրինակ տպագրելով՝ ցրվում է Հնդկաստանի և այլ վայրերի հայ ժողովրդի մեջ։

Այժմ այստեղ նույնությամբ առաջ բերենք պատմական հրովարտակի բովանդակությունը.

ՀԱՎ

Օրինակ Հրովարտակի Շնորհաց և Պանպանության Ազատության Տեառն երկրորդ ՀԵՐԱԿԼԱՅ Շնորհօքն Աստուծոյ Թագաւորին Վրաց՝ Կախից՝ և՝՝ և՝՝ առնասարակ լեզու Հայոց։



ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍ ՄԵՔ ՅԵՍՍԵԱՆ ԴԱՒԹԵԱՆ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ, ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՆ։ ՕՏԵԱԼ ԹԱՄՐԱՋ ԱՐՔԱՅԻ ՈՐԴԻ ՀԵՐԱԿԼ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՔԱՅ ՎՐԱՑ, ԿԱԽԻՑ, ԵՒ ԱՅԼՈՑ, ԵՒ ԱՅԼՈՑ, ԵՒ ԱՅԼՈՑ։



անփոփոխելի գխոստմունս զայս առամեցամ առ ճամայն ազգս հայոց, որ բնակեալ էր ի հեռաւոր երկիրս, զոր ոչ եմ մոռացեալ գժառանգութիւն ձեր, այլ միշտ ունիմ տարածեալ գձոց, առ պահպանութեան ձերոյ, անորոշ ի հատէ մերմէ. և երբ ժողովիմ ի բնիկ երկիրս ձեր ի հերոյ հովանաւորութեան մերոյ, ընկալուք զիմբենգլուխ կենցաղավարութիւնս ի վերայ ամենայն սուայուուածոց ձերոց. զոյով ունեցօղք ի մէջ սիրոյ պատուոյ, և ողորմութեան. ըստ իրաւանցիր պատուոյ. որպէս բնիկք ժողովուրդքն մերոյս ԱՐՔԱՅՍԻԹԵԱՆ, և ազգն վրաց և մեք միայն բաւականանամք ի ձէնջ ի մերս շանեցողութիւն հարկիս և մամսիս, ըստ ԱՐՔԱՅԱԿԱՆ Օրինի։ Իսկ այլով կերպիս խոստանամք զողորմութիւնս զայս. որովհետև գիտեմ զի փոփոխութեամբ երկայն ժամանակաց. և յատկապէս ի ժամանակս Նադիր Շահին, ազգք ձեր որք բնակեալք էին ի Պարսս, կոխեցան և կողոպտեցան, և ընդդէմ կամաց իւրեանց անիրաւաբար յաւիշտակեցին զբստացուածս նոցին, և բազումք պարտաւորեցան ակամա՛յլ. և բոնի գձեռագիրս և գսահարս առին, և սոյնպիսի նեղսակութիւն հարկադրեաց գնայ ի հեռագոյն երկիրս։ Սմին իրի՝ նաստարակապէս շնորհեցաւ ի մէջ, սոյնպիսի արանց պարտուց ազատութիւն, զի յառաջ քան զնազար հօրն հարիւր և հօրաճասուն թիւն Փրկչին մերոյ Քրիստոսի, ուր ուրեմ այդպիսի գրուածք որոյ անուամբ և յայտնեսցի ի

յերեսն երկրի, կամ ի Պարսիկս, կամ ի Ադիրբէյան, երէ ի Մաղամս, երէ ի գիտցուրեայս զամենայնն տնարժան և տնբնդունակ արարաք, զի մի՛ երբէմ մոցէ այն ի յիրաւարանս մեր, և ոչ ևս ունիցի տեղիք պարտատէրն պահանջելոյ յայնպիսի արանց, որոյ աղագաւ ի հաստատութիւն խոստմանս մերոյ ձեռնագրեմք յատուկ ձեռամբ մերովք, ի Պալատան մերում ի մայրաքաղաքս Թիֆլիզ ի ժամանակի ԱՐՔԱՅՍԻԻԹԵԱՆ մերոյ: Յամի Տեառն 1790: Ի դեկտեմբերի Վ:

Կնիք արքայական

Հրամանաւ Նորին ԱՐՔԱՅԱԿԱՆ Բարձրութեան, ընդ վրացերէն նախատպին համաձայն թարգմանեցի և գրեցի, Նորին ԱՐՔԱՅԱԿԱՆ Բարձրութեանն հայերէն գրագիր և թարգման Տէր Դաւիթ Տէր Յովհաննէսեան։

Թ նոյն բարգմանչին

Տպագրեցաւ ի մայրաքաղաքն Մադրաս ի տպարանի Տէր Յարութիւն Շմաւոնեան Շիրազցւոյ, հաշար հատ ի վայելումն Ազգին Հայոց, Յամի Տեառն մերոյ 1792։

Ո՛վ գիտե, դեռ քանի՞-քանի՞ նման արժեքավոր վավերագրեր ընկած են շատ տնեերի դարակներում։ Անհրաժեշտ է այդ համար, բայց թանկագին փաստաթղթերը հանձնել հայ մատենադրությանը, որոնց շնորհիվ միայն հնարավոր է գրել հայ ժողովրդի հարազատ և ստույգ պատմությունը։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ Ա-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ.— Մարտի երկրորդ կեսին Երևանում տեղի ունեցավ Հայաստանի կերպարվեստագետների Ա-րդ համագումարը։ Համագումարի աշխատանքներին մասնակցելու համար հրավիրված էին Մոսկվայի, Վրաստանի և Ադրբեջանի մի խումբ արվեստագետներ։ Առաջին նիստը հակիրճ ճառով բացեց ժողովրդական նկարիչ, Ստալինյան մրցանակի լաուրեատ Մ. Մարյանը։

Կերպարվեստագետների միության վարչության զորությունության մասին հաշվետու զեկուցումով հանդես եկավ ռեսպուբլիկայի ժողովրդական նկարիչ Գ. Գյուրջյանը։ Բացի այդ, համագումարը լսեց միության պատասխանատու քարտուղար նկարիչ Ռ. Գարսամյանի զեկուցումը՝ Հայաստանի կերպարվեստագետների խնդիրների մասին։

Զեկուցումների շուրջը բացված մտքերի լայն փոխանակումներ մասնակցեցին շատ արվեստագետներ։ Նրանք նշեցին, որ վերջին տարիների ընթացքում Սովետական Հայաստանի կերպարվեստագետները հասել են ստեղծագործական հաջողությունների հատկապես գեղանկարչության ասպարեզում՝ ստեղծելով մի շարք բարձրարժեք գործեր։ Ասպարեզ են եկել երիտասարդ տաղանդավոր արվեստագետներ։ Սրա հետ միասին նշվեց, որ տակավին ետ են մնում գրաֆիկան ու կիրառական արվեստը, որի զարգացման վրա կերպարվեստագետների միությունը պետք է որ հատուկ ուշադրություն դարձնի։

Համագումարի մասնակիցներն ընդունեցին բանաձև, որով նախատեսվում են մի շարք միջոցառումներ Սովետական Հայաստանի կերպարվեստի հետագա զարգացման ուղղությամբ։ Վերջում տեղի ունեցան Կերպարվեստագետների միության վարչության ընտրություններ։ Վարչության նախագահ ընտրվեց ժողովրդական նկարիչ Գ. Գյուրջյանը, պատասխանատու քարտուղար՝ նկարիչ Է. Խաչիկյանը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԺՇԿՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ.— Սույն թվականի մարտի 23—25-ը Երևանում տեղի ունեցավ Հայաստանի գյուղական բժիշկների Ա-րդ համագումարը, որին մասնակցում էին նաև բժշկական գիտա-հետազոտական հաստատությունների և առողջապահական հիմնարկների ներկայացուցիչներ։ Համագումարը լսեց և քննարկեց առողջապահության մինիստր Ա. Երիմյանի զեկուցումը բնակչության բուժսպասարկման գործի բարելավման միջոցառումների և Հայաստանի բժշկական աշխատողների խնդիրների մասին։

Զեկուցման շուրջը բացվեց մտքերի աշխույժ փոխանակություն, որին մասնակցեց ավելի քան 30 մարդ։

Համագումարը նշեց, որ շնորհիվ կառավարության բացառիկ հոգատարության, տարեցտարի բարելավվում է գյուղական բնակչության բուժսպասարկման գործը, ընդարձակվում բուժհիմնարկների ցանցը։ Սկսած 1950 թվականից ռեսպուբլիկայում կառուցվել է գյուղական 44 նոր հիվանդանոց։ Գյուղական հիվանդանոցներում մահճակալների թիվն ավելացել է 454-ով։ Բարելավվել է հիվանդանոցների կահավորումը, հիվանդների սնունդը, բուժման որակը։ Բայց և այնպես բուժսպասարկման գործում դեռ կան որոշ թերություններ՝ հատկապես հեռավոր լեռնային շրջաններում, որոնք դեռևս լրիվ չափով ապահովված չեն բժշկական համապատասխան գործիքներով և այլն։

Այս թերությունները վերացնելու համար համագումարը մշակեց մի շարք միջոցառումներ։ Համագումարի մասնակիցները ցանկություն հայտնեցին Երևանի բժշկական ինստիտուտին կից ունենալ գյուղական բժիշկների կատարելագործման ֆակուլտետ, ինչպես և անհրաժեշտ համարվեց հրատարակել առողջապահական հարցերին նվիրված հանդես։

ԴԻՏԱԿԱՆ ԱՌՈՒՂԱԿՑՈՒԹՅՈՒՆ.— Մարտի վերջերին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում կայացավ բամբակենու հիվանդությունների դեմ պայ-

քարելու հարցերին նվիրված համամիութենական խորհրդակցություն, որը հրավիրվել էր Համամիութենական գյուղատնտեսական ակադեմիայի կողմից։ Խորհրդակցության աշխատանքներին մասնակցեցին Մոսկվայի, Լենինգրադի, Կիրովաբադի, Դոնի Ռոստովի, Բաքվի, Երևանի գյուղատնտեսական գիտա-հետազոտական հաստատությունների ներկայացուցիչները։

Լսվեցին մի շարք զեկուցումներ, այդ թվում նաև Հայաստանի գյուղատնտեսության մինիստրի տեղակալ Գ. Ազարյանի զեկուցումը, բամբակենու վնասատուների դեմ տարվող պայքարի արդյունքների մասին։ Խորհրդակցությունը հանդիսավորապես բերեց այդ ուղղությամբ տեղերում տարվող աշխատանքների փորձը և մշակեց մի շարք միջոցառումներ բամբակենու վնասատուների դեմ պայքարելու համար։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ.— Տեղի ունեցավ Հայաստանի մարտարապետների միության վարչության ընդլայնված նիստը՝ նվիրված գյուղական շինարարության հարցերին։ Բացի մարտարապետներից, հարցի քննարկմանը մասնակցեցին ինժեներներ, գյուղատնտեսության մասնագետներ, կոլտնտեսային աշխատողներ, որոնք հատկապես հրավիրված էին մասնակցելու այդ նիստին։

Նշելով, որ գյուղերում կառուցվող բազմապիսի կառույցների նախագծման և կենսագործման բնագավառում դեռևս կան դպրի թերություններ, մարտարապետների միության վարչությունը, հաշվի առնելով տեղական աշխատողների բազմաթիվ արժեքավոր դիտողություններ, մշակեց միջոցառումներ՝ գյուղական շինարարության գործի բարելավման ուղղությամբ։

ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ ՀԱՅԿԱՆՈՒՆ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԾՆԵՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԸ.— Երևանի արվեստի աշխատողները նշեցին հայկական օպերային արվեստի ականավոր դեմքերից մեկի, Սովետական Միության ժողովրդական դերասանուհի, Ստալինյան մրցանակի լաուրեատ Հայկանուշ Դանիելյանի ծննդյան 60-ամյակը։ Անխոնջ արվեստագետը խոշոր ծառայություններ է մատուցել հայկական երաժշտական կուլտուրայի, հատկապես Երևանի օպերային թատրոնի զարգացմանը։ Ներկայումս Հ. Դանիելյանն աշխատում է Կոմիտասի անվան կոնսերվատորիայում՝ իր ամբողջ ուժերը նվիրելով երիտասարդ սերնդի երաժշտական դաստիարակության գործին։

Հոբելյանական հանդիսավոր երեկոյին ականավոր դերասանուհուն ողջունեցին Հայաստանի հասարակական, գրական կազմակերպությունների, թատրոնների, երաժշտական հասարակայնության ներկայացուցիչները։ Ստացվել էին ողջույնի բազմաթիվ հեռագրեր Մոսկվայի, Կիևի, Թբիլիսիի, Բաքվի երաժշտական հաստատություններից, ինչպես և առանձին գործիչներից։

Շնորհակալական ջերմ, սրտառուչ խոսքով հանդես եկավ հոբելյարը։

Վերջում կայացավ ճոխ համերգ, որին մասնակցեցին Երևանի լավագույն արտիստական ուժերը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏԱ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ.— Լրացավ Հայաստանի հնագույն բժշկական գիտա-հետազոտական հաստատության՝ Մայարիայի և բժշկական պարազիտոլոգիայի ինստիտուտի 30 տարին։ Իր գոյության երեք տասնամյակների ընթացքում ինստիտուտը հնկայական աշխատանք է կատարել Մայարիայի՝ երբեմնի այդ խոշորագույն չարիքի դեմ մղված պայքարում։ Ինստիտուտի ջանքերի շնորհիվ, պետության կողմից ներ առնված էական միջոցներով ներկայումս Հայաստանում գրեթե ամբողջովին վերացված է մայարիան։

Նշանակալից տարեթվի առթիվ տեղի ունեցավ ինստիտուտի հոբելյանական սեսիան, որին ներկա էին Մոսկվայից, Խարկովից, Թբիլիսիից, Աշխարաղից հրավիրված հյուրեր։ Ինստիտուտի 30-ամյա գործունեության մասին զեկուցում տվեց ինստիտուտի դիրեկտոր՝ բժշկական գիտությունների թեկնածու Ա. Մատուրյանը։ Սովետական Միության Բժշկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ պրոֆեսոր Ա. Սերգեևը զեկուցում կարդաց պարազիտային հիվանդությունների դեմ պայքարելու հեռանկարների մասին։ Սեսիայում ընդամենը լսվեցին 22 զեկուցումներ։

ՆՈՐ ԿԻՆՈՆԿԱՐՆԵՐ.— Հայաստանի, ինչպես և Սովետական Միության մյուս վայրերի կինոթատրոնների ցուցադրվում է «Լենինյան լեհ գաղտնիքը» գեղարվեստական գունավոր նոր ֆիլմը, որն արտադրել է Երևանի կինոստուդիան։ Ֆիլմը նկարահանված է ըստ Վ. Անանյանի «Անանի ափին» հայտնի վիպակի բովանդակության։

Ներկայումս Երևանի կինոստուդիան նկարահանում է երկու այլ ֆիլմեր, որոնցից մեկը՝ «Սովորները հեռանում են դպրոցներից» նվիրված է երկրաբանների աշխատանքներին, իսկ մյուսը՝ հայկական երգի ու երաժշտության ֆիլմ-համերգ է։

Լենինգրադի կինոստուդիան նկարահանել է «Ուրարտական պետության կուլտուրայի հուշարձանները» գունավոր գիտական ֆիլմը։ Դա Լենինգրադի Պետական Էրմիտաժի (թանգարանի) համաշխարհային արժեք ներկայացնող հնություններ ցուցադրմանը նվիրված նկարաշարքի առաջին նկարն է։ Ֆիլմը նկարված է Երևանում, Կարմիր բլուրի մոտ, ուր գտնվում են ուրարտական ամրոցի ավերակները, որոնց պեղման աշխատանքները երկար տարիներից ի վեր վարում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, պատմական գիտությունների դոկտոր Բ. Պիոտրովսկին։

ՍՈՎԵՏԱ-ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՄԻԱՄՍՅԱԿ.— ՍՍՌՄ-ում անցկացվող Սովետա-Հունգարական միամսյակի կապակցությամբ Երևանի Արվեստի աշխատողների տանը կայացավ ճոխ երեկո, որը կազմակերպել էր Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերությունը (ԱՕԿՍ)։ Ներկա էին գրողներ, գիտության ու արվեստի աշխատողներ, հասարակական գործիչներ։ Երեկոն բացեց ընկերության նախագահ՝ գրող Գ. Սեմենցը։ Հունգարական ժող-

վերջական Ռեսպուբլիկայի կուլտուրական և տնտեսական նվաճումների մասին զեկուցեց Պետական համալսարանի ռեկտոր Դ. Պետրոսյանը։

Վերջում կայացավ ճոխ համերգ, որին մասնակցեցին Երևանի լավագույն արվեստագետները։ Նրանք մեծ վարպետությամբ կատարեցին սովետական և հունգարական երաժշտագետների գործերը։

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 15 ՏԱՐԻՆ.— Լրացավ Երևանի Երաժշտական տասնամյա դպրոցի գոյության 15 տարին։ Հիշյալ ժամանակամիջոցում դպրոցը տվել է ավելի քան 100 շրջանավարտներ, որոնց ճնշող մեծամասնությունը շարունակում է իր կրթությունը Երևանի և Սովետական Միության այլ քաղաքների կոնսերվատորիաներում։ Ներկայումս դպրոցի չորս բաժիններում (դաշնամուր, լարային, փողային և խմբական երգի) սովորում են 260 տղաներ և աղջիկներ։

ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Ընթացիկ 1954 թվականին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս է ընծայելու 126 անուն գիրք՝ 270.000 օրինակ ընդհանուր տպարանակով։ Հրատարակվելու են մի շարք հետաքրքիր աշխատություններ, որոնց թվում՝ «Ակնարկներ Սովետական Հայաստանի պատմությունից», «Մ. Նալբանդյանի կյանքի և ստեղծագործությունների տարեգիրքը», «Հին Հայաստանի ստրկատիրական հասարակությունը», ռուս-հայերեն մեծ բառարանի առաջին հատորը, Բյուրականի աստղադիտարանի աշխատությունները, «Հայաստանի բուսական աշխարհը» և այլն։

Նուրբ չորս տասնյակ անուն գրքեր է հրատարակելու Երևանի Պետական համալսարանը։ Դրանց թվում են Գ. Սևակի «Ժամանակակից հայ լեզուն» և Տ. Ղազանչյանի «Ակնարկներ քիմիայի պատմության վերաբերյալ Հայաստանում» աշխատությունները։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅԳԻՆԵՐՈՒՄ.— Կոլտնտեսային աշխատավորները սկսել են այգիների գարնանային մշակությունը, ինչպես և նորերի հիմնումը։ Այս տարի Հայաստանում 1.500 հեկտար տարածության վրա դցվելու են ծառապտուղի նոր այգիներ, որոնց գրաչի մասը նախալեռնային գոտու շրջաններում։ 1.000 հեկտարով ընդարձակվելու է խաղողի այգիների տարածությունը։ Արարատյան դաշտավայրից բացի խաղողի նոր այգիներ են տնկվելու Ալավերդու, Ռամշադինի, Իջևանի, Ազիզբեկովի, Թալինի շրջաններում։

ՑՈՒՂԻ ԵՎ ՊԱՆԻՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ.— Հայաստանի յուղի և պանրի գործարաններում սկսվել է ընթացիկ տարվա արտադրական շրջանը։ Այս տարի այդ գործարանները, անցյալ տարվա համեմատությամբ, 24 տոկոսով ավելի յուղ և 34 տոկոսով ավելի պանիր են արտադրելու։ Այդ ծրագիրը հաջողությամբ կատարելու համար գործարանները հագեցվել են նոր մեքենաներով ու սարքավորումներով։ Մի շարք շրջաններում կառուցվում են նոր գործարաններ։ Ներկայումս Հայաստանի յուղի և պանրի արտադրության գործով զբաղվում են 60-ից ավելի մանր ու խոշոր ձեռնարկություններ։

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ.— Հայաստանի գյուղատնտեսության կարևոր ճյուղերից մեկն է հանդիսանում շերամապահությունը։ Տնտեսության այդ ճյուղով զբաղվում են ռեսպուբլիկայի 13 շրջաններ։ Այժմ ամենուրեք այդ շրջաններում եռանդուն աշխատանք է տարվում շերամապահության ընթացիկ տարվա նախապատրաստման համար։ Այս տարի աճեցվելու է մի քանի հազար տուփ ավելի շերամորդ, քան անցյալ տարի։

Երևանի և Մեղրու գրաչային գործարանները ռեսպուբլիկայի կարիքները լրիվ ապահովելուց հետո, մոտ 30.000 տուփ գրաչա են ուղարկելու Ռայոնային, Մոլդավիայի և Ռուսաստանի մի շարք շերամապահական շրջանները։

Առանձին ուշադրություն է դարձվում թթենու զարգացմանը, որը շերամորդի համար միակ կերն է հանդիսանում։ Տարեցտարի ընդարձակվում է թթաստանների տարածությունը։ Այս տարի շերամապահական շրջաններում տնկվելու են մեկ և կես անգամ ավելի թթենիներ, քան անցյալ տարի։

ՄԻ ԳՅՈՒՂԻ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՆ.— Բազմիցս ասվել է եղել նշելու, թե կուլտուրական ինչպիսի վերածնունդ է ապրում ներկայիս հայկական գյուղը։ Ահա մի պերճախոս օրինակ ևս, որը վկայում է Սովետական Հայաստանի գյուղերի կուլտուրական անհնարին թռիչքը։

Վերջին 15 տարում Ախուրյանի շրջանի Այգեբաց գյուղի բնակիչներից 130 հոգի ավարտել են մանկավարժական ինստիտուտներ և տեխնիկումներ։ Նրանցից շատերն աշխատում են նույն շրջանում, իսկ մի մասը հայրենի գյուղում։ Հովիվ Համբարձումի Ջալյանը ունի 6 զավակ։ Նրանցից 5-ը ստացել են բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն և աշխատում են Ախուրյանի շրջանի գյուղերում։ Այգեբացի բնակիչներից շատերը դարձել են գյուղատնտեսներ, ինժեներներ, բժիշկներ, անասնաբույժներ, որոնք ներկայումս աշխատում են Հայաստանի տարբեր վայրերում, այդ թվում և Ախուրյանի շրջանում։

Այգեբացում կա միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 450 աշակերտներ և աշակերտուհիներ։ Այդ դպրոցի սաներից մոտ 150 հոգի այժմ սովորում են ռեսպուբլիկայի տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում և տեխնիկումներում։

ՀԱՆՔԱԳԱՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ.— Երևանի բազմապիսի արդյունաբերական ձեռնարկությունների թվում յուրահատուկ և հետաքրքիր տեղ է գրավում հանքագանգ խոշոր գործարանը։ Գործարանի հիմնական արտադրանքներից մեկը հանդիսանում են հանքագանգ և տոմնիքյա սալիկները, որոնց գործ են ածվում առողջապահական ու կենցաղային շենքերի ներսի պատերի, ինչպես և հատակների երեսապատման համար։ Այդ սալիկներից արտադրվում է այնքան, որ ոչ միայն բավարարվում են Հայաստանի պահանջները, այլև որոշ մասը ուղարկվում է Վրաստան ու Ադրբեջան։

Բացի այդ, հանքագանգ այստեղ պատրաստվում են առողջապահական և կենցաղային գործածության

զանազան իրեր, էլեկտրական հոսանքի մեկուսիչներ և այլ պարագաներ, որոնք գործ են ածվում էլեկտրական պիտույքների արտադրության ձեռնարկություններում։ Վերջերս գործարանը սկսել է պատրաստել հախճապակյա գեղարվեստական փոքրիկ արձաններ, սեղանի արդուզարդեր։

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՌԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ.— Տարեցտարի մեծանում և բարեկարգվում է Էջմիածին քաղաքը։ Այս տարի այդ նպատակի համար նախատեսված են զգալի գումարներ։ Ներկայումս կառուցվում են պետական մի շարք խոշոր բնակելի շենքեր։ Շուտով կկավի մի նոր բնակելի շենքի կառուցումը, որը բաղկացած է լինելու 30 բնակարանից։ Այս տարի պետությունը մոտ 1.000.000 ռուբլի բաց է թողել քաղաքացիներին անձնական բնակարաններ կառուցելու համար։ Կառուցվելու է 100 այդպիսի բնակարան։

Ընդարձակվում են գոյություն ունեցող արդյունաբերական ձեռնարկությունները։ Ընթացիկ տարում կկավի գյուղատնտեսական գործարանի կառուցումը։ Ավելանում է հասարակական շենքերի թիվը։ Արդեն ավարտվում է քաղաքային մեծ, երեքհարկանի հիվանդանոցի կառուցումը։ Առաջիկա մի քանի ամսում այն կհանձնվի օգտագործման։ Վերակառուցվում է կինոտեատրի տունը (նախկին ատոդագիտարանի կիսավարտ շենքը)։

Գեղեցիկ տեսք են ընդունում ծառազարդ փողոցները, որոնք հետզհետե ծածկվում են ասֆալտով։ Այս տարի բարեկարգվելու և մանանի չափով ասֆալտապատվելու են նոր բացված չորս փողոցներ։ Ընդարձակվելու են էլեկտրական լուսավորության և շրմուղի ցանցերը։

Բարեկարգվում ու գեղեցկանում է քաղաքային գրոտայգին, որի շուրջը կառուցված է գեղեցիկ ցանկապատ։ Ասֆալտապատված են ծառուղիները։ Գատարտվում են ծաղկանոցներ։ Շուտով այստեղ դրվելու են հայ մեծ լուսավորիչ Ս. Արովյանի և հոյակապ երաժշտագետ Կոմիտասի քանդակ-կիսանդրիները։

ՀԱՐՏԱՐԱՊԵՏ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵԿՈ.— Հայաստանի հասարակայնությունը նշեց հայ խոշորագույն ճարտարապետ Թորոս Թորամանյանի ծննդյան 90-ամյակը, որը լրացավ սույն թվականի մարտին։ Այդ առթիվ Երևանի ճարտարապետների տանը տեղի ունեցավ երեկո, որին ներկա էին մեծ թվով ճարտարապետներ, ինժեներներ, դիտության գործիչներ, գրականության և արվեստի աշխատողներ։

Երեկոն ներածական չեռմ խոսքով բացեց Սովետական Միության ճարտարապետության ակադեմիայի իսկական անդամ Ս. Սաֆարյանը։ Թորամանյանի կյանքի և գործունեության մասին զեկուցում տվեց ճարտարապետության թեկնածու Վ. Հարությունյանը։

Զեկուցողը նշեց, որ Թորոս Թորամանյանը հանդիսացել է հայ ճարտարապետության գիտական պատմության հիմնադիրը։ Նա անգնահատելի ծառայություն է մատուցել հայ ժողովրդի նյութական կուլտուրայի պատմության ուսումնասիրման գործին։ Սկսած 1903 թվականից նրա անմիջական մասնակցությամբ Անիում և Զվարթնոցում կատարվել են հայկական հին ճարտարապետության հոյակապ հուշարձանների պեղումներ։ Հայաստանի պատմական հուշարձաններին նվիրված իր աշխատություններում Թորոս Թորամանյանը ամենայն կրքոտությամբ պաշտպանել է հայկական ճարտարապետության ինքնուրույնությունը, ցույց է տվել ազգային ճարտարապետության ձևավորման ուղիները։ Սովետական իշխանության տարիներին Թորամանյանը գիտական աշխատանքի հետ միասին հասարակական բեղմնավոր գործունեություն էր ծավալել ճարտարապետական հուշարձանների պահպանության ուղղությամբ։ Զեկուցումից հետո ականավոր ճարտարապետի մասին իրենց հուշերը պատմեցին գրողներ Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը, ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը և պատմական գիտությունների թեկնածու Կարո Ղաֆադարյանը։

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈՂԱՏՅԱՆ

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ*

3 Նոյեմբերի, Երեքշաբթի.— *Ամբողջ օրը Ս. Էջմիածին անցուցի։ Ճաշեցի ուսանողներուն հետ և դասավանդութեանց ներկա եղայ։*

Ս. Էջմիածնի մեջ վերջին տարիներու ընթացքին կազմված է նոր Ձեռագրատուն մը, որ արդեն ունի հարիւրեւ ավելի ձեռագիրներ։ Մեծ մասը աչքն անցուցի. անոնց մեջ մասնավոր արժեք կներկայացնեն Գրիգոր Տաթեւացիի կողմե գրված մագաղաթյա ավետարանը և Սիմեոն կաթողիկոսի անձնական ձեռնագրութեան Մաշտոցը։

4 Նոյեմբերի, չորեքշաբթի.— *Կեսօրեն առաջ այցելեցի քանի մը բարեկամներու և հայրենակիցներու տուներ։ Կեսօրեն եւոք պարոն Հրաչյա Գրիգորյանի հետ գացի կերպասի գործարանը, որ հիմնված է 1951-ին և ունի մոտ 2.000 գործավոր։ Տնօրենը պատուցուց մեզ։ Բոլոր դույներով և ամեն տեսակի նուրբ բրդեղեն կտորներ կպատրաստվին թե՛ տարանց և թե՛ կանանց համար։ Տարեկան 2.000.000 քառակուսի մետր կերպաս կարտադրեն։ Հետո գացինք Մխախոտի գործարանը, որ ունի 900 գործավոր և տարեկան կարտադրե 250.000.000 տուփ սիգարետ, որոնց 80 առ հարիւրը կարտածեն։ Գացինք նաև Արարատ գործարանը, որ ունի 600 գործավոր. հիմա ավելի ընդարձակված է և կարտադրե տարեկան 10.000.000 լիտր դինի։*

5 Նոյեմբերի, հինգշաբթի.— *Ս. Էջմիածնի սրբութիւններեն Ս. Գրիգոր Լուսավորիչի, Արիստակես հայրապետի և Թադեոս առաքյալի աջերը նկարեցի, ինչպես նաև Քրիստոսի փուշե պսակեն մասունք մը և ա՛լ թանկարժեք իրեր։*

Արփիկ Մինասյանի հետ այցելեցի Երևանի հայոց նախկին դերեզմանոցը, որ 1934-են ի վեր զրոսայգիի վերածված է։ Հոս կգտնվի մեծ վարդապետը, հայ երգին վարպետը՝ Կոմիտաս, որուն դերեզմանին կմոտենամ իրրև սրբավայրի մը, կհամբուրեմ զայն ու «Հոգւոց» մը կարտասանեմ։ Իր շուրջը ամփոփված են ա՛լ մտավորականներ— Հովհաննես Հովհաննիսյան, Ռոմանոս Մելիքյան, Սպիրիտոն Մելիքյան, Լեո, Թորոս Թորամանյան, Ծպիշ Թադեոսյան, դերասան Հովհաննես Արելյան, Շիրվանզադե, Խնկոյաբեր, Վրթանես Փափազյան։ Բեյրութեն կճանչնամ վերջնուկս եղբայրը՝ Վահան Փափազյան։ Կրոցեմ մոմ մը իր եղբոր գերեզմանին վրա ու նույնպես «Հոգւոց» կարտասանեմ։ Մոմին մնացորդը հետս կառնեմ հանձնելու իրեն՝ իր եղբոր գերեզմանեն ի Մայր Հայրենիքեն իրրև հիշատակ խնկանվեր։

6 Նոյեմբերի, ուրբաթ.— *Հնությանց պահպանության կոմիտեի գրասենյակը գացի։ Ինարիկ՝ գրասենյակի քարտուղարուհին՝ բարի, գործունյա, ժպտադեմ, շենշող հայ օրիորդ մը, ինձի հանձնեց վերանորոգված բաղմաթիվ վանքերու պատկերները։ Իրմե իմացա, որ քանի մը ուրիշ հայ հնագետներու հետ շուտով պիտի մեկնի Գառնի՝ լու-*

---

* *Շարունակված ամսագրի 1954 թվականի մարտի համարից։*

սանկարելու համար այս շաբաթ գտնված սենյակի մը մոգաիկը՝ հունարեն տառերով։ Սիրտս անհուն հպարտությամբ լեցվեցավ՝ տեսնելով Քնարիկի նման պատվական հայուհիներ՝ նվիրված հայ մշակույթի ծառայության։

Կեսօրն ետք քեսաբցի քանի մը ընտանիքներու այցելեցի։ Ինձի նամակներ և նվերներ հանձնեցին՝ Քեսաբ գտնվող իրենց ազգականներուն և բարեկամներուն տալու։ Ամենքն ալ կարոտը ունին իրենց պարագաներուն։ Իրենցմե հրաժեշտ առնելուս առիթով՝ քեսաբցիներու հատուկ լավ պար մը ալ պարեցին։

Արտակարգ եռուզեռ կտիրե այսօր Երևանի մեջ։ Ամբողջ քաղաքը դրոշազարդված է։ Ժողովուրդը խռնված է շուկաներուն մեջ գնումներ ընելու համար։ Ամեն ոք ուրախության մեջ է. Հոկտեմբերյան հեղափոխության նախատոնն է։ Երեկոյան Ֆիլհարմոնիայի շենքին մեջ մասնավոր հանդիսություն կա. մենք ևս հրավիրված ենք։ Գացինք. մասնավոր օթյակ մը հատկացված է մեզի. մեր քով են բարձրաստիճան հայ և ռուս զորավարներ։ Տեղս կգրավեմ Մարտիրոսյան և Սաֆարյան զորավարներու միջև, որոնց հետ կծանոթանամ և շուտով կմտերմանամ։ Երկուքին ևս կուրծքերը զարդարված են քաջագործությանց շքանշաններով։ Մարտիրոսյան վառվռուն, շենվող անձնավորություն մըն է և հմայող խոսակից մը. իսկ Սաֆարյան՝ սակավախոս, հեզ և հանդարտ անձնավորություն մը։ Թեմին վրա պետական մեծ անձնավորություններ բազմած են, ընդ որս հիմնարկներու ներկայացուցիչներ։ Կենտկոմի քարտուղարը ճառ մը կարդաց... Այս ճառով կփակվեր հայտագիրի առաջին բաժինը. երկրորդ բաժինը երկու մասե կբաղկանար. ա) կարևոր երաժշտական հիմնարկներու կողմե երգ և նվագ, բ) երգի և պարի անսամբլ։ Դադարներուն երկու զորավարներուն և ա՛լ անձերու հետ հետաքրքրական խոսակցություն ունեցանք Մայր Հայրենիքի և արտասահմանի հայության վերաբերությամբ։ Հանդեսը երբ լրացավ, զորավար Մարտիրոսյան ձեռքս սեղմեց և ժպիտով մը ըսավ.

— Բարի ճանապարհ ձեզ, սրբազա՛ն, հաղորդեցե՛ք մեր սրտագին ողջույնները, սիրո համբույրները և հարգանաց հավաստիքը արտասահմանի մեր եղբայրներին և քույրերին։

— Սիրով,— պատասխանեցի։

Ու հարցեց.

— Աստված օգնական։

— Ներողություն,— հարցեցի,— համայնավար երկիրի մը մեջ զորավար մըն եք. ինչպե՞ս հայ եկեղեցական մը բարևելու ուղիղ ձևը դիտեք։

— Ս. Էջմիածնի Գեորգյան Ճեմարանում ուսել եմ և սիրում եմ Հայ Եկեղեցին և հայ եկեղեցականին,— եղավ պատասխանը։

Հոգեկան անհուն ուրախությամբ վերապարձա Ս. Էջմիածին։ Ֆիլհարմոնիայի մեծ պահլիճին մեջ հավաքված հայ ժողովուրդը իր զորավարներով, կառավարական և ժողովուրդի ամեն դասակարգի ներկայացուցիչներով ազգային հպարտությամբ լեցուց զիս։

7 Նոյեմբերի, շաբաթ.— Անջնջելի և անմոռանալի հիշատակներով լեցուն օր մը։ Ամբողջ Երևանը իր շրջակա գյուղերով եռուզեռի մեջ է. հազարավոր մարդիկ թափված են Լենինյան հրապարակը։ Իբրև արտասահմանեն հյուր եկած եպիսկոպոս՝ հրապարակին վրա պատվո տեղ մը հատկացուցին ինձի։ Տոնախմբությունները սկսան առավոտյան ժամը ճիշտ 10-ին. հիացա իրենց ճշտապահության վրա։ Զորավար Մարտիրոսյան քանի մը տասնյակ հայ ջոկատները առանձին բարևեց հանուն հայ ժողովուրդի և Հոկտեմբերյան հեղափոխության։ Բարձրախոսով քանի մը վայրկյան օրվան տոնին նշանակությունը լացատրվեցավ. ապա հազարավոր մարդեր միաբերան գոչեցին— Ուռա՛, ուռա՛։ Սկսավ զինվորական տողանցքը. ցամաքային և օդային զինվորներ խումբ առ խումբ հառաջացան. գնդացիրներ և թնդանոթներ՝ անոնց ետևեն։ Զորավար Մարտիրոսյան իր շուրջ առած երկու սպաներ մշարևե զորանցքը, որ կտևե մեկ ժամ։ Ուրեմն մենք ալ, հալածված, անիրավված, մարտիրոսացած հայության զավակներս, զորք, հրացան, թնդանոթ, սպաներ, զորավարներ ունինք եղեր։ Կրնանք հետևաբար պաշտպանել մեր Մայր Հայրենիքը, պահանջել մեր իրավունքները։ Կշարունակվի շքերթը. բոլոր հիմնարկները, գործարանները, հաստատությունները, դպրոցները, համալսարանի զանազան բաժանմունքները, արհեստի և արվեստի բոլոր ճյուղերը, Ակադեմիան, մեկ խոսքով Հայաստանի մեջ ինչ կազմակերպություն որ գոյություն ունի, մեծ կամ փոքր, այսօր թափոր կազմած կհառաջանան։ Խումբերեն ոմանք պարելով կանցնին, ոմանք՝ երգելով, ոմանք՝ նվագելով։ Ամենեն ետք տեղի ունեցավ մարզիկներու տողանցքը. 7.500 հայ երիտասարդ աղջիկներ և տղաներ, մարզական զանազան գույնի դրեստներով, վեր և առուրգ, ազգային հպարտությամբ առջևն տողանցք կատարեցին։ Հանդիսությունները

տեսեցին չորս ժամ, Հայոց աշխարհի կապույտ երկինքին ներքև, հավերժական Արարատի դիմաց, մայրենի հողին վրա, հայ ժողովուրդի պավակներուն կողմե, հայո՛ւն համար։ Կյանքիս մեջ առաջին անգամ այսպիսի տեսարանի մը հանդիսատես կըլլայի։ Ես, որ իմ Հայրենիքիս և ժողովուրդիս հանդեպ սերս պաշտամունքի հասցուցեր եմ, ի՞նչպես զրիչով նկարագրեմ կրած խոր ուրախությունս. ուրախությո՛ւն, որ մեզի կուտա կյանք, կյա՛նք անվախճան։

Հանդիսություններեն ետք ժողովուրդը խռնվեցավ մեր շուրջ. «Արտասահմանից հայ եպիսկոպոս է եկել». արդյոք իրենց ուրախությո՛ւնը թե կարմանքը հայտնելու համար էր այդ խռնումը։

Ճաշեցի Կրոնական գործերու նախագահ պարոն Հրաչյա Գրիգորյանի տունը։ Հայաստանյայց եկեղեցին ջերմորեն սիրող, գրագետ, աղնվական վարվեցողությամբ տիպար հայ մըն է պարոն Հրաչյա Գրիգորյան։ Մեր խոսակցության ընթացքին իրմե անմոռանալի պիտի մնան սա խոսքերը. «Մեր սրբազան փափագն է, որ կազմակերպվի Հայաստանյայց եկեղեցին իր Մայր Աթոռ Ս. Էջմիածնով։ Մենք պատրաստ ենք մեր օժանդակությունը բերելու. պետք է հայ եկեղեցականները լրջորեն մտածեն, մանավանդ արտասահմանի մեր հայ եկեղեցականները, և ջերմորեն նվիրվեն Հայաստանյայց եկեղեցու վերանորոգման գործին։ Մենք խորապես հավատում ենք, որ Հայոց եկեղեցին մեր ազգային կյանքում մեծ դեր ունի կատարելու»։

Երևան լուսերու մեջ է. մեծ հրապարակին վրա ցայտաղբյուրը շառաղունած է. անոր շուրջ՝ երգ, նվագ և պար. ամեն կողմ՝ լուսավառություն. ժողովուրդը իր ցնծատոնը կապրի։

8—9 նոյեմբերի, կիրակի—երկուշաբթի.— Սույն երկու օրերուն հաճախ Ս. Էջմիածին մնացի. Նորին Վեհափառության հետ բազմաթիվ կենսական խնդիրներու մասին նորեն խորհրդակցեցանք— Ս. Էջմիածնի վերանորոգության հարցը և անոր կարգադրությունը պարոն Գալուստ Կյուլպենկյանի հետ, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի ընտրության խնդիր, Քենտրբերիի արքեպիսկոպոսին հետ տեսակցություն երկու եկեղեցիներու ավելի մոտիկ հարաբերության և գործակցության համար, Էվրնստոնի եկեղեցական համաժողովին Հայաստանյայց եկեղեցվո մասնակցության խնդիր, Երուսաղեմի և Անթիլիասի միաբանություններեն 2—3 վարդապետներու Ս. Էջմիածին գալու և կրթական, վարչական ու քարոզչական գործերով զբաղելու հարց, քանի մը հայ պատվական ազգայիններու— Անգլիայեն՝ պարոն Երվանդ Հյուսիսյանի, Եգիպտոսեն՝ պարոն Հրանտ Նասիպյանի, Լիբանանեն՝ դոկտ. Երվանդ Ճիանճյանի— Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի արժանյաց շքանշան հանձնելու հարց։ Իսկ պարով ինձի հանձնվելիք մասնավոր պաշտոնին, Նորին Սրբության դրավոր ներկայացուցի թելադրանքներու։

Երկուշաբթի դիշեր ասոմվածաբանության վերջին դասը տվի ուսանողներուն։ Վստահ եմ, որ դասախոսություններն իրենց օգտակարությունը ունեցան. ջանացի սորվեցնել իրենց հոգեպաշտության անհուն արժեքը և անոր կարևորությունը մարդկային կյանքին մեջ։ Անոնցմե շատերը ջերմորեն սիրեցի և հույս ունիմ, որ ապագային հավատավոր, տեսիլք ունեցող ու գիտությամբ ճոխացած եկեղեցականներ հանդիսանան։ Այս դիշեր դասեն ետք սրտնոանդն աղոթեցի, որ ամենքն ալ լեցվին Ս. Հոգիով, որպեսզի ճշմարտորեն ծառայեն Հայաստանյայց Ս. Եկեղեցվո և ազգին։

Գացի տեսնելու «Խանդութ» յալտը, որ նոր խմբագրությամբ և սարքավորմամբ առաջին անգամ է որ կը նմադրվի։ Մեծ դահլիճը կհորդեր հանդիսականներով։ Բեմադրությունը և խաղարկությունը հրաշալի էին։ Այդ արվեստը ամերիկյան կամ եվրոպական սրեէ թատրոնի մեջ ամենարարձր գնահատանքի կրնա արժանանալ։

10 նոյեմբերի. երեքշաբթի.— Հետևյալ դրությունը հանձնեցի պարոն Ա. Աբրահամյանի, որ պարոն Սամունջյանի միջոցով արձանագրել տա Շահե սրբազանի գերեզմանին վրա. «Այս է տապան հանգուստեան Տ. Շահէ արքեպիսկոպոս Գասպարեանի՝ անդրանիկ վերատեսչին Կիլիկիոյ Գարեվանուց որ յԱնթիլիաս։ (1882—1935)»։

Գրեթե ամբողջ օրը բարեկամներու, ծանոթներու և հայրենակիցներու այցելեցի և հրաժեշտ առի անոնցմե. շատերուն աչքերը հուզումեն տամկացան։

Երեկոյան ժամը 7.30-ին ի պատիվ ինձի թեյասեղան տրվեցավ Գրողներու միության կողմե։ Մեծ թիվով մտավորականներ և գրողներ ներկա էին, գլխավորությամբ մեծ Վարպետին՝ Ավետիք Իսահակյանի։ Խոսեցա իմ կրած ապավորությանցս մասին. հայտնեցի ուրախությունս Հայաստանի կրթական, արդյունաբերական, գիտական, շինարարական և գեղարվեստական նվաճումներուն մասին ու մաղթեցի, որ նույնը տեղի ունենա նաև կրոնական կյանքի մեջ։ Մաղթեցի նաև, որ ա՛յլ անգամ, երբ գանք, Մասիսը միայն մեկ կողմեն չտեսնենք, այլ՝ բոլո՛ր կողմերեն։ Ա. Իսահակյան, Ա. Աբրահամյան, Լ. Մանասերյան, Պ. Սեյլան և

այլք արտասանեցին յաժակաճառեր Գեորգ Վեհի արեշատության, Մայր Աթոռի պայծառության և անսասանության, Հայաստանյայց Ս. Եկեղեցվո բոլոր Աթոռներուն միասնականության և սերտ գործակցության, հայ ժողովուրդի և Մայր Հայրենիքի հառաջդիմության ու անսասանության, ամբողջ հայության եղբայրական սիրո ու միության և հայ մշակույթի հավերժացման համար. մաղթեցին նաև, որ մեր բոլոր դպրեվանքներուն մեջ հավատավոր, հայրենասեր, գիտուն և նվիրված եկեղեցականներ պատրաստվին։

Գիշերվան ժամը 10-ին դացի Ս. Էջմիածին. Վեհափառ Հայրապետը կսպասեր ինձի, հանձնեց ինձի հետս տանելիք նամակներն ու կոնդակները. մինչև կես գիշեր անց Իր քով մնացի. ծուռը եկա Իր առջև. խնդրեցի, որ որհնե զիս Իր շնորհաբաշխ Աջովը։ Նորին Սրբությունը հուզված արտասանեց «Պահպանիչն ու «Հայր մերը. հոգվով զորացա, արիացա. համբուրեց ճակատս ու ես՝ Իր Աջը։ Երկար կյանք, շող, խինդ ու ժպիտ հանուրց Հայոց Սրբազնագույն Հայրապետին։

11 Նոյեմբերի, չորեքշաբթի.— Կրացվի Հայոց աշխարհի արշալույսը։ Ամբողջ գիշերը չեմ քնացեր. աղոթեր ու խոկացեր եմ։ Մի՞թե կրնայի առանց աղոթքի անցնել իմ վերջին գիշերս հավերժական Ս. Էջմիածնի գմբեթին ներքև։ Կյանքը աղոթք է ու աղոթքը՝ կյանք։ Կլսեմ գիշերապահին՝ Արշակին ոտնաձայները, սանդուղքներեն վեր կարձրանա զիս արթնցնելու. խեղճը չէր գիտեր, որ ամբողջ գիշերը արթուն հսկեր էի։

Ահա սենյակս կմտնեն վանքին սպասավորներն ու սարկավագները, կգնեն պայուսակներս ինքնաշարժին մեջ. վերջին անգամ կհամբուրեմ Ս. Էջմիածնի հազարամյա սրբացած քարերը. հուզումես կարտասվեմ. կաղոթեմ այս սարկավագ տղոց համար, որ լեցվին Ս. Հոգիով ու նվիրվին Հայաստանյայց Ս. Եկեղեցվո և ազգին ծառայության։

Դուրս կելլենք Ս. Էջմիածնի պարիսպեն. կթեքինք դեպի Գայանե։

Ահա հոգևոր ծնողիս՝ լուսահոգի Շահե սրբազանի գերեզմանը. ջերմեռանդ «Հոգ-ուցեմ մը ետք՝ համբո՞ւյր դինք ամփոփող հողին։ Ո՞րքան սիրեր եմ դինք, սիրո և բարության այդ մեռոնարույր հոգին։ Ու երանի՞ թե օր մըն ալ ես իմ հունավոր ու սահմանավոր էությանս մասը հոս, իր կողքին հանդչեցնեմ...։

Կմտնեմ ինքնաշարժ. Լևոն արագորեն կքշե. գուցե ուշանանք։ Մեր աջին Արարատն է։ որ իր ճերմակ գնմքը ծածկեր է ինձմե. ձախին՝. Արագածը, որուն ձյունածածուկ գագաթին վրա ոսկի շողեր կթափին։ Ժամը 8-ին կհասնինք Երևանի օդանավակայանը։ Հ. Գրիգորյան, Մ. Մինասյան, Պ. Սելյան, Ա. Աբրահամյան և այլք հրաժեշտի եկած են։ Ամենքն ալ կխնդրեն ինձմե, որ իրենց ողջույններն ու սերը տանիմ արտասահմանի բոլոր հայերուն։ Ինքնաթիռը կրարձրանա Հայոց աշխարհի երկինքին մեջ. վարը՝ ամպերու ծով, վերը՝ կապույտ անդրավություն, որուն մեջ խրոխտ ու ազատ կույգ Մասիսներուն սպիտակափառ գագաթները կթաղացած են։ Հոգեկան անճառելի հրճվանքով կդիտեմ դանոնք։ Մոտ երկու ամիս. օրվան զանազան պահերուն, ես Արարատը դիտեցի. ամեն անգամ, որ անոր նայեի, տարբեր կերպարանքով կներկայանար ան՝ մի՞շտ սիրուն, գեղեցիկ և առինքնող։ Վերջին անգամ մըն ալ նայեցա նոր՝ հայոց սուրբ լեռան։ Անեղեռնացավ, անոր հետ՝ հայկական լեռնաշղթան։ Ա՛լ Հայաստանի վերև չենք, բայց մեր նախնիքներու հողին մեկի հետ է։

Մեր ճամբուն վրա կհանդիպինք Սուխումի, Ռոստով և Խարկով։ Գիշերվան ժամը 10.30-ին կհասնինք Մոսկվա, ուր դիմավորության եկած են արժանապատիվ Տ. Խաչատուր, բարեշնորհ Անդրանիկ սարկավագ և Կրոնական խորհուրդի ներկայացուցիչը։ Իջևանեցանք Նասիոնալ հյուրանոցը։ Ամբողջ գիշերը երազեցի... Ուրը տարի առաջ տեսած էի Հայաստանը. բայց հիմա որպիսի՞ փոփոխություն. ահա՛ Մայր Երկիրը, ավելի՞ շենցած, ավելի՞ բարգավաճ. հայ ժողովուրդը՝ ավելի՞ ուրախ, ավելի՞ ազատ, ավելի՞ երջանիկ. Ս. Էջմիածինը, հայ եկեղեցիները, ավելի՞ պայծառ, ավելի՞ եռուն։ Տե՛ր, հաստատ ու անսասան պահե մեր նախնիքներու արյունով ներկված նվիրական Հայրենիքն ու մեր Մայրենի Ս. Եկեղեցին իր ժողովուրդով։

12 Նոյեմբերի, հինգշաբթի.— Կեսօրի առաջ անգլիական, գերմանական և բելգիական վիզաները առի, իսկ կեսօրե ետք մինչև ուշ գիշեր նամակագրությամբ զբաղեցա։

13 Նոյեմբերի, ուրբաթ.— Արժանապատիվ Տ. Խաչատուրի հետ Ռուսաց Ալեքսի Պատրիարքին այցի գացի։ Նորին Ամենապատվությունը և իր միտրոպոլիտը շատ սիրալիր ընդունելություն ըրին մեկի։ Ալեքսի Պատրիարք խորիմաց, կայտառ և հաճելի անձնավորություն մըն է։ Մեր խոսակցության գլխավոր նյութը եղավ էվքնստոնի համաժողովին իրենց բերելիք մասնակցությունը։ Դիտել տվավ, որ թեպետ ուղղափառ դավանության հակառակ է նման մասնակցություն մը, սակայն ինք ջերմ փափագող է եկեղեցիներու համերաշխ գործակցության,

միության և աշխարհի խաղաղության։ Իրեն բացատրեցի, որ օրթոդոքս և արևելյան եկեղեցիները էվընստոնի մեջ մեծ ներկայացուցչություն ունենալով՝ կրնան ժողովին վրա իրենց ազդեցությունը ունենալ և իրենց տեսակետները պաշտպանել։ Ասկե զատ էվընստոն միջոց կհանդիսանա, որ օրթոդոքս և արևելյան եկեղեցիներ, գրեթե բոլորն ալ դավանակից, իրարու քով կարենան գալ. առանձին ժողովներ դումարել՝ զիրար մոտեն հասկնալու և գործակցելու համար։ Կաթոլիկությունը ունի միացյալ ճակատ, բողոքական զանազան հարանվանություններ կձգտին միության դեմին մը ստեղծել. ինչո՞ւ ուրեմն ուղղափառ և արևելյան հին եկեղեցիները ավելի համերաշխորեն չգործակցին և ներքին միություն մը հառաջ չբերեն, միությո՛ւն, որ կարենա զիրենք պաշտպանել կաթոլիկ և բողոքական մարդասիրություններեն։ Սրբազան Պատրիարքը համամիտ գտնվեցավ սույն գաղափարներուն և զոհ մնաց մեր այս խորհրդակցութենեն։

Նորին Ամենապատվությունն ու իր միտրոպոլիտը մեկ պտտցուցին Պատրիարքարանի դահլիճը և ա՛յլ մասեր. ապա Նորին Ամենապատվությունը խնդրեց, որ Զաղորսկի իր դպրեվանքը այցելեմ՝ գաղափար մը կազմելու համար, իբրև տեսուչը նույնանման հաստատության մը։

Բարեշնորհ Անդրանիկ սարկավագին հետ մեկնեցա Զաղորսկ, որ Մոսկվայեն 100 կիլոմետր հեռավորություն ունի։ Անդրանիկ սարկավագ ուշիմ, վառվռուն և ճարպիկ երիտասարդ մըն է, Քաջիկ և Հենրիկ սարկավագներուն հետ Մոսկվայի մեջ կշարունակե իր ուսումը։ Հայրենակիցս է և կարճ ժամանակվան ընթացքին ռուսերեն սորված է. Զաղորսկի Աստվածաբանական Ճեմարանը ուսած է երկու տարի. որով կրցավ իմ թարգմանս հանդիսանալ։

Ճեմարանին վերատեսուչն է ավագերեց Կոստանդին Իվանովիչ Ռուժիցկիյ. իր օգնականն է Նիկոլայ Պետրովիչ Դոկտուսով։ Վերջինս Հայաստանյայց Եկեղեցվո մասին հատուկ աշխատություն ունի։ Վերատեսուչ և փոխանորդ ամեն տեղ պտտցուցին մեզ։ Ճեմարանը ունի 205 աշակերտներ՝ Ժառանգավորաց և Ընծայարանի բաժիններով։ Ուսանողները կպատրաստվին թե՛ ամուսնացյալ և թե՛ կուսակրոն եկեղեցականության, ինչպես նաև ուսուցչության համար։ Քանի մը հատ նոր ձեռնադրված երիտասարդ աբեղաներ տեսա, սիրուն, անուշ դեմքով, շատ համակրելի։ Տնօրենը ըսավ, որ աշակերտները ընդհանրապես հավատացյալներու զավակներն են։ Այցելեցի բոլոր դասարանները. ուսանողները հոտնկայս և ծափահարությամբ ընդունեցան մեզ և երգեցին. «Խսրոլու էտիտե տեսվոտա» (=իշխանավորին՝ սրբազանին երկար կյանք)։ Եղանակը շատ անուշ է և հաճելի։ Ուսանողներ կսերտեին ընդ հսկողությամբ աբեղաներու։

Զաղորսկի մենաստանը հիմնված է ԺԴ. դարուն հանուն Ս. Սարգիսի։ Ճեմարանի ներկա շենքը կառուցանել տված է Մեծն Պետրոս իր աղջկան համար։ Միայն տասնյակ մը տարիներ առաջ Դպրեվանքի վերածված է։ Ընթրեցինք տեսուչին և իր փոխանորդին հետ. ուշ ատեն վերադարձանք Մոսկվա։

14 նոյեմբերի, շաբաթ.— Առավոտյան ժամը 10-ին ինքնաթիռով մեկնեցա Նոր-Նախիջևան։ Նախ հանդիպեցանք Վորոնեժ և ապա Ռոստով։ Ճանապարհը տևեց վեց ժամ։ Ռոստովի օդանավակայանը դիմավորության եկած էին երկու քահանա հայրեր՝ արժանապատիվ Տ. Գեորգ և արժանապատիվ Տ. Հակոբ, Կրոնական խորհուրդի բոլոր անդամները և Կրոնական գործերու խորհուրդի նախագահը, որ ռուս մըն էր։

Հյուրասիրվեցա հայու մը տուն. պայուսակներս զետեղելեն ետք անմիջապես պտտելու գացի Դոն գետի ափին։ Ժամ մը ետք հասա Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, ուր մուտք գործեցի զանգակահարությամբ և «Հրաշափառով» ներդաշնակ ժամերգություն պաշտվեցավ. երբ ավարտեցավ ժամերգությունը, ժողովուրդը աջահամբույրի եկավ. Նոր-Նախիջևանցիք շատ հավատացյալ են։

Նոր-Նախիջևանի մեջ այժմ երկու եկեղեցի կա՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ և Ս. Հովհաննու Կարապետ։ Նոր-Նախիջևան ունի հինգ գյուղեր, Զալտրը, Թոփտի, Մեծ Սալա, Փոքր Սալա և Նիսվիթա։ Ասոնցմե Զալտրը, Թոփտի և Մեծ Սալա քահանա ունին։

Նոր-Նախիջևանցիք ունին իրենց հատուկ բարբառը, որ դժվարահասկանալի է. կարծեք հայերենի, ռուսերենի, թյուրքերենի, թաթարերենի խառնուրդ մըն է։

Կրոնական խորհուրդի անդամներեն իմացա, թե տարիներ առաջ երբ Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանց իրենց առաջնորդն էր, ամեն կիրակի երեկո, ժամերգութենեն հետ, «Եկեսցէք» արարողություն կկատարվի եղեր ու «Գարեգին սրբազանը քարոզում էր և հալալարավոր հավատացյալներ գալիս էին նրա հոգեշունչ քարոզները ունկնդրելու։ Շատ

գեղեցիկ սովորություն մըն է ասիկա. շանալու է, որ ընդհանրանա մեր թեմերուն մեջ ևս։

15 Նոյեմբերի, կիրակի.— Քարովեցի և պատարագեցի Նոր-Նախիջևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվո մեջ։ Դպրաց դասը՝ մեծամասնությամբ իգական սեռեն՝ շատ ներդաշնակ երգեց. իրենց անուշ երգեցողությունը դիս շատ հուզեց։ Քարոզի ընթացքին օրվան գիրքեն առի. «Ունիմք զփրկութիւն ի ձեռն արեան նորա» (Եփես., Ա 10)։ Հավարտ Ս. պատարագի՝ ժողովուրդը աջահամբույրի եկավ. իրենց համար արտասահմանեն եպիսկոպոս տեսնել անսովոր և արտակարգ բան մըն էր։ Կըսեին, թե Համաշխարհային առաջին պատերազմեն ի վեր արտասահմանեն իրենց բարձրաստիճան եկեղեցական չէ այցելած։ Հավատացյալներու ցնծագին մաղթանքներու տարափին տակ մեկնեցանք։

Ցճաշեցի. ժամանակ չկար. պետք էր, որ հայ գյուղերը այցելեի։ Հոգևոր խորհուրդի անդամներուն հետ գացի Ս. Հովհաննու Կարապետի եկեղեցին. հայկական ոճով գողտրիկ, սիրուն տաճար մըն է՝ կառուցված 1883-ին։ Ապա մեկնեցա Ս. Խաչ, որ յոթը կիլոմետր հեռավորություն ունի Նոր-Նախիջևանեն։ Նախկին շեն և գեղեցիկ վանքը հիմա ամայի է և կիսավեր վիճակ մը ունի՝ Համաշխարհային երկրորդ պատերազմի ատեն գերման խժդժությանց հետևանքով։

Վանքին բոլորտիքը գերեզմանոց եղած է. դեռ կանգուն են քանի մը դերեզմաններ. անոնցմե երեքը դիս խորապես կհուզեն— Գամառ Քաթիպայի, Միքայել Նալբանդյանի և Նահապետ եպիսկոպոս Նահապետյանի։ Վերջինիս գերեզմանաքարը գետին ինկած էր. մեր շարժավարը Մանվել, քաշ և հանդուգն երիտասարդ մը, քանի մը ռուսերու օգնությամբ, բավական հոգնությենե ետք զայն իր տեղը հաստատեց։ Նալբանդյանի արձանը կանգնած է վեցանկյուն կլոր սյունի մը վրա, իսկ սյունը՝ պատվանդանի մը վրա. ամենքն ալ համակ ընտիր մարմարե կառուցված։ Գ. Քաթիպայի անդրին մարմարե խոշոր բարձրադիր պատվանդանի մը վրա կկանգնի։ Կիմանամ, թե կառավարությունը մասնավոր կարգադրությամբ Նալբանդյանի և Քաթիպայի մասունքներն ու արձանները իրենց պատվանդաններով Նոր-Նախիջևան պիտի փոխադրե. կթելադրեմ, որ Նահապետ եպիսկոպոսինն ալ փոխադրեն։

«Ազատե Աստված այն օրից» և «Մայր Արաքսի ափերով» երգերը մեր շրթներուն՝ կրաժնվինք անոնցմե։

Տասը կիլոմետր հեռու Մեծ Սալա հայ գյուղն է, ուր շուտով կհասանինք։ Մեծ Սալա Հուսիկ արքեպիսկոպոսի ծննդավայրն է. ի զուր կորոնեմ իր տունը «Հոգւոց» մը ըսելու համար։ Կերթանք Ս. Աստվածածին եկեղեցի. քահանան՝ արժանապատիվ Տ. Արտաշես Մանուկյան կդիմավորե մեզ. կարճ աբարողություն մը կընենք. հավատացյալներ երկյուղածությամբ աչս կհամբուրեն։ Մեծ Սալային կանցնինք Թոփտի. քահանան մեկներ է Ջալտրը. կփութանք հոն։ Ջանգակահարությամբ և «Հրաշափառով» կմտնենք եկեղեցի, ուր խռնված են հավատացյալներ. կպաշտվի երեկոյան ժամերգություն, որ երբ կավարտի, կքարոզեմ բնարան ունենալով՝ «Ու համբերեցէք իսպառ, նա կեցցէ»։ Ջալտրի եկեղեցիին անունն է Ս. Համբարձում. կառուցված՝ 1871-ին։ Գյուղը ունի տասնամյա դպրոց. կպարունակե 1.200 ընտանիք։ Արժանապատիվ Տ. Սարգիսի տունը ճաշի հրավիրվեցանք. ներկա էին արժանապատիվ Տ. Հակոբ քահանան և թաղականության անդամները։

Գիշերով վերադարձանք Նոր-Նախիջևան։

16 Նոյեմբերի, երկուշաբթի.— Երեկ օրը շատ հաճելի էր և գեղեցիկ. կես գիշերեն ետք՝ սոսկալի ձյունամրրիկ։ Օդանավը, փոխանակ առավոտյան ժամը 9.40-ին ճամբա ելլելու, կեսօրեն ետք հազիվ 2.40-ին կրցավ թռիչ։ Արժանապատիվ Տ. Գեորգի, արժանապատիվ Տ. Հակոբի և Կրոնական խորհուրդի անդամներուն հետ հինգ ժամ օդակայան սպասեցինք։

Այս վատ եղանակին Ռոստովեն Մոսկվա թռիչքը վտանգավոր էր և տաժանելի։ Բայց ապահով հասանք ռուս քաջ և հանդուգն սավառնորդներու միջոցավ։

17—18 Նոյեմբերի, երեքշաբթի—չորեքշաբթի.— Կպատրաստվինք մեկնիլ Բեռլինի վրայով։ Պարոն Հրաչյա Գրիգորյան Երևանեն եկավ իր ռուսերեն լեզվով գրած մեկ նոր գիրքին հրատարակության առիթով։ Ուրախ եղանք նորեն իր ընկերակցությունը վայելելու։ Ճաշի հրավիրեցի Մոսկվայի համալսարանի մեջ ուսանող սարկավագները՝ Քաջիկ, Հենրիկ և Անդրանիկ. մինչև կես գիշեր խոսեցանք աղգային, կրոնական և աստվածաբանական խնդիրներու շուրջ։ Թելադրեցի իրենց, որ հավատարիմ մնան իրենց կոչումին վրա, խորանան հավատքի ու գիտության մեջ և անշահախնդրորեն նվիրվին Ս. Էջմիածնի և Հայաստանյայց Եկեղեցվո ծառայության։

Սույն երկու օրերուն դրեցի հոդված մը ի նամակներ. իսկ քանի մը ժամ ալ սարկավագներուն հետ քաղաքին հետաքրքրական տեղերը պտտեցա։ Հեռագրեցի եղբորս Դիտ-

ռոիտ, որ ինձ 350 դոլար ղրկեմ Անգլիա, որպեսզի կարենամ ճամբորդությունս շարունակել։

19 Նոյեմբերի, հինգշաբթի.— Առավոտյան ժամը 9.30-ին օդանավով Մոսկվայեն մեկնեցա Բեռլին։ Կրոնական գործերու նախագահը՝ պարոն Հրայլա Գրիգորյան, ճշմարտապես ազնիվ ու պատվական հայ մը, օդակայան եկած էր դիս ճամբելու։ Ցավ հայտնեցի, որ այսքան նեղություն քաշեր էր ինձի համար։ «Ոչինչ, սիրով և հաճույքով», — պատասխանեց։ Բարեշնորհ Անդրանիկ սարկավագ այ եկած էր, տամկացած աչքերով, հորը կարոտը սրտին։ 15 ճամբորդներ էինք. որևէ մեկուն պայուսակները չքննեցին։ Մեր ճամբու ընթացքին հանդիպեցանք Մինսկ և Վարշավա։ Կեսօրե Լոբ ժամը 3.30-ին հասանք Բեռլին։ Թանձր, համատարած մշուշին պատճառով մեր ճամբու ընթացքին բան չտեսանք։ Առանց որևէ նեղության՝ արևելյան դոտիեն անցանք արևմտյան կողմը։

20 Նոյեմբերի, ուրբաթ.— Օդին աննպաստ հանգամանքին և թանձր համատարած մառախուղին պատճառով օդանավային գրեթե բոլոր ճանապարհները փակված են։ Ստիպվեցանք մնալ Բեռլին։ Մեր ժամանակը օգտագործելու համար «տակսի» մը առինք և ամբողջ քաղաքը պտտեցանք։ Անցագիր ունեցողներու համար որևէ դժվարություն չկա քաղաքին արևելյան կամ արևմտյան մասերը պտտելու։ Բեռլինի կարևոր մասը ավերակներու մեջ է, արդյունք՝ հիտլերական ամբողջատիրական քաղաքականության։ Գիշերը՝ նամակագրությամբ զբաղեցա։

21 Նոյեմբերի, շաբաթ. —Բրյուսել ճանապարհը Ֆրանկֆորտի վրայով գոցված է։ Կմեկնինք Համբուրգ. անկե Ամստերդամ և ապա՝ Բրյուսել։ Պարոն Վարդան Մուրտիկյան Քաղական խորհուրդի հետ մեզ կդիմավորե օդանավակայանի մեջ։ Ուշ դիշերին միայն կարելի կըլլա հանգստանալ. անհրաժեշտ էր Հայրենիքի խաբրիկները հաղորդել հայրենասեր հայորդիներուն։

22—24 Նոյեմբերի, կիրակի—երեքշաբթի. — Մնացի Բրյուսել Հայաստանի մեջ շարժանկարած ֆիլմերս «développer» ընել տալու համար։ Հաղիվ երեքշաբթի երեկոյին կրցան հանձնել ինձի։ Կիրակի պատարագեցի Բրյուսելի Անգլիքան եկեղեցվո մեջ և քարոզեցի սա բնաբանով. «Տէ՛ր, առ ո՞վ երթիցուք, բանս կենաց յաւիտենականաց ունիս» (Հովհ., Զ 69)։ Երկուշաբթի կեսօրե տուաջ զվիցերիական և իտալական վիզաներ առի։ Օրվան մնացյալ մասը և հաջորդ երեքշաբթի հայ ընտանիքներու այցելեցի. խրախուսեցի ամենքն ալ, որ ապրին իբրև ճշմարիտ հայեր, չմոռնալով իրենց լեզուն ու կրոնքը։

25 Նոյեմբերի, չորեքշաբթի.— Օդանավով մեկնեցա Լոնդոն և իջևանեցա հայոց եկեղեցին՝ հոգեշնորհ Տ. Պսակ վարդապետի քով։ Երկուքուկես ամիսն ի վեր ազգային կյանքի գրեթե որևէ լուր չունեի. հայր Պսակ և տիկին Սեզա հաղորդեցին ինձի լուրեր, որոնց մեջ ըստ իրենց հետաքրքրական էր եպիսկոպոսներու Կոստանդնուպոլիս ճամբորդությունը։ Վեհափառին ինձի տված նամակներեն մաս մը հանձնեցի իրենց տերերուն։

26 Նոյեմբերի, հինգշաբթի.— Mowbray հրատարակչական ընկերության դացի. հաճայնեցանք Օրմանյան սրբազանի «Հայոց Եկեղեցին» գիրքի անգլերեն թարգմանության վերահրատարակման համար։ Սույն գիրքին մեջ ավելցուցինք գլուխ մը, որ կներկայացնի Հայաստանյաց Եկեղեցվո Ի. դարու պատմությունը, ինչպես նաև Գ. հավելված մը։ Այցելեցի մեր Դպրեվանքի նվիրատուներուն՝ պարոն Հակոբյանին և Կյուլպենկյանին։ Վերջնույս հետ մեր տեսակցությունը շատ սիրալիր եղավ և ի նպաստ հայ մշակույթի։

27 Նոյեմբերի, ուրբաթ.— Հոգեշնորհ Տ. Պսակ վարդապետի և Անգլիքան եկեղեցվո դիվանապետին հետ Քենտրբերիի Արքեպիսկոպոսին այցելեցի։ Նորին Սրբազնությունը հանգստանալու համար քաշվեր էր հեռավոր գյուղ մը, որ Լոնդոնեն մեկ ժամ հեռու է վայրաշարժով։ Մեր տեսակցությունը եղավ հույժ մտերմական և սիրալիր։ Հաղորդեցի իրեն Նորին Ս. Օծության Տ. Տ. Գեորգ Հայրապետի եղբայրական ողջույնները և ապա հանձնեցի Վեհափառ Հայրապետի տված նվերը՝ «Հին հայկական մանրանկարչություն» գիրքը, որմե չափազանց գոհ մնաց։ Տվի իրեն նաև Վեհին ինձի հանձնած նամակները և խոսեցա այն խնդիրներու մասին, որոնք Գեորգ Կաթողիկոսեն հանձնարարված էին ինձի։ Քենտրբերիի Արքեպիսկոպոսը մեր այցեն և Վեհափառի կողմե ներկայացված հարցերեն չափազանց գոհ մնաց։ Հյուրասիրությենն ետք վերադարձանք Լոնդոն։

Ս. Էջմիածնի Ճեմարանի ուսանողներուն ղգեստ ղրկելու հարցը հոգեշնորհ Տ. Պսակ վարդապետի կողմե կարդացվեցավ։ Պետությունը պետք եղած դյուրությունը պիտի ընծայե փոխադրության համար։

28 նոյեմբերի, շաբաթ.— Օդի ճամբով մեկնեցա Ժընև. ծանոթներ ու բարեկամներ օդակայան դիմավորության եկած էին։ Իջեվանեցա Դպրեվանքի բարերար պարոն Տրդատ Թյուլյուզյանի տունը։ Այս անգամ զինք ավելի առողջ և կազդուրված գտա, մանավանդ Հայաստանի կոնյակը խմելեն ետք։ Այցելեցի քանի մը բարեկամներու. երկու հոգի հիվանդ էին։ Ավետարան և «Փարատեաց» կարդացի անոնց վրա։

29 նոյեմբերի, կիրակի.— Սուրբ պատարագ մատուցի. Ժընևի ամբողջ հայությունը ներկա էր։ Քարոզեցի սա բնաբանով. «Եւ իբրև երթայցէք, քարոզեցէք և ասացէք թէ մերձեալ է արքայութիւն երկնից» (Մատթ., ժ 7)։ Ճաշեցինք տեր և տիկին Մանուկ Կարապետյաններու տունը։ Պարոն Կարապետյան հնությունեներով կպբաղի. Ս. Էջմիածնի ճեմարանին մեջ մեր դասավանդությանց իբրև քաջալերական գնահատություն ըրավ հետևյալ նվերները մեր Դպրեվանքի թանգարանին. գոտիի ճարմանդ մը արծաթ ոսկեջրած, մոտ 200 տարվան հնությամբ. մետաքսով բանված սրբիչ մը, մետաքսե և արծաթե ձեռագործ քթանի վրա՝ 250 տարվան հնությամբ. մակեդոնական և հնդկական շալ, ձեռագիր փոքրիկ արծաթապատ ավետարան մը, լորս դրամներ՝ որոնցմե երկուքը Մեծն Տիգրանին են, ձեռաց փոքրիկ գավաղան մը ԺԸ. դարեն, 100 տարվան գույգ մը ձեռնոց և գույգ մը գուլպա։

Օրվան մնացյալ մասը այցելությամբ անցուցի։

30 նոյեմբերեն մինչև 2 դեկտեմբերի, երկուշաբթի—շաբաթ.— Երկուշաբթի երեկո տիկին Սարգիսյան իր տունը հրավիրեց Ժընևի գաղութին բոլոր երեսելի հայերը. Հայաստանեն իմ բերած ֆիլմերս և նկարներս ցուցադրեցի ներկաներուն։ Երեքշաբթի մեկնեցա Բեռն՝ նվիրատվություն մը կարդալու համար ի նպաստ մեր Աթոռին։ Օրեկոյին տիկին Արմենուհի Միսիրյանին տունը հյուրասիրվեցա։ Սույն եկեղեցասեր, ազնվական և ճշմարտորեն բարի հայ տիկինը հանձն առավ ցկյանս տարեկան հազար դոլար նվիրել մեր Դպրեվանքին։ Չորեքշաբթի Համաշխարհային եկեղեցիներու դրասենյակը այցելեցի. տեսնվեցանք առաջնորդներուն հետ Էվրնստոնի համաժողովի վերաբերյալ հարցերու շուրջ։

3—5 դեկտեմբերի, հինգշաբթի—շաբաթ.— Համատարած թանձր մշուշին պատճառով օդային երթևեկը դադրած է։ Կեսօրե ետք ժամը 3-ի գնացքով մեկնեցա Միլանո։ Զվիցերիոյ ձյունապատ լեռները իրիկնամուտի մշուշին մեջ գեղեցիկ տեսարան մը կպարզեին։ Ժամը 9.30-ին հասանք Միլանո։ Կայարան դիմավորության եկած էին հոգեշնորհ Տ. Զգոն ծայրագույն վարդապետ. Բաղականության անդամները, պարոն Երվանդ Հյուսիսյան, դոկտ. Արզումանյան և գաղութին այլ ազգայիններ։ Առաջնորդվեցանք պանդոկ, որ մինչև ուշ առեն մնացինք մեր հյուրերուն հետ։

Ուրբաթ առավոտ պարոն Երվանդ Հյուսիսյան այցի եկավ. մեր խոսակցության նյութը դարձավ Ս. Էջմիածնի և Անթիլիասի դպրեվանքներուն նյութական ապահովության հարցը։ Կեսօրե ետք այցելեցի տիկին Զվարթ Սեֆերյանի և ա՛յլ ազգայիններու։

Շաբաթ օրը պարոն Հովհաննեսյանի հետ Քոմս մեկնեցա՝ պարոն Անիկ Մանուկյանը տեսնելու. իր տիկնոջ հետ գերեզմանոց գացինք և իրենց ծնողաց ու աղգականին համար հոգեհանգստյան պաշտոն կատարեցինք։ Շատ գոհ մնացին։ Մեծապես հուզվեցա, երբ նկատեցի, որ տերունական աղոթքը արտասանած միջոցիս տիկին Մանուկյան, որ իտալացի է, և իր զավակները, այնքան ուղիղ և հստակ ինձի հետ անսխալ կարտասանեին «Հայր մերը»։

Երեկոյին վերակազմեցի Միլանոյի Անթիլիասի օգնության հանձնախումբը։

6 դեկտեմբերի, կիրակի.— Պատարագեցի Միլանոյի Անգլիքան եկեղեցվո մեջ, որ աննախընթաց բազմությամբ մը լեցված էր։ «Հայր մերոնեն առաջ նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Վեհափառին կոնդակը «Հրաշափառով» վերարերվեցավ. Հայր Զգոն կարդաց զայն և հանձնեց պարոն Երվանդ Հյուսիսյանի. անմիջապես հետո երգվեցավ «Էջ Միածինն է Հոր» շարականը։ Քարոզեցի օրվան գիրքեն առնելով բնաբանս. «Գոնանալ պարտիմք զԱստուծոյ յամենայն ժամ վասն ձեր, եղբա՛ր, որպէս և արժան իսկ է. զի ևս բան զևս աճեն հաւատք ձեր, և յաճախէ սէր իւրաքանչիւր ամենեցուն ձեր առ միմեանս» (Բ. Թեսաղոնիկեցվոց, Ա 3)։ Սույն կոնդակով, զոր մեզի հետ բերած էինք, Վեհափառ Հայրապետը պարոն Երվանդ Հյուսիսյանին կշնորհեր «իրավունք կրելու Ս. Լուսավորչի առաջին կարգի ադամանդյա շքանշանը, իր կատարած «բազմատեսակ բարի գործերուն համար։ Միլանոյի, ինչպես նաև Բելգիայի, Անգլիո և Զվիցերիո ամբողջ հայությունը սրտեռանդն հրճվեցավ Երվանդ Հյուսիսյանի նման պատվական հայու մը ազգին Հայրապետին կողմե գնահատվելուն համար[1]։

Կեսօրե ետք Հայ տան բացման հանդեսը տեղի ունեցավ. ես նախագահեցի. ինձի հետ էին Վենետիկի միաբանության աբբա-

[1]. Կոնդակը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրի նախորդ համարում։

հայրը՝ գերապայծառ Սրապիոն Ուլուհոճյան և հոգեշնորհ Տ. Զգոն ծայրագույն վարդապետ։ Իտալիոյ հայութիւնը փութացած էր տան բացման հանդէսին։ Խոսեցան դոկտ. Արզումանեան, հայր Զգոն, պարոնայք Ե. Հյուսիսյան, Ալեքսանյան և Արբահայր Ուլուհոճյան։ Փակման խոսքը ես արտասանեցի։ Ներկաներ ամենքն ալ խանդավառված էին Հայ տունով, իրե՛նց տունով։ Հիրավի Հայ տունը իր ընդարձակ սրահով, մատենադարանով և հարմարիցներով պատիվ կբերե Միլանոյի հայութեան։

Այստեղ հարկ կնկատեմ դնել պարոն Ե. Հյուսիսյանի ճառը, որ իր պարզությամբ և ազնվականությամբ մեծ արժեք ունի և որ կվկայե, թե մեծանուն ազնվական բարեգործը գրամական ճոխությունն առաջ մեծ է նաև իր հոգիով.

«Գերաշնո՛րհ սրբազան հայր, գերհարգելի՛ արբահայր, հա՛ղթ, տիա՛ր ատենապետ և սիրելի՛ հայրենակիցներ.

Այսօր ամենուս համար ուրախության օր մըն է, իսկ ես կապրիմ կյանքիս ամենեն երջանիկ օրը, երբ կտեսնեմ ձեզ՝ բոլորդ հավաքված Հայ տան մեջ, ուր կխոսվի լեզու մը, զոր ամենքս ալ կհասկրնանք։ Երբ կնշմարեմ ձեր դեմքերուն վրա ուրախության ճառագայթումը և ձեր աչքերուն մեջ փայլիլը իր պարտականությունը կատարողի մը ինքնագոհունակ զգացումը, սիրտս կզեղու այնպիսի ուրախությամբ մը, որուն նմանը չեմ ունեցած երբեք։

Պիտի մայթեի, որ այս Հայ տունը չըլլա միայն ազգային և կրոնական համախմբումներու վայր մը, այլ հոս ունենանք նաև մեր հարսանիքները և մկրտությունները, վերջապես նկատենք ասիկա մեր տունը, հայուն տունը առանց դավանանքի և գաղափարի խտրության։

Անցյալ շաբաթ իմանալով, որ գերաշնորհ Տ. Դերենիկ սրբազանը Ս. էջմիածնեն, մեր Հայրենիքեն վերադառնալով Միլանո պիտի գա, հատկապես Ամենայն Հայոց Սրբազնակատար Կաթողիկոսին՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ.ի հայրապետական մասնավոր շնորհ ու օրհնությունը բերելու մեր գաղութին և ինձի՝ ազգիս և եկեղեցիս իմ մատուցած համեստ ծառայությանս համար, շատ զգացված էի և շատերուն փափագովը խնդրեցի, որ գերաշնորհ սրբազանը այնպես կարդադրե, որ կարելի ըլլա իրեն համար ներկա ըլլալ մեր Հայ տան այսօրվան բացման հանդիսության։

Ուրախ ենք ունենալով զինք այսօր մեր մեջ։ Ես մասնավորապես այս հանդիսավոր առիթեն օգտվելով իրեն կհայտնեմ իմ խորին շնորհակալություններս և երախտագիտությունս իր բարեխոսության համար անձիս վերաբերմամբ Վեհափառ Հայրապետի մոտ։ Չեմ գիտեր, թե ի՞նչ ըրած եմ արժանանալու համար ինձի շնորհած պատիվին, բայց գիտեմ, որ պիտի ընեմ այն, ինչ որ պետք է՝ արժանի ըլլալու համար անոր և կրելու զայն կուրծքիս հպարտորեն։

Կխնդրեմ ուրեմն խոնարհարար ձեզմե, սրբազա՛ն հայր, որ Վեհափառին մոտ թարգմանը ըլլալիք իմ երախտագիտական զգացմունքներուս. ինձի շնորհված օրհնության կոնդակը և Ս. Լուսավորչի պատվանշանը կընդունիմ ակնածությամբ և պանոնք կպահեմ իբր սրբություն և կոզմնացույց կյանքիս մնացած օրերուն համար։

Շնորհակալություններ նմանապես ատենախոսներու կողմե անձիս հանդեպ եղած արտահայտություններուն. ես ալ իմ կողմե բնական է ունիմ շնորհակալության խոսքեր ձեզ ամենուդ համար և ամենանոնց, որոնք մեզ քաջալերեցին այս ներկա ձեռնարկին համար։ Մենք տունեցանք մեր Հայ տունը, որովհետև ամենոքս միացավ մեզի և կատարեց իր պարտականությունը։

Ինձի շնորհված բարձր պատիվը մեծ չափով արդար կգտնեմ փոխանցել Իտալիոյ մեր գաղութին, որուն մեջ շատերը իրենց ցույց տված թե՛ նյութական և թե՛ բարոյական ծառայությամբ առարկա են մեր հիացումին և մեր երախտագիտության։ Շնորհիվն Աստուծո՝ քանի կան մեր մեջ այս խանդավառությունը, այս համերաշխությունը և ազգասիրական տգին, այս գաղութը պիտի մեծնա և բարգավաճի այս աղատ ու դեղեցիկ երկրին՝ Իտալիոյ փառապանծ դրոշակին տակ։»

7 դեկտեմբերի, երկուշաբթի.— Առավոտյան ժամը 8-ին պարոն Ե. Հյուսիսյան և հոգեշնորհ Տ. Զգոն ծայրագույն վարդապետ օդակայան եկան դիս ճամբելու։ Երկու ժամեն հասանք Հռոմ։ Օգի աննպաստ ըլլալուն պատճառով Նյու-Յորքեն եկող օդանավը յոթ ժամ ուշացավ։ Օգտվելով այս հապալումեն Հռոմի պատմական վայրերը պտտեցա։ Ժամը 9-ին գիշերով մեկնեցա Կահիրե, ուր հասա առավոտյան ժամը 3-ին։ Դպրեվանքի մեր նորընծա քահանաներեն արժանապատիվ Տ. Պետրոս բարեկամի մը հետ դիմավորության եկած էր։ Իջևանեցանք Հելիոպոլիս պալաս պանդոկը։

8—11 դեկտեմբերի, երեքշաբթի—ուրբաթ.— Սույն օրերուն այցելեցինք Կահիրեի մեր բարեկամներուն։ Գերաշնորհ Տ. Մամբրե սրբազան գործով Աղեքսանդրիա մեկնած ըլլալով, հեռաձայնով խոսեցանք։ Սրբազանը շերմորեն ուրախացավ՝ իմանալով, որ Վեհափառ Հայրապետը Ս. Գրիգոր Լուսավորչի արժանյաց շքանշան շնորհած է պարոն Հրանտ Նասիպյանի՝ Քաղաքական ժողովի ատենապետին։ Բարեգործականի Շրջանային վարչության հետ շորեքշաբթի երեկո ժողով ունեցանք՝ Անթիլիասի Դպրեվանքին վերաբերյալ կարևոր հարցի մը շուրջ։

Ուրբաթ առտու պարոն Հ. Նասիպյանի հետ օդանավակայան գացի։ Կեսօրե ետք ժամը 2.30-ին հասա Բեյրութ՝ օդի ճամբայով։ Խալդեի օդանավակայանը դիմավորության եկած էին գերաշնորհ Տ. Խորեն սրբազան, գերաշնորհ Տ. Գնել ծայրագույն վարդապետ, հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ, հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա և պարոն Հակոբ Պուճիգանյան։ Ուղևորվեցանք Անթիլիաս. ահա՛ մեր սիրելի Դպրեվանքը, ուր այնքա՜ն աշխատանք թափեր ենք. հոգեկան անասելի հրճվանքով համակվեցա՝ տեսնելով մեր ուսանողները, որոնց համար այնքան հոգներ էի և աղոթեր, որ լեցվին ու աճին ճշմարիտ հավատքով ու գիտությամբ։ Եկա Վեհարան ու ողջագուրվեցա բարձրապատիվ Տ. Խաղ և գերաշնորհ Տ. Փառեն սրբազաններուն հետ։ Կմտնենք մեր տեսչարանը, ուր բազում գործեր կսպասեն մեզի։

(«ՀԱՍԿ», պաշտոնական ամսագիր Կիլիկիոյ Հայոց Կիլիկիո. Աերիլիաս, փետրվար, 1954)

ԴՈԿՏ. Գ. ԲԱՄԲՈՒԿՋՅԱՆԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ՌՈՒՄԵՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ՄԵՋ

Ռումեն ժողովրդական Ռեսպուբլիկայի Ակադեմիայի բժշկական բաժանմունքի վերջին նստաշրջանի 1954 հունվար 25-ի նիստին մեջ, դոկտ. Գ. Բամբուկջյան, Բուխարեստի «Պրոֆ.-դոկտ. Վիկտոր Պապեշ» հաստատության գիտական հետազոտությանց բաժանմունքի տնօրենը, բժիշկներու կատարելագործման ու մասնագիտացման հաստատութենեն գեներալ-մայոր պրոֆ.-դոկտ. Սկալլաա Լոնկինի հետ միասին զեկուցում մը ներկայացուց հետևյալ խորագրով. «Վերքերու սպիացումը արյան գնդիկներու շաղախի (փաստա դե հեմատի) դարմանումով։

Այս զեկուցումը կհիմնվի կլինիկային, փորձնական ու լաբորատորիական ուսումնասիրությանց վրա և ունի գործնական ու տեսական կարևորություն մը։

Անոր գործնական կարևորությունը ապացուցվեցավ ծավալուն և խոր այրվածքներու (3-րդ աստիճանի) և սպիացումի ձգտում չունեցող խրոնիկ վեղերու (ulcère) պարագաներով, որոնք վերոհիշյալ մեթոդներով դարմանված, ապշեցուցիչ հետևանքներ ունեցան թե՛ բուժման արագության և թե՛ գեղագիտական տեսակետով։

Անոր տեսական կարևորությունը կկայանա այն իրողության մեջ, որ հեղինակներուն հետազոտությունները երևան հանեցին միկրոսկոպիական ուսումնասիրություններով, կեղավորման մեջ գտնվող, վերնամաշկային (épithélial) բջիջներու ծագումը, առանց վերնամաշկային մնացուկներու հետքի, առանձին կարևորություն ունեցող իրողություն մը, որ ցույց կուտա, թե արյան գնդիկներու շաղախի ապդեցության տակ, պատրաստված Մոսկվայի արյունաբանության (hématologie) հաստատության ցույց տված մեթոդի համաձայն, բջիջներ կգոյանան կենդանի անբջիջ նյութեն։ Այս փորձերը անգամ մը ևս կուզան հաստատելու սովետական գիտնական Օլգա Բորիսովնա Լեպեշինսկայայի այն ըմբռնումը, որ հիմնովին ջախջախեց հետադեմ վիրխովիզմը։

Ռումեն ժողովրդական Ռեսպուբլիկայի բժշկական բաժանմունքի քարտուղարությունը հայտնեց իր հավանությունը գործածված տեխնիկական մեթոդներու և ձեռք բերված արդյունքներու մասին, շնորհավորելով ու հորդորելով զանոնք շարունակելու այս հետազոտությունները։

Միաժամանակ կհանձնարարեն գործնական բժշկական մարմնին գործածել հեղինակները ցույց տված և ստուգած մեթոդը վերքերու տարբեր պարագաներու մեջ, թե՛ անոնց տարածման և խորության, ինչպես նաև մարմնի վրա տեղավորվելու մասին, բայց և նկատի ունենալով հիվանդի տարիքը, սեռը, ընդհանուր վիճակը և այլն։

Փորձնական ուսումնասիրությունը կլրացնե կլինիկական մասը։

Այս գործը յույս պիտի տանե ընդարձակորեն, լուսանկարներով ու միկրոլուսանկարներով Ակադեմիայի բյուլետենին մեջ։

(«ՆՈՐ ԿՅԱՆՔ», Բուխարեստ, 28 փետրվարի 1954 թ.)

ՀՈԳԵՀԱՇ՝ ՂԵՎՈՆԴ ԴՈՒՐՅԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ 20-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻՎ

Հունվարի 24-ին տեղի ունեցավ Դուրյան սրբազանի հիշատակին նվիրված հոգեհաշը՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվո մեծ սրահին մեջ, ուր, սեղաններուն շուրջ կտիրեր համակ պատկառանք և հուզում։

Օրվան նախագահներն էին Տ. Աղան աբեղան ու նույն եկեղեցվո հովիվը։

Տիկին Աղավնի Սեպուհյան կատարեց ժողովին հանդիսավոր բացումը և կարդաց տիկին Մեծյանի նամակը՝ Դիտորդիտեն։ Սեղանապետի պաշտոնը կատարեց պարոն Տիգրան Պաղալյան, որ հիշեց սրբազանի սպանության դառն օրերու տագնապները։

Հրավիրվեցավ դաղութիս ականավոր երգիչ պարոն Մարտիրոս Քյոշեյանը, որ հոպիլ ապրումներով ու թրթռուն ձայնով երգեց «Սիրուն մանուշակն ու Հայրիկ, Հայրիկ, քո Հայրենիքն» երգերը։ Տիկին Սիրանուշ Դավիթյան կենդանի առոգանությամբ արտասանեց Դուրյանին նվիրված կտոր մը՝ «Կաղանի մրն էր անոր»։ Պարոն Պետրոս Հազարապետյան դյուրահաղորդ ոճով խոսեցավ Դուրյանի կյանքին ու գործունեության շուրջ, որ այնքան բեղուն դարձած էին։ Պարոն Սնոմք Թորոսյան արտասանեց Սիամանթոյի «Հորիմյան Հայրիկը»։ Խոսեցավ նաև պարոն Ա. Հովսեփյան՝ Դուրյաններու տաղանդը փառավորելով, ինչպես նաև տիկին Մաքրուհի Քեշիշյան ու պարոն Ե. Նալբանդյանը նահատակ սրբազանի անձնական հատկանիշներն ի հայտ բերին, որպես օրինակ ծառայեցնելով։ Ելույթ ունեցավ հայր Աղանայն տեսակետին շուրջ, թե մեղավորին կարելի չէ թողություն շնորհել, երբ ան զղջումի ու ապաշխարության նշաններ ցույց չտալե զատ՝ դեռ կհամարի մեղքի ճամբով ընթանալ։ Երաժշտագետ պարոն Խոսրով Համամճյան, Ղևոնդ Դուրյանի ազգական մը, առաջարկեց ջանք թափել ու Ազգային երեսփոխանական ժողովին միջոցով հաստատել հիշատակի օր մը Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանի համար։ Հետաքրքիր տրամադրության տակ սեղանապետ պարոն Տ. Պաղալյան կարդաց Էջմիածնի Վեհափառ Հայրապետ Գեորգ Զ. Կաթողիկոսին նամակներ, որոնք ուղղված էին Կալիֆորնիոյ թեմին։ Պարոն Գաբրիել Մաճառյանի ղեկավարությամբ հոտնկաց երգվեցավ «Էջ Միածին»ն ի Հարէն շարականը, որմե հետո հովիվ Տ. Վրթանես Փափազյանի ուղերձով ու «Պահպանիչ»ով Դուրյանի նվիրված այս հարգանքի ու հոգեհաշի ժողովը փակվեցավ։

(«ԱՐԱՐԵՐ», Նյու-Յորք, 4 մարտի 1954 թ.)

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏՈՒՆԸ

Փարիզի դռներեն մեկուն քով միջազգային ուսանողական ոստանի մը մեջ կգտնվի հոյակապ և պատվաբեր հաստատություն մը ողբացյալ Պողոս Նուպար փաշայի հանգուցյալ կողակիցին՝ Մարի Նուպարի անունով, որ կկոչվի Հայ ուսանողական տուն։ Ուսանողական շենքի մը երևումը հոս ավելի քան պատվաբեր է և կենդանի կոթող-հուշարձան մը հայ ցեղին։

Երբ պետական մեծ ազգեր, ընդ որս Հարավային և Միջին Ամերիկա և ուրիշներ, հակառակ իրենց հարստության և բազմաթիվ կարելիություններուն և միլիարդատեր քարեբարներուն, չունին և մտածած անգամ չեն ունենալ իրենց սեփական ուսանողական տունը, հայերս հպարտ կարող ենք ըլլալ տեսնելով հայկական ճարտարապետական ոճով բարձրացած այս տունը, ուր 90 ուսանողներ կրնան բնակիլ հանգստավետ պայմաններով։

Այս փառավոր կերտվածքը իր գլուխը կբարձրացնե հպարտորեն Միջազգային ուսանողական ոստանի մուտքին մոտ հոլանդական, ֆրանսական, ամերիկյան, անգլիական, ֆրանսական զանազան գաղթավայրերու անունով բարձրացած հսկա շինքերու կարգին։

Այս ոստանին մեջ հետզհետե պատրաստվող ամենազգի ապագա մեծ մարդոց աչքին պատվաբեր չէ՞ արդյոք Հայ տունի մը գոյությունը, իրենցինին չափ, եթե ոչ ավելի, հանգստի պայմաններով։

1928-ին սկսած է այս տան շինությունը և ավարտած 1932 թվականին, երբ հաղիվ գոյություն ունեին 2—3 նման հաստատություններ։

Այն ատեն Պողոս փաշա Նուպար ծախսած է ավելի քան երեք միլիոն ֆրանկ։

Չորս հարկ ունի շենքը և 94 ուսանողի բնակարան սենյակներ, մեկ և երկու հոգիի համար։

Այս պահուս վաթսուն ուսանող կապրի հոս։

(«ԱՐԱՐԵՐ», Նյու-Յորք, 11 մարտի 1954 թ.)

ԲՐԱԶԻԼԱՀԱՅ ԹԵՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Սիոն սրբազան հոր ուղղված նամակով մը, բրազիլահայ թեմի Հայրապետական պատվիրակի փոխանորդ արժանապատիվ Տ. Եղնիկ ավագ քահանա Վարդանյան կտեղեկացնե նորին սրբազնության թե՝ 1953 զեկտեմբեր 20-ի կիրակի օրը, ըստ թեմի կանոնադրի 16-րդ հոդվածի տրամադրության, տեղի ունեցած է Ներկայացուցչական ժողովին ըստ կանոնադրի դադրած 14 անդամներուն տեղ նորերու ընտրությունը։

Քվեարկությունը անցած է խաղաղ և կանոնավոր։ Իսկ տարվույս հունվար 15-ին տեղի ունեցած է Ներկայացուցչական մարմնի անդրանիկ նիստը. վարչության հաշվետվությենեն հետո ձեռնարկված է ըստ օրինի դադրած 4 անդամներու ընտրության և քվիներու մեծամասնությամբ ընտրված են՝ տիարք Պետրո Նազարյան, Գարեգին Թյուֆենկչյան, Ռուբեն Քյուրքչյան և Աբրահամ Դավիթյան։

Նորընտիր վարչությունը գումարած է իր անդրանիկ ժողովը, որ նախագահ Տեր հոր տերունական աղոթքեն հետո՝ ձեռնարկած է դիվանի ընտրության և արդյունքը հաղորդած պատվիրակ սրբազան հոր՝ վավերացման խնդրանոք։

***

Արդ, նկատելով, որ ընտրությունները կատարված են բրազիլահայ մեր թեմի կանոնադրության օրենքներուն համաձայն, օրինավոր և խաղաղ մթնոլորտի մեջ, պատվիրակ սրբազանը վավերացուց կատարված ընտրությունները և Կեդրոնական վարչության ամբողջական կազմը, հետևյալ կարգով.—

Պարոն Անդրեաս Ջաֆերյան՝ Ա. ատենապետ,

Պարոն Պետրո Նազարյան՝ Բ. ատենապետ,

Պարոն Գարեգին Թյուֆենկչյան՝ Ա. ատենադպիր,

Պարոն Աբրահամ Դավիթյան՝ Բ. ատենադպիր,

Պարոն Ռուբեն Քյուրքչյան՝ դանձապահ,

Պարոն Միհրան Բոյաջյան՝ հաշվապահ,

Պարոն Ծրվանդ Գալեմքեարյան՝ խորհրդական։

Վստահ՝ թե նորընտիր վարչությունը փոխանորդ Տ. Եղնիկ ավագ քահանա Վարդանյանի աչալուրջ և խոհեմ առաջնորդությամբ ոչինչ պիտի խնայե նվիրվելու համար թեմին եկեղեցական և կրթական սրբազան գործին, և իր լավագույնը պիտի ընե ի սեր մեր սիրեցյալ ժողովուրդի հոգևոր հառաջդիմության, մեր սիրասուն զավակներու ազգային ու կրոնական դաստիարակության, ի փառս Աստուծո և ի պայծառություն Հայաստանյայց Եկեղեցվո, պատվիրակ սրբազան հայրը վավերացուց ընտրությունները, օրհնեց Վարչականի անդամները և մեր սիրեցյալ ժողովուրդը, բոլորին մաղթելով Աստուծո սերը, իմաստությունը և օրհնությունները։

(«ՀԱՅ ԿԵԴՐՈՆ», Բուենոս-Այրես, № 4, 1954 թ.)

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՆԻԵՊԻ ՀԱՅՈՑ»*

Ամերիկաբնակ Անիեպցիների (Ա. Ա.) միությունը, Լոս-Անջելոսում (Կալիֆորնիա, ԱՄՆ), լույս է ընծայել «Պատմություն Անիեպի հայոց» անուն երկհատոր գիրքը՝ աշխատասիրությամբ և խմբագրությամբ մանկավարժական գիտությունների, փիլիսոփայության և պատմության պրոֆեսոր Գեորգ Ա. Սարաֆյանի, որ նույնպես անիեպցի է։

«Պատմություն Անիեպի հայոց» գրքի Ա. հատորը բաղկացած է (Բ + 1088 = 1120, իսկ Բ. հատորը՝ (Բ + 806 = 838 մեծադիր էջերից։ Ունի նաև երկու փոքրադիր քարտեզներ, որոնցից Ա. հատորին կցվածը ցույց է տալիս Անիեպ քաղաքի մանրամասն տեղագրությունը (տոպոգրաֆիան), իսկ Բ. հատորին կցվածը՝ Անիեպի շրջանակը։



Ինչպես գրքիս աշխատասիրողը հայտարարում է առաջաբանում, նման մի պատմագրքի պատրաստության ծրագիրը գոյություն է ունեցել ավելի քան երեսուն տարիներից ի վեր, սակայն նրա հրատարակությունը հազիվ հնարավոր է եղել իրականացնել 1953 թվականին միայն, երեք տարվա տքնաջան աշխատանքից հետո։

Արդարև, Մայր Հայրենիքից հեռու, արտաքսման երկրներում, հարազատ պետության հովանավորությունից և հոգատարությունից զրկված հայ գրողի համար 2.000 մեծադիր էջերով ու հարյուրավոր կլիշեներով— ինչպիսին է Անիեպի հայոց պատմագիրքը— ստվարածավալ գիրք հրատարակելը հեշտ գործ չէ և՛ նպատակահարմար ու արժեքավոր նյութերի հավաքման, և՛ նրանց ճաշակավոր և անթերի հրատարակության համար անհրաժեշտ՝ արտաքսման պայմաններում՝ մեծագումար ծախքերն ապահովելու տեսակետից, եթե նույնիսկ դանց առնենք աշխարհի չորս ծագերին ցրիվ ընկած հայրենակիցներից ոմանց աշխատակցելու դժկամությունը, ոմանց գրքի հաջողության մասին ունեցած սկեպտիկությունը, ոմանց էլ ասելիքի վրա սև գիծ քաշելու սոփեստ խրատները։ Հենց այս պատճառով էլ արդարանալի է պրոֆ. Սարաֆյանի առաջաբանում արտահայտած ուրախությունը. «Երբեմն ենք,— գրում է նա,— որ վերջապես հասավ այն բարեբաստիկ օրը, Անիեպի հայոց պատմության երկու ստվար հատորներուն տպագրության թվականը, երբ աշխատասիրող խմբագրապետը, վերատին ազատ շունչ մը քաշելով, իր ուսերեն վար կդնե պատասխանատվության այն ծանր բեռը, որու տակ ինքզինքն ընկճված կզգար մոտավորապես վերջին երեք տարիներու ընթացքին»։

***

«Պատմություն Անիեպի հայոց» գիրքը բաժանված է մի երկվեցյակ գլխավոր մասերի, որոնցից առաջին վեցյակը (Ներածական, Հնախոսական-ճեռագրական. Անիեպի և շրջանակի պատմությունը, եկեղեցական-կրոնական, Կրթական-մշակութային և Քաղաքական-ազատագրական) լույս են տեսել Ա. հատորում, իսկ երկրորդ վեցյակը (Պատմություն Անիեպի ինքնապաշտպանության կռիվների. Ռոնարական-տնտեսական, Ազգագրական, Պատմա-հնչագրական, Անիեպցիներ Սիլուռի մեջ և կենսագրականներ) Բ. հատորում։

Այստեղ նշելի կետ է այն, որ գրքիս աշխատասիրողը ուղիղ վերաբերում է ցուցաբերել իր բազմաթիվ աշխատակիցների հանդեպ, պահելով յուրաքանչյուր աշխատակցի ստորագրությունը գրած հոդվածի ներքո, մինչդեռ նման ընտրի ուրիշ երկասիրողները բավականացել են միայն աշխատակիցների կենսագրություններում գետեղելով հանուն այս տեսակ անորոշ մի բացատրություն. «Հատորիս աշխատակցած է տնտեսական, կրթական, կրոնական և քաղաքական կյանքի մասին այլևայլ տեղեկություններ հայթայթելով (տե՛ս «Մատաղ» պատմագրքի աշխատակիցների

* «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհակալությամբ ստացել է Ա. Ա. միության կողմից իր հասցեին ուղարկված «Պատմություն Անիեպի հայոց» գիրքը, երկու հատոր— ԽՄԲ.։

բաժինը)։ Պատմագրում,— եթե նա մի հեղինակի երկասիրությունը չէ,— հոդվածագիրների ստորագրությունը՝ գրած հոդվածի ներքո՝ կարևոր է և՛ երկասիրողի համար, որպեսզի որևէ հոդվածի քննադատության դեպքում, թիրախը լինի նույնիսկ հոդվածագիրը, և՛ հոդվածագրի համար, որպեսզի ամբողջ գրքի գնահատության դեպքում, երկասիրողի հետ հոդվածագիրներն էլ ունենան կոհունակության իրենց արդար բաժինը։

❁❁❁

«Պատմություն Անբեպի հայոց» գիրքը ուսումնասիրելիս, ընթերցողի ուշադրությունից չի վրիպում այն արդյունավետ աշխատանքը, որը կատարել է Կիլիկիայի Բարձեն Աթոռակից Կաթողիկոսը, իր ծննդավայր քաղաքի՝ Անբեպի և շրջակա պատմական վայրերի (Ծովք, Տյուբ, Հոռմկլա) պատմությունը մոռացության ճիրաններից փրկելու գործում։ «Հայ Անբեպի պատմության համար» նրա գրի առած «նոթերը» (առաջին անգամ լույս տեսած 1925 թվականին Հալեպում հրատարակված «Սուրիահայ տարեցույցում»), ինչպես նաև նրա հեղինակած «Ծովք-գղյակ, Տյուբ և Հոռմկլա» գիրքը (տպագրված Վիեննայում 1961 թվականին) և Ֆրանսիական գրավոր բանակների Կիլիկիայից հեռանալու (1921 թ.) հետևանքով հայ բնակիչներից դատարկված ծննդավայրի հիշատակը անթեպցիների հիշողությունների մեջ վերապրեցնելու նպատակով արտասահմանյան մամուլում նրա հրատարակած հոդվածները հիմնաքարերի դեր են կատարել «Պատմություն Անբեպի հայոց» գրքի աշխատակիցներից ոմանց համար։ Եվ գրքիս երկասիրողը արդար հատուցում է տալիս մեծանուն Կաթողիկոսին՝ գրքում զետեղելով ոչ միայն նրա կենսագրականը (Փառեն եպիսկոպոսի գրչից), այլև իր կողմից ստորագրված հատուկ հոդված, որով պանծացնում է «Կիլիկիո կաթողիկոսաց պատմություն» գրքի ներհուն հեղինակի անմոռաց հիշատակը։

Սակայն զարմանում եմ, թե ինչո՞ւ Բարգեն Ս.ի հիշատակին այնքան հիացական տողեր նվիրող պրոֆ. Սարաֆյանը չի հիշատակում լուսահոգի մեծ հոգևորականի նվիրվածությունը Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության և Հայաստանին, նվիրվածություն, որի անհերքելի փաստը տվել էր նա իր «Կաթողիկոսական ուխտով», կարգացված Հալեպի Սրբոց Քառասնից մանկանց անվան եկեղեցու խորանի առջև, Կաթողիկոս օծման պահին (1931 թվականի ապրիլի 28-ին) և Էջմիածին ճանապարհորդելու ծրագրվը, որը չկարողացավ այն ժամանակ իրագործել Սիրիայի և Լիբանանի ֆրանսիական բարձր կոմիսարի հարուցած դժվարությունների հետևանքով, բայց անպայման պիտի իրականացներ անշուշտ, եթե անողոք մահը չկտրեր նրա կյանքի թելը 1936 թվականի հունիսի 9-ին, Բեյրութում։

«Պատմություն Անբեպի հայոց» գրքի բովանդակությունը արժեքավորելու տեսակետից պատմական արժեք ունեցող ուսումնասիրություններ և հոդվածներ ունեն Կիլիկիայի Կաթողիկոսության միաբան Փառեն եպիսկոպոս Մելքոնյանը, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ Նորայր եպիսկոպոս Գողարյանը, Հալեպի Կրթական դպրոցի վաստակավոր տնօրեն Գրիգոր Գողարյանը, Վահան Քյուրքչյանը, Ա. Ն. Նազարը, վերապատվելի Ե. Ս. Քասունին, Արտավազդ արքեպիսկոպոսը, պրոֆ. Գ. Ա. Սարաֆյանը, քահանաներ, վերապատվելիներ, բժիշկներ, արհեստավորներ և այլն, բոլորն էլ ձգտելով այն բանին, որ իրենց ծննդավայր քաղաքի՝ Անբեպի վերաբերող ո՛չ մի դեպք ու դեմք դուրս չմնան գրքից։

Պետք է խոստովանել, որ պատմագրքիս ամենաժամանակատար աշխատակիցն է եղել վերապատվելի Ե. Ս. Քասունին, նախաբանը՝ Պետհանիկյան, որովհետև հայրը Պետհանիից գաղթել է Անբեպ, ապա՝ Քասունի, որովհետև մեծ հայրը Քեսունից է (ժԱ. դարի նշանավոր հայ իշխան Գող Վասիլի ոստանը)։ Նրա գրած 5 հոդվածները, մասնավորապես ինքնակենսագրության հետ միասին, Ա. և Բ. հատորներում գրավել են ընդամենը 503 էջ, այսինքն՝ ամբողջ գրքի քառորդը։ Այդ 5 հոդվածների միջև, պատմական-ազգագրական տեսակետից ամենաշահեկանները են «Անբեպի շրջանակի աշխարհագրական և Անբեպ քաղաքի տեղագրականը» հոդվածում։ Նա մանրազնին ու խղճամիտ պրպտումներ է կատարել ձեռքի տակ ընկած հայ և օտար հնագույն և նորագույն աղբյուրներում՝ չոկելու համար այն ամեն ինչը, որ հարաբերություն է ունեցել նախատաքինների երկրի հետ, որի մաս է կազմել ծննդավայր քաղաքը՝ Անբեպը, շրջանի պատմական վայրերով (Ծովք, Տյուբ, Հոռմկլա, Արքլ, Ճարապլուս կամ հիքիքների Կարկեմիշը և այլն)։

Անբեպ քաղաքի անվան ծագման և այնտեղ հայերի բնակեցման կապակցությամբ վերապատվելի Քասունին պաշտպանում է այն գաղափարը, թե կիլիկյան Անբեպի հայ հիմնադիրները եկել են հին հայկական Տուրուբերան նահանգի Դալոռ գավառը ներկայացնող արդի Թուրամ գավառի կենտրոն Անբափ-ից, համաձայնելով Բարգեն եպիսկոպոսի (ապա Կաթողիկոս) հետ, որ վերև հիշված «նոթերում», դեռևս 1925 թվականին գրել էր. «Այնքապ ձեր նոր էլ Միջագարյան հայացի ձեն է Անբափ[1], որ եղած է Անբեպ. և ըստ

1. Անթեպցի հրապարակագիր Ա. Ն. Նազարն ևս գրել է, որ Այնքապի ճշտագույն անունն է Անբափ, որը, ըստ Մատթեոս Ուռհայեցու, Միքայել Ասորու և նրանց ժամանակակից պատմիչների, ունեցել է «ինձն, անտոիկն, անուտեին» տիտղոսներն էլ։

խ այս է շիտակ ձևը։ Պետք է գիտենալ, որ Հայաստանի մեջ ալ կա Անթափ բոված տեղ մը, Էրզրումի նահանգին մեջ։

Մեզ բերելուց հետո Ն. Ադոնցի այն մատնանշումը, թատ որում Ասորեստանի Թագավորությունը Ա. Թագավորը Հայկական բարձրավանդակի վրա կատարած մեծ արշավանքի առթիվ, Նարիրի 33 իշխանությունների կարգին հիշում է Nesabia, ANTIABE և Sururia երկրները, իսկ հին հռոմեական ուղեգրական տախտակների Հայաստանին պատկանող մասի վրա ևս նշանակված կան Nesabi, ANTEBE, Surin անուն հանգրվանները, որոնք, Մակվարգի և Ն. Ադոնցի հաստատմամբ, գտնվում էին Մանազկերտի և հայկական Բագավանի (արգի Ուչ Քիլիսե) միջև, ու նշելուց հետո, թե արձանագրական Անթիապե-ն (Antiabe) և ուղեգրական Անթեպե-ն (Antebe) դիրքով ճշգրիտ համապատասխանում են արդի Բուլաց քաղաքի կենտրոն Անթափ-ին, վերապատվելի Եղիա Քասունին եզրակացնում է. «Արդ, որովհետև Անթափ (Անթեպ, Այնթապ) անվան մեր շրջանակին մեջ չենք հանդիպիր քրիստոնեական թվականի ԺԱ—Ժ դարեն առաջ, մինչդեռ Հայաստանի Անթափ-ն անհիշատակ ժամանակներն ի վեր գոյություն ունի, պիտի ըսենք, որ այս անունը (այսինքն՝ Անթափ անունը։ — Ե. Հ.) վերին Հայաստանեն փոխադրված է նիզակատեղվոց երկիրը, և ամենայն հավանականությամբ՝ հայկական արտագաղթի մը միջոցով։

«Իսկ, այդ հայկական արտագաղթի կամ բռնագաղթի ժամանակն ու պարագաները մեզի մատնանշված են ասորի պատմիչ՝ Միքայել Ասորվո (թատ ասորերեն բնագրին) և Բարհեբրեոսի կողմեն։ Առանց իրենց ժամանակագրությանց մեջ կպատմեն, որ Բյուզանդիոնի կայսերց, մասնավորապես Նիկեփորոս Փոկաս և Հովհաննես Չմշկիկ, նիզակատեղվոց երկրները— Մելիտինե, Կոմմագենե, Կյուռեստիկա, և այլն— արարաց ձեռքեն ետ խլելեն հետո՝ գտան, թե անունք ամայացած են, որովհետև արաբ-մահմեդական ժողովուրդը լուծելով քրիստոնեից տիրապետության երթարկվել՝ Հարավային Սիրիա և Իրաք քաշված էր։ Բյուզանդացիք, ասոր փոխարեն, Միքայելի ասորիքրիստոնյա ժողովուրդը հրավիրեցին գալ հաստատվիլ իրենց նոր գրաված նահանգներուն մեջ՝ մինչև Մելիտինե (Մալաթիա— Ե. Հ.)։ Բայց դեռ երկիրը լցեցվեցավ բնակչությամբ։ Ուստի բյուզանդացիք իրենց գրաման տակ գտնվող Արևմտյան Հայաստանեն, մասամբ հոժարակամ և մասամբ բռնի, շատ հայ ժողովուրդ գաղթեցուցին մեր կողմերը։ Ասիկա պատահած է Թ. դարու վերջերը և Ժ. դարուն ալ շարունակված՝ մինչև անոր վախճանը։

«Այսպես, կհամոզվինք, թե՝ Անթափ անունն իսկապես Արևմտյան Հայաստանեն նիզակատեղվոց երկիրը փոխադրված նախահայկական անուն մըն է, թե՝ Անթեպ ևն ավելի ուղիղ է քան Այնթապ, և թե՝ վերջինս պարզապես այդ նախապատմական անծանոթ ծագումով անվան արաբերեն՝ ստուգաբանություն մը տալու ջանքին արդյունքն է։»

Մենք տրամաբանական ենք գտնում՝ վերապատվելի Ե. Քասունու սույն եզրակացությունը, թե՝ կիլիկյան Անթեպի հիմնադիր հայ բնակչությունը, հոժարակամ կամ բռնի, գաղթած լինի Արևմտյան Հայաստանի Տուրուբերան նահանգի Անթափ քաղաքից, և թե՝ այդ հայերը վերապրեցնելու համար իրենց ծննդավայրի հիշատակը, նոր բնակավայրը մկրտած լինեն իրենց հին բնակավայրի անունով։

Նմանօրինակ իրողություններ պակաս չեն հայ ժողովրդի պատմության մեջ։ Շահ-Աբասի (1587—1628 թ. թ.) օրով Ջուղայից բռնի գաղթեցված հայերը Պարսկաստանում հիմնել են Նոր-Ջուղան։

Դեռևս նոր ժամանակներում, 1921—1922 թ. թ. Կիլիկիայից հեռացած հայերը, Բեյրութում (Լիբանան) իրենց հիմնարկած քաղաքը մկրտել են իրենց բնիկ ծննդավայրերի անուններով՝ Նոր-Հայքն, Նոր-Մարաշ, Նոր-Ադանա, Նոր-Սիս, Նոր-Ամանոս, Նոր-Ցոլկատ։

1921 թվականին Զեյթունից նահանջած հայերի մնացորդներից 40 ընտանիքներ, Անտիոքի շրջանի մաս կազմող Մուսա-լեռան (Ջեբել-Մուսա) վեց հայաբնակ գյուղերի կողքին հիմնել էին Նոր-Զեյթունը, գնի հոգու խորքում անեղծ պահելու համար իրենց արժեքաբուն ծննդավայրի հիշատակը։

Այժմ, Հայաստանի գեղեցիկ ու բնդարձակածավալ մայրաքաղաքի՝ Երևանի շեն ու բազմամարդ ավաններից են Արաբկիրը, Զեյթունը, Մարաշը, Կիլիկիան, Բյուրեղանիան, Խարբերդը, Մալաթիան, Սեբաստիան։ Այդ ավանների բնակիչների մի ստվար մասը կազմում են Թյուրքիայում թողված նույնանուն քաղաքների հայերը, որոնց գանգատ թվականներին արտաքսահմանից հոժարակամ ներգաղթել են Մայր Հայրենիք։ Ինչպես Թյուրքիայում, Հայաստանում ևս կան Ամասիա (Ղուկասյանի շրջան) և Ադիաման (Մարտունու շրջան) անուն գյուղերը։

Մենք գիտի և շահեկան վերլուծություն է նաև վերապատվելի Ե. Քասունու «Անթեպի ճայոց ցարքառխոսությունը» վերնագրյալ ուսումնասիրությունը (Բ. հատոր, էջ 313—380)։ Ընթերցողը նրանում կարող է

---

1. Հոդվածագրի բնագրին և անթեպցիների գործածած ուղղագրության հարազատ մնալու համար է, որ Antiabe -ն՝ Անթիապե և Antebe -ն՝ Անթեպե ենք գրում, այլապես ուղիղ ատառագրությամբ պետք էր գրվին Անտիաբե և Անտեբե, և հետևաբար Անթիպե և՝ Անտեբ։

1. «Անթեպի» արաբերեն ձևն է «Այնթաբ»։ Ոմանց այս բառը ստուգաբանում են Այնեք-թայլեք (عين الطايب) ձևով, ճազգրողությունք, լավ աղբյուր՝ նշանակությամբ։ Բայց այս ստուգաբանությունը ճիշտ չէ, որովհետև «Այնթաբ»ը արաբերեն գրվում է عينتاب։ Այս ուղղագրությունից երևելով, մեր արաբերենի և պարսկերենի ուսուցիչը, մի անթեպցի փաթեոգավոր խոջա, ասում էր թե «Այնթաբ» բառը կազմված է արաբերեն (عين) այն=աչք, աչք և պարսկերեն (تاب) թաբ=շողուն, փայլուն բառերից, ուստի «Այնդաբ» նշանակում է շողուկ։ Ըստ նրան, քաղաքը «Այնդաբ» է կոչվել, որովհետև բնակիչներն ունեցել են փայլուն, շողշողացող աչքեր։

գտնել 1517 թվականից սկսյալ օսմանյան ենիչերիների կողմից ոչ միայն Անթեպի, այլև (բացի Զեյթունից և Հաջընից, Բեյլանից, Քեսաբից և Մուսա-լեռան գյուղերից) ամբողջ Կիլիկիայի հայերին պարտադրված թյուրքախոսության հետևանքով կորած հայերեն լեզվի մնացորդ հայկական ավանդություններին, երգերին, հարսանեկան երգերին, ժողովրդական աղոթքների և անեծքների պատառիկներ և մի բառգրքույկ՝ անթեպցիների խոսած թյուրքերենում գործ ածված հայերեն բառերի մասին։

***

Անթեպի հայոց պատմագրում, շատ հոդվածներից է վերապատվելի Ներսես Սարյանի «Հռոմկլա և շրջակայքը» վերնագրյալ ուսումնասիրությունը։ Պատմասեր ընթերցողը նրանում ամփոփ կերպով գտնում է այն ամեն ինչը, որ վերաբերում է միջնադարյան հայ եկեղեցական պատմության մեջ փայլուն տեղ գրաված սքանչելի Հռոմկլային և այնտեղ ապրած ու գործած կաթողիկոսներին, մասնավորապես տեղեկություն Ներսես Շնորհալուն, լատինականության դեմ Գրիգոր Ե. Քարավեժին ու Կոստանդին Բ. Կատուկեցուն և հուսկ ուրեմն եգիպտացիների կողմից գերեվարված Ստեփանոս Դ. Հռոմկլայեցուն։

Կենտրոնիս վերաբերող ավանդություններից մեկն էլ այն է, թե՝ անտիկն Հռոմկլան նենգությամբ գրավելու համար Բաղդադի արաբ խալիֆաներից մեկը բազմաթիվ սնդուկների մեջ իբր վաճառականական ապրանք արաբ զինվորներ տեղավորելով, ձևս ժամանակ ներկայանում է Հռոմկլայի հայոց կաթողիկոսին և խնդրում նրանից վարձքով պահել այդ սնդուկները մինչև մոտալուտ գարունը։ Կաթողիկոսը հոժարում է, բայց. խալիֆայի խարդախությունը երևան է գալիս նույն գիշերն իսկ, երբ հայ բերդապահները նշմարում են սնդուկներից դուրս եկող այլազգիներին, ուստի սնդուկները մի առ մի գցում են վանքի ստորոտից անցնող Եփրատ գետի մեջ՝ լերմեռանդորեն երգելով Շնորհալու «Շնորհեա՝ մեզ, Տէ՛ր» մեղեդին։

Կիլիկեհայ պատմության վերջնագույն էջերը պիտի կազմեն անշուշտ գրվագները այն մեծ ողբերգության, որ խաղացվեց հայ ժողովրդի գլխին, Համաշխարհային առաջին մեծ պատերազմի զինադադարից (11 Նոյեմբերի 1918 թ.) մինչև 4 հունվարի 1922 թ. պարփակվող ժամանակաշրջանում, գլխավոր դերակատարությամբ Ամերիկայի Միացյալ Նահանգների, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և այլ արևմտա-եվրոպական պետություններու։

Մեր նյութից դուրս է այդ ողբերգության սրատաժորմոց գրվագները տալ այստեղ, բայց անհրաժեշտ ենք նկատում նշել, թե «Անթեպի հերոսամարտը» իր արդյունքովը— այսինքն՝ անթեպարնակ հայերի ֆիզիկական կյանքը թշնամու յաթաղաններից ազատելու գեղեցիկ արդյունքովը— պատիվ է բերում հայկական մարտունակությանն։ 1919 թվականի հունվարի սկզբից մինչև 1922 թվականի հունվարի սկիզբը, այսինքն Անթեպի անգլիական գրավումից մինչև Ֆրանսիական գրավող բանակների Անթեպից և ամբողջ Կիլիկիայից հեռանալը, և մանավանդ ազգայնական թյուրքերի դեմ մղած գոյամարտի 70 օրերի ընթացքին, ինչպիսի՞ ծանր զրկանքների և զոհողությունների չենթարկվեցին Անթեպի հայերը։ Եվ նրանք հաղթեցին անգլիական, ֆրանսիական և ազգայնական թյուրքերի բազմաթիվ խարդավանքը, ինչպես հաղթահարել էին «Ավետարանականություն» անվան տակ թաքնված ամերիկյան այլ տեսակի խարդավանքը, ամերիկյան կրթարանների համադրելով քանից ոչ պակաս հայկական դրոշներ, որոնց մասին վաստակավոր ուսուցիչ Գրիգոր Պողարյանի և ուրիշների գրչից եկած հետաքրքիր տեղեկություններ կան «Պատմություն Անթեպի հայոց» գրքում։

Անգլիական և ֆրանսիական գրավման տարիների (1919—1922 թ. թ.) ընթացքին Անթեպում տեղի ունեցած դեպքերի հետաքրքրական մանրամասնությունը գտնում ենք Բ. հատորում (էջ 7—273), Գեորգ Պապոյանի «Անթեպի հերոսամարտը» վերնագրյալ ժամանակագրության մեջ։ Ինչպես հայտնի է, անգլիական և ֆրանսիական կայսերապաշտ պետությունների զաղութարարական շահերի բախման կենտրոններից մեկը եղավ Կիլիկիան՝ 1919—1921 թվականներին։ Ֆրանսիացիք պարտավորվեցին ընդմիշտ հեռանալ Կիլիկիայից, որովհետև 1919 թվականի սեպտեմբերին, երբ դեռևս անգլիական ուժերը գտնվում էին Կիլիկյան հողերի վրա, Անգլիան Թյուրքիայի հետ կնքել էր զաղտնի համաձայնագիր, ըստ որում Անգլիան երաշխավորում էր Թյուրքիայի ամբողջական անկախությունը, համաձայնագիր, որը ճամբա հարթեց Լոնդոնի և Լոզանի ժողովներին, որտեղ թաղվեց տաճկահայ դատը, Անգլիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և արևմտա-եվրոպական այլ պետությունների մեղսակցությամբը։

***

Անթեպի հայոց պատմագիրքը զերծ չէ տպագրական թերություններից։ Օրինակ, Բ. հատորի առաջին էջը գրավող և իբր Անթեպի շրջանակը ներկայացնող փոքր քարտեզը չունի ո՛չ գեղագիտական արժեք, ո՛չ էլ նպատակասլացություն։ Եթե նա լիներ գունավոր և լավ տպագրված, և բացի դրանից կցվեր նաև մի ուրիշ քարտեզ, որտեղ արձանագրված լինեին այդ վայրերի պատմական անունները, ինչպես այդ կատարվում է Հայաստանում հրատարակված պատմական գրքերում, այդ վայրերի անծանոթ ընթերցողը դժվարություն չպիտի կրեր գրքում լույս տեսած պատմական հոդվածներում հիշատակված վայրերը հստակորոշելու գործում։

Մենք կանգ չենք առնում պատմագրքում սպրդած տառասխալների և տողերի խանգարումների հաճախակիության վրա, բայց ուզում ենք նշել, թե՝ երբ սխալները վերաբերում են մարդկանց անուններին, իհարկե նրանք կստանան որոշ կարևորություն։ Այսպիսի սխալներից տանք մի քանիսը— Ա. հատորի 301-րդ էջում հիշվում է «Աստ Սնբաստացի նշանավոր հայ բժիշկը», սակայն մի քիչ ստորև նույն բժիշկը կոչվում է «Աստ Սնբաստացի»։ Դարձյալ նույն հատորում, էջ 397, Անթեպցի Պետրոս վարդապետ

թյուրքը, որ 10 ամիս կաթողիկոս էլ եղել է Էջմիածնում, բաղմիցս հիշվում է Կարապետ անունով։ Նման սխալ տպագրությամբ Ցանկիբեռը՝ եղել է Ցանկլեռ, Փոկտոը՝ Փոկոս և այլն։ 1913 թվականին Վարդանյան կրթարանի շրջանավարտների շարքում հիշված Հմայակ Տոլպագյանի համար (Ա. հատորի 734-րդ էջում) գրվել է «հեղինակ տարեցույցների և ուսուցիչ», մինչդեռ տարեցույցների հեղինակն է ուսուցիչ Եղիա Տոլպագյանը, որ այժմ էլ ուսուցիչ է Հայաստանում, Նոր-Արաբկիրի միջնակարգ դպրոցում, իսկ Հմայակ Տոլպագյանը Հալեպում, Բաղդադի կայարանի կայարանապետն է, որ մեծ օգտակարություն ունեցավ 1946—1947 թվականներին հայրենադարձների դեպի Բելբութ փոխադրության գործում։

***

Անթեպի հայոց պատմագիրքն ունի նաև մի շատ զգալի թերություն, այն է բացակայությունը մի հատուկ բաժնի, որտեղ հարմար կլիներ ներկայացնել հայ ժողովրդի սրբություն սրբոցն եղող և Սովետական Միության 16 ռեսպուբլիկաների շարքում տարեցտարի հսկայաքայլ բարգավաճող Հայաստանի մայրական ծոցում մասնագիտություններ տիրացած անթեպցի մտավորական նոր սերնդի կյանքը։ Այդ նոր սերնդին են պատկանում Այուպհյան Ռուբենի 4 զավակները. ա) Խաչիկը, շրջանավարտ Երևանի Բժշկական ինստիտուտից, բժիշկ ներքին հիվանդությունների. բ) Լևոնը, Երևանի նույնը մահուդի գործարանում ինժեներ-ջիմիկոս. գ) Ժանեռը, շրջանավարտ Պետական համալսարանի Ֆիզիոգիական ֆակուլտետի եվրոպական գրականության և լեզուների բաժնից, այժմ դիրեկտորի տեղակալ. դ) Անժելը, շրջանավարտ Պետական համալսարանի Ֆիզիոգիական ֆակուլտետի Հոգեբանության-տրամաբանության բաժնից, այժմ ասպիրանտ՝ ընդհանուր լեզվաբանության գծով. Թյուրքյանց Հովսեփը (Մովսեսի), շրջանավարտ Երևանի մանկավարժական ինստիտուտի Հոգեբանության բաժնից, ասպիրանտ, այժմ դասախոս նույն ինստիտուտում։ Սրա տիկինն է Երևանի օպերայի հայտնի սոպրանո մենեջրուհի Արմինե Թյուրքյանցը. Գեորգ Ցիգրանի Խոլոփյանը, շրջանավարտ Պետական համալսարանի Հոգեբանության-տրամաբանության բաժնից, այժմ ասպիրանտ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում փիլիսոփայության գծով. Նազարեթ Անդրեասի Նալբանդյանը, գերազանցիկ ուսանող Պետական համալսարանի Ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետի. Հենդոյան Անդրեանիկը, Երևանի Կարլ Մարքսի անվան Պոլիտեխնիկական ինստիտուտի Հիդրոֆակուլտետում ուսման գերազանցիկ, վաղեմի ուսուցիչ Տիգրան Մեսրոպյանի որդին՝ Մեսրոպ Մեսրոպյանը և աղջիկը՝ Սիրվարդը, առաջինը գերազանցիկ ուսանող Հայաստանի Կոնսերվատորիայի դիրիժորական բաժնում, երկրորդը ավարտած Թատերական ինստիտուտը. Հակոբ Գանդաճարյանը (Հարությունի), շրջանավարտ Երևանի Օտար լեզուների ինստիտուտից. Անժել Քյուրեղյանը, վարպետ դերձակ Արսեն Ալամանյանը, Ղլխանյան Մինոտեի աղջիկը. Դեմիրչյան Գրիգորի և Հակոբի աղջիկները և ուրիշ շատ շատերը։

Միշտ է, որ արտասահմանյան կրթական հաստատություններում դաստիարակված հայ երիտասարդներից ոմանք ստար ոգի վրա մեկ-մեկ փայլում են գրական, գիտական, գեղարվեստական և այլ ասպարեզներում, բայց նրանց հաջողությունը չունի և չի կարող ունենալ հայկական դրոշմ և հետևաբար հավերժություն։ Նրանց հաջողությունը վաղանցուկ է աստղի լույսի նման, մինչդեռ այստեղ, Հայաստանում հասակ առնող մտավորական երիտասարդության արձանագրած հաջողությունները անջնջելիորեն հավերժական պիտի մնան, որովհետև նրանց կապ ունեն հայրենակերտության սրբազան գործի հետ, ընդգրկում են համամարդկային լայնարձակ հորիզոններ, անվում՝ ազգային-հայրենական աղբյուրների անապակ ջրով և տաքանում Հայրենիքի սրբազան հուրով, հայրենի պետության հավանու ներքո։

Թե արտասահմանում, մասնավորապես Ամերիկայում ապրող հայ նոր սերունդը ուժանում է և այլասերվում, դրա ապացույցներից մեկը տեսնում ենք Անթեպի հայոց պատմագրքի Բ. Հատորի վերջին մասում կենսագրական ունեցող Ամերիկաբնակ անթեպցի երիտասարդների և երիտասարդուհիների անուններից քննելիս. Բապրթ, Էտվրդ, Էնն, Ջարլի, Գեյքրը, Ռեգ, Փիքրսը, Կրեյսրիտ, Հերբի Հեչ, Գեքի Մեյն, Տորիս, Ջարլզ, Ուիլլըմ, Կրեկերի և այլն։ Եվ ասել է, թե սրանք հայի անուններ են... Այդպիսիները ուշադրությամբ կարդալու են սովետահայ բանաստեղծ Հովհաննես Շիրազի հետևյալ տողերը.

«. . . . . .

Էլ ո՞ւր մեր լույս լեզուն մարել՝
Արևմուտքի դեմ խոնարհել.
Ու թող այնտեղ Ջեմման՝ Ջեմմա,
Աստղիկն այստեղ Աստղիկ մնա։
Քանզի ամեն ազգի անուն
Իր տարազն է, իր իսկ լեզուն։
Ինչո՞ւ հագնես ձեն ամենի
Երբ քոնն ունես, ո՞վ քաղաքեցի։
Երբ իր գույնից,
Իր անունից,
Իբ մայր լեզվից ձեռ հաշողը՝
Վերջն էլ կատ իր մայր եղը։
Աշխարհը դաշտ, ազգերն իր մեջ
Ծաղիկներ են պես-պես ու պերճ։
Ամեն ծաղիկ իր բույրն ունի,
Իր գույնն ունի,
Անունն ունի,
Տարազն ունի իր հայրենի։
Ինչքա՞ն ծաղիկ բույր ու շաղոտ՝
Աշխարհն այնքան անուշահոտ.

Դու քո Նուշանն ինչո՞ւ թաղես՝
Ոտար գաշտի Էլիկան քաղես.
Ո՞վ է բռնել մեր կոկորդից,
Որ ձեռ քաշենք Հայկ ու Վարդից,
Սաղիկներից Ալագյազի,
Նուշաններից մեր Մասխի
Ու թող ծաղկի թե՛ Էլիկը,
Թե՛ մեր Նուշան—Նուշանիկը.
Քանզի ամեն ազգի անուն
Իր տարազն է, իր իսկ լեզուն,
Իր սրբությունն հավերժական.
Եվ օրենքն է ողջ մարդկության՝
Իր ազգինը ով չսիրի,
Թշնամին է ողջ ազգերի։

(«Մեր մարդկանց անուններ» պոեմից)

***

Ցնայելով վերև նշված թերություններին, պետք է ասել, որ շնորհակալ գործ են կատարել պրոֆ. Դ. Ա. Սարաֆյանն ու Ա. Ա. Միությունը, երկասիրելով և հրատարակելով իրենց ծննդավայր քաղաքի՝ հայ Անթեպի մասին պատմական, ազգագրական, ազատագրական, տնտեսական, մշակութային և վիճակագրական տեղեկություններով և վավերաթղթերով հարուստ այս մեծածավալ պատմագիրքը։ Հայ բանասերներն ու պատմագիրները, «Պատմություն Անթեպի հայոց» գրքում, վստահաբար պիտի գտնեն նկատառության արժանի այնպիսի նյութեր և առաղձներ, որոնք օգտակարություն կունենան հայ ժողովրդի ընդհանուր պատմությունը լրիվ գրի առնելու կարևոր գործում։

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ